

**ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,
ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ՍԻՆԳԱՊՈՒՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ
ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

ՆԱԽԱԲԱՆ

Եվրասիական տնտեսական միությունը (այսուհետ՝ «ԵԱՏՄ») և Հայաստանի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Ղրղզստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը (այսուհետ՝ «ԵԱՏՄ անդամ պետություններ»),

մի կողմից, և

Սինգապուրի Հանրապետությունը (այսուհետ՝ «Սինգապուր»),

մյուս կողմից,

ԸՆԴՈՒՆԵԼՈՎ Կողմերի միջև երկարաժամկետ և ամուր բարեկամության և համագործակցության ամրապնդման և խորացման կարևորությունը,

ՑԱՆԿԱՆԱԼՈՎ ստեղծել բարենպաստ միջավայր և պայմաններ Կողմերի միջև փոխշահավետ առևտրային հարաբերությունների զարգացման և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բնագավառներում տնտեսական համագործակցության զարգացման համար,

ՑԱՆԿԱՆԱԼՈՎ վերացնել կամ նվազեցնել Կողմերի միջև առևտրային արգելքները, որպեսզի ապահովել բիզնեսի ծախքերի նվազեցումն ու տնտեսական արդյունավետության բարձրացումը,

ԸՆԴՈՒՆԵԼՈՎ կայուն, թափանցիկ և ոչխտրականորեն իրականացվող ազատ և անարգել առևտրին նպաստող սկզբունքներին և փորձին հետևելու անհրաժեշտությունը,

ԸՆԴՈՒՆԵԼՈՎ ծախքերի նվազեցման և շուկայի կանխատեսելիության ապահովման նպատակով արդյունավետ և թափանցիկ ընթացակարգերի խրախուսման մեջ առևտրի դյուրացման կարևորությունը,

ԸՆԴԳԾԵԼՈՎ Կողմերի միջև փոխադարձ համագործակցության հետագա զարգացման անհրաժեշտությունը փոխադարձ վստահության, թափանցիկության և առևտրի ընթացակարգերի արդարացի և փոխշահավետ կերպով պարզեցման սկզբունքների

հիման վրա,

ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԵՑԻՆ հետևյալի մասին.

ԳԼՈՒԽ 1

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Հոդված 1.1

Ազատ առևտրի գոտու ստեղծում

Կողմերը սույնով ստեղծում են ազատ առևտրի գոտի՝ ՄԱԳՀ 1994-ի XXIV հոդվածին համապատասխան:

Հոդված 1.2

Նպատակները

Սույն Համաձայնագրի նպատակը Կողմերի միջև առևտրի ազատականացումն ու դյուրացումն է սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան:

Հոդված 1.3

Ընդհանուր կիրառության սահմանումներ

Սույն Համաձայնագրի նպատակների համար, եթե այլ բան նախատեսված չէ.

«**Հակազնազցման համաձայնագիր**» նշանակում է ԱՀԿ Համաձայնագրի 1A Հավելվածում պարունակվող Մաքսերի և առևտրի 1994 թվականի գլխավոր համաձայնագրի հոդված VI-ի իրականացման մասին համաձայնագիր,

«մաքսատուրք» նշանակում է ցանկացած տեսակի տուրք կամ ¹ վճար, որը կիրառվում է ապրանքների ներմուծման համար կամ դրա առնչությամբ, չներառելով հետևյալը՝

ա) ներքին հարկին համարժեք վճար, որը գանձվում է ՍԱԳՀ-1994-ի III հոդվածի 2-րդ կետին համապատասխան.

բ) հավաքագրում կամ ներմուծման հետ կապված այլ վճար, որը համաչափ է տրամադրված ծառայությունների արժեքին կամ

գ) տուրք, որը գանձվում է 3-րդ գլխին («Առևտրային պաշտպանության միջոցներ») համապատասխան.

«օր» նշանակում է օրացուցային օր, ներառյալ՝ հանգստյան և տոնական օրերը,

«Եվրասիական տնտեսական հանձնաժողով» նշանակում է ԵԱՏՄ մշտական գործող կարգավորող մարմին՝ Եվրասիական տնտեսական միություն մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին (այսուհետ՝ «ԵԱՏՄ մասին պայմանագիր») համապատասխան,

«ՄԱԳՀ-1994» նշանակում է ԱՀԿ Համաձայնագրի 1A Հավելվածում պարունակվող Մաքսերի և առևտրի 1994 թվականի գլխավոր համաձայնագիր,

«ապրանք(ներ)» նշանակում է ցանկացած ապրանք, արտադրանք, արտադրատեսակ կամ նյութ.

«Ներդաշնակեցված համակարգ» կամ «ՆՀ» նշանակում է Ապրանքների նկարագրման և ծածկագրման ներդաշնակեցված համակարգ, ներառյալ Կիրառման ընդհանուր կանոնները, Բաժինների, Գլուխների և դիրքերի ծանոթագրությունները և դրանցում կատարվող փոփոխությունները, այնպես ինչպես դրանք ընդունվում և կիրառվում են Կողմերի կողմից իրենց համապատասխան օրենսդրության մեջ,

«Ներմուծման լիցենզավորման մասին համաձայնագիր» նշանակում է ԱՀԿ Համաձայնագրի 1A Հավելվածում պարունակվող Ներմուծման լիցենզավորման

1 «.....»
..... (..... «..... [] [],
.....)..... «.....»
(«..... «..... [] [],»,),
«..... [] []»

ընթացակարգերի մասին համաձայնագիր,

«**Միջոց**» նշանակում է օրենքի, նորմատիվ ակտի, կանոնի, ընթացակարգի, որոշման, վարչական միջոցի կամ ցանկացած այլ ձևով Կողմի կողմից ձեռնարկվող միջոց, և ներառում է միջոցներ, որոնք ընդունվում են.

ա) կենտրոնական, տարածաշրջանային կամ տեղական իշխանության և մարմինների կողմից, և

բ) կենտրոնական, տարածաշրջանային կամ տեղական իշխանության կամ մարմինների կողմից պատվիրակված լիազորությունների կատարման համար՝ ոչ կառավարական մարմինների կողմից,

«**Ծագող**» նշանակում է 4-րդ գլխում (Ծագման որոշման կանոնները) սահմանված՝ ծագման կանոններին համապատասխանող,

«**Կողմեր**» նշանակում է Եվրասիական տնտեսական միություն՝ ԵԱՏՄ մասին պայմանագրով սահմանված իր իրավասությունների շրջանակներում կամ նրա անդամ պետություններ մի կողմից, և, Սինգապուր՝ մյուս կողմից,

«Անձ» նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ,

«**Պաշտպանական միջոցների մասին համաձայնագիր**» նշանակում է ԱՀԿ Համաձայնագրի 1A Հավելվածում պարունակվող Հատուկ պաշտպանական միջոցների մասին համաձայնագիր,

«**ԼՓՄ համաձայնագիր**» նշանակում է ԱՀԿ Համաձայնագրի 1A Հավելվածում պարունակվող Լրավճարների և փոխհատուցման միջոցների մասին համաձայնագիր,

«**ՍԲՄ համաձայնագիր**» նշանակում է ԱՀԿ Համաձայնագրի 1A Հավելվածում պարունակվող Սանիտարական և բուսասանիտարական միջոցների կիրառման մասին համաձայնագիր,

«ԱՏԽ համաձայնագիր» նշանակում է ԱՀԿ Համաձայնագրի 1A Հավելվածում պարունակվող Առևտրում տեխնիկական խոչընդոտների մասին համաձայնագիր,

«ԹՐԻՓՍ համաձայնագիր» նշանակում է ԱՀԿ Համաձայնագրի 1C Հավելվածում պարունակվող Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին համաձայնագիր,

«ԱՀԿ համաձայնագիր» նշանակում է Առևտրի համաշխարհային կազմակերպության ստեղծման մասին 1994 թվականի ապրիլի 15-ի՝ Մարաքեշի համաձայնագիր, և

«ԱՀԿ» նշանակում է Առևտրի համաշխարհային կազմակերպություն

ԳԼՈՒԽ 2
Մուտքը շուկա
Հոդված 2.1
Սահմանումներ

Սույն գլխի նպատակների համար.

հյուպատոսական գործառնություններ նշանակում է պահանջ, որի համաձայն մյուս Կողմ արտահանման համար նախատեսված ապրանքներն առաջին հերթին պետք է արտահանող Կողմի տարածքում ներկայացվեն ներմուծող Կողմի հյուպատոսին՝ հյուպատոսական հաշիվների կամ առևտրային հաշիվների համար հյուպատոսական վիզաների, ծագման հավաստագրերի, նավի բեռների հայտարարագրի, բեռնառաքիչների արտահանման հայտարարագրերի կամ ներմուծման համար պահանջվող կամ դրան առնչվող ցանկացած այլ մաքսային փաստաթղթերի ստացման համար. և

ներմուծման լիզենզավորում, նշանակում է ներմուծման թույլատրման համար կիրառվող վարչական ընթացակարգեր, որոնք ենթադրում են համապատասխան վարչական մարմնին դիմումի կամ այլ փաստաթղթերի (մաքսային նպատակների համար պահանջվող փաստաթղթերից տարբերվող) ներկայացում՝ որպես ներմուծող Կողմի տարածք ներմուծման համար նախապայման.

Հոդված 2.2

Կիրառման շրջանակը

Սույն Գլուխը կիրառվում է Կողմերի միջև ապրանքների առևտրի նկատմամբ:

Հոդված 2.3

Առավել բարենպաստության ռեժիմ

1. ՍԱԳՀ-1994-ի I հոդվածը, ինչպես նաև ԱՀԿ մասին Համաձայնագրին համապատասխան կիրառվող ՍԱԳՀ-1994-ի I հոդվածում շարադրված ռեժիմի տրամադրման պարտավորությունից ցանկացած բացառություն, ազատում և հրաժարում ներառված են և կազմում են սույն Համաձայնագրի մաս:

2. Առավել պարզության համար, սույն հոդվածի 1-ին կետում ոչինչ Կողմին չի պարտավորեցնում առավել բարենպաստության ռեժիմի հիման վրա տրամադրել մյուս

Կողմին առավելություն, բարենպաստություն, արտոնություն կամ անձեռնմխելիություն, որը այդ Կողմը տրամադրում է ցանկացած երրորդ կողմի՝ հետևյալ չափորոշիչներից ցանկացածի պահպանման դեպքում՝

ա) սահմանակից երկրներին՝ սահմանային առևտրի պարզեցման նպատակով.

բ) մաքսային միության, ազատ առևտրի գոտու կամ տարածաշրջանային տնտեսական կազմակերպության մասնակիցներին, կամ ցանկացած այլ տարածաշրջանային առևտրային համաձայնագրերի մասնակիցներին՝ ՍԱԳՀ-1994-ի XXIV հոդվածի դրույթներին համապատասխան. կամ

գ) զարգացող և առավել թույլ զարգացած երկրներին՝ ՍԱԳՀ-1994-ին, Միավորված ազգերի կազմակերպության առևտրի և զարգացման համաժողովի շրջանակներում սակագնային առանձնաշնորհումների ընդհանուր համակարգին համապատասխան, կամ տվյալ հարցերով Կողմերի օրենքներին և նորմատիվ ակտերին համապատասխան:

Հոդված 2.4

Ազգային ռեժիմ

Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի ապրանքներին տրամադրում է ազգային ռեժիմ ՍԱԳՀ-1994-ի III հոդվածին համապատասխան, և այդ կապակցությամբ ՍԱԳՀ-1994-ի III հոդվածը, ինչպես նաև ՍԱԳՀ-1994-ի III հոդվածին համապատասխան ռեժիմի տրամադրման պարտավորությունից ցանկացած բացառություն, ազատում և հրաժարում ներառված են և կազմում են սույն Համաձայնագրի մասը:

Հոդված 2.5

Ապրանքների դասակարգում

1. Կողմերի միջև առևտրում ապրանքների դասակարգումը կարգավորվում է ՆՀ համապատասխան՝ յուրաքանչյուր Կողմի սակագնային անվանացանկին համապատասխանաբար:
2. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ իր սակագնային անվանացանկում կատարվող ցանկացած փոփոխություն իրականացվի առանց 2-1 հավելվածին (Սակագնային պարտավորությունների ցանկ) համապատասխան սահմանված սակագնային պարտավորություններին վնաս պատճառելու: Այդպիսի փոփոխությունները ԵԱՏՄ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքների անվանացանկում և Սինգապուրի Առևտրային պարզաբանումներում, մաքսատուրքերում և ակցիզային

տուրքերում պետք է իրականացվեն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և Սինգապուրի կողմից համապատասխանաբար:

Հոդված 2.6

Մաքսատուրքերի նվազեցումը և վերացումը

1. Եթե սույն Համաձայնագրով այլ բան նախատեսված չէ, յուրաքանչյուր Կողմ նվազեցնում կամ վերացնում է մյուս Կողմի տարածքից ծագող ապրանքների համար մաքսատուրքերը սույն Համաձայնագրի 2-1 հավելվածում (Սակագնային պարտավորությունների ցանկ) նշված իր սակագնային պարտավորությունների ցանկին համապատասխան:
2. Եթե սույն Համաձայնագրով այլ բան նախատեսված չէ, Կողմը չի ավելացնում գոյություն ունեցող մաքսատուրքերից ոչ մեկը կամ չի սահմանում նոր մաքսատուրքեր, որոնց արդյունքում մյուս Կողմի տարածքից ծագող ապրանքների համար մաքսատուրքերի չափը կգերազանցի 2-1 հավելվածում (Սակագնային պարտավորությունների ցանկ) նշված սակագնային պարտավորությունների մակարդակը:
3. Կողմը կարող է ցանկացած պահին միակողմանիորեն արագացնել 2-1 հավելվածում (Սակագնային պարտավորությունների ցանկ) նշված իր սակագնային պարտավորությունների ցանկին համապատասխան սահմանված՝ մյուս Կողմի տարածքից ծագող ապրանքների համար մաքսատուրքերի նվազեցումը կամ վերացումը: Տվյալ դրույթը խոչընդոտ չի հանդիսանում Կողմերից ոչ մեկի համար մաքսատուրքը մինչև միակողմանի նվազեցմանը հաջորդող համապատասխան տարվա համար սույն 2-1 հավելվածում (Սակագնային պարտավորությունների ցանկ) նշված սակագնային պարտավորությունների ցանկում սահմանված մակարդակը բարձրացնելու համար: Մաքսատուրքի նման նվազեցման, վերացման կամ բարձրացման հնարավորությունը դիտարկող Կողմը պետք է հնարավորինս կարճ ժամկետում գրավոր տեղեկացնի մյուս Կողմին՝ մինչև մաքսատուրքի նոր դրույքաչափի ուժի մեջ մտնելը: Այդպիսի տեղեկատվության փոխանակումն իրականացվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և Սինգապուրի միջև:
4. Եթե սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո ցանկացած ժամանակ Կողմը նվազեցնում է առավել բարենպաստ ազգային ռեժիմի շրջանակներում կիրառվող մաքսատուրքի դրույքաչափը, ապա այդպիսի դրույքաչափը շարունակվում է կիրառվել և այնքան ժամանակ, քանի դեռ այն ցածր է 2-1 հավելվածում (Սակագնային պարտավորությունների ցանկ) նշված իր սակագնային պարտավորությունների ցանկին համապատասխան սահմանված ներմուծման դրույքաչափից:

Հոդված 2.7

Վերանորոգումից կամ մոդիֆիկացումից հետո իր տարածք վերադարձվող քաղաքացիական ինքնաթիռները

1. Կողմերից ոչ մեկը մաքսատուրքեր չի գանձում ՆՀ 8802 20, 8802 30 և 8802 40 դիրքերում դասակարգվող քաղաքացիական ինքնաթիռների համար, անկախ դրանց ծագումից, որոնք իր օրենսդրությանը համապատասխան նրա տարածք են ներմուծվում մյուս Կողմի տարածքից ժամանակավորապես՝ վերանորոգման կամ մոդիֆիկացման նպատակով:
2. Կողմերից ոչ մեկը մաքսատուրքեր չի գանձում ՆՀ 8802 20, 8802 30 և 8802 40 դիրքերում դասակարգվող քաղաքացիական ինքնաթիռների վերանորոգման կամ մոդիֆիկացման գործառնությունների արժեքից (որը նաև կարող է ներառել նաև այդպիսի վերանորոգման կամ մոդիֆիկացման ընթացքում օգտագործված ապրանքների արժեքը), որոնք իր օրենսդրությանը համապատասխան հետ են ներմուծվում իր տարածքային բանից հետո, երբ ժամանակավորապես արտահանվել էին իր տարածքից մյուս Կողմի տարածք վերանորոգման կամ մոդիֆիկացման համար: Սույն կետի դրույթները կիրառվում են անկախ նշված քաղաքացիական ինքնաթիռների ծագումից և անկախ նրանից, թե արդյոք այդպիսի վերանորոգման կամ մոդիֆիկացման գործառնությունները կարող էին իրականացվել այն Կողմի տարածքում, որտեղից այդպիսի քաղաքացիական ինքնաթիռները արտահանվել էին վերանորոգման կամ մոդիֆիկացման նպատակներով:
3. 2-րդ կետի դրույթների կիրառման պայմաններն են՝
 - (ա) ապրանքների վերադարձը այն Կողմի տարածք, որտեղից դրանք նախկինում արտահանվել էին մյուս Կողմի տարածք վերանորոգման կամ մոդիֆիկացման նպատակով, ոչ ուշ քան արտահանման պահից վեց (6) ամսվա ընթացքում.
 - (բ) մաքսային իշխանությունները պետք է ունակ լինեն Կողմի տարածք վերադարձվող ապրանքները նույնացնել այն եղանակով, որն օգտագործվել է դրանց արտահանման ժամանակ:
4. Սույն հոդվածի նպատակներով, վերանորոգման կամ մոդիֆիկացման գործառնությունները չեն ներառում այն գործառնությունները և գործընթացները, որոնց արդյունքում՝
 - ա) փոխվում են ապրանքի հիմնական որակական բնութագրերը կամ ստեղծվում է նոր կամ առևտրային առումով տարբեր ապրանք. կամ
 - բ) տեղի է ունենում չավարտված արտադրանքի վերափոխում պատրաստի արտադրանքի:

Հոդված 2.8

Վերանորոգումից կամ մոդիֆիկացումից հետո վերադարձվող քաղաքացիական ինքնաթիռների համար շարժիչներ, պահեստամասեր և սարքավորումներ

1. Վերանորոգման կամ մոդիֆիկացման համար մյուս Կողմի տարածք ժամանակավորապես արտահանվելուց հետո Կողմի ազգային օրենսդրությանը համապատասխան իր տարածք վերադարձված քաղաքացիական ինքնաթիռների համար նախատեսված շարժիչների, պահեստամասերի և սարքավորումների նկատմամբ կիրառվող ցանկացած մաքսատուրքի, առնչությամբ նման մաքսատուրք կիրառած Կողմը մյուս Կողմի տարածքից վերադարձված ապրանքների համար տրամադրում է ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն, որը տրամադրում է երրորդ Կողմի տարածքից վերադարձված ապրանքների համար:
2. Կողմերը 1-ին կետում նշված կիրառելի օրենսդրության մասին միմյանց տեղեկացնում են սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 60) օրվա ընթացքում: Կողմերը անհապաղ տեղեկացնում են միմյանց նման կիրառելի օրենսդրության ցանկացած փոփոխության մասին:

Հոդված 2.9

Ներմուծմանը և արտահանմանն առնչվող վճարներ և ձևականություններ

1. ՍԱԳՀ-1994-ի VIII հոդվածը և տվյալ հոդվածի պարզաբանող ծանոթագրությունները, ինչպես նաև ԱՀԿ մասին համաձայնագրին համապատասխան կիրառվող ՍԱԳՀ-1994-ի VIII հոդվածում նշված պարտավորությունից ցանկացած բացառություն, ազատում և հրաժարում, ներառված են սույն Համաձայնագրում և կազմում են դրա անբաժանելի մասը:
2. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որպեսզի իր իրավասու մարմինները հասանելի դարձնեն իր կողմից սահմանված ներմուծմանը և արտահանմանն առնչվող վճարների և հավաքագրումների մասին տեղեկատվությունը պաշտոնական կայքերում:
3. Կողմերը չեն պահանջում հյուպատոսական գործառնություններ, այդ թվում՝ դրանց հետ կապված հավաքագրումներ և վճարումներ՝ մյուս Կողմի ցանկացած ապրանքների ներմուծման հետ կապված:
4. Կողմերից ոչ մեկը չի կարող գանձել ներմուծման կամ արտահանման կամ դրանց առնչվող այլ վճարներ և հավաքագրումներ՝ ամրագրված ինքնարժեքային

հարկատվության հիմքերով, որոնք կգերազանցեն մատուցված ծառայությունների մոտավոր արժեքը և որևէ կերպ չեն համապատասխանի ՍԱԳՀ-1994-ի VIII հոդվածին:

5. Յուրաքանչյուր Կողմ պարբերաբար վերանայում է իր կողմից կիրառվող հավաքագրումները և վճարները դրանց քանակը և բազմազանությունը կրճատելու նպատակով, որտեղ որ դա գործնականապես հնարավոր է:

Հոդված 2.10

Ներմուծման և արտահանման սահմանափակումներ

1. Եթե սույն Համաձայնագրով այլ բան չի նախատեսվել, Կողմերից ոչ մեկը չի կարող սահմանել կամ պահպանել քանակական սահմանափակումներ, ներառյալ՝ մյուս Կողմի ապրանքների ներմուծման կամ մյուս Կողմի տարածքի համար նախատեսված ապրանքների նկատմամբ արգելքները կամ սահմանափակումները, բացառությամբ՝ ԱՀԿ շրջանակներում նրա պարտավորություններով և հանձնառություններով որոշված դեպքերի, և այդ նպատակով ՍԱԳՀ-1994-ի XI հոդվածը ներառվել են սույն Համաձայնագրում և կազմում են դրա անբաժանելի մասը:
2. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է 1-ին կետին համապատասխան թույլատրված քանակական սահմանափակումների թափանցիկությունը և ապահովում է, որ ոչ մի նման միջոցառում չմշակվի, չսահմանվի կամ չկիրառվի այնպիսի նպատակով կամ այնպիսի հետևանքներով, որոնք Կողմերի միջև առևտրում կստեղծեն ավելորդ խոչընդոտներ:

Հոդված 2.11

Ներմուծման լիցենզավորում

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որպեսզի իր ներմուծման լիցենզավորման ընթացակարգերը, որոնք սահմանվել են Ներմուծման լիցենզավորման ընթացակարգերի մասին համաձայնագրի 1-3 հոդվածներում, իրականացվեն թափանցիկ և կանխատեսելի կերպով ու կիրառվեն Ներմուծման լիցենզավորման ընթացակարգերի մասին համաձայնագրին համապատասխան:
2. Յուրաքանչյուր Կողմ հրապարակում է լիցենզավորման ընթացակարգերի վերաբերյալ իր կանոնները և տեղեկատվությունը Ներմուծման լիցենզավորման ընթացակարգերի մասին համաձայնագրի 1-ին հոդվածի 4-րդ կետին համապատասխան: Կողմը, որը ներդնում է ներմուծման լիցենզավորման ընթացակարգեր կամ փոխում է այդպիսի ընթացակարգերը, պետք է տեղեկացնի լիցենզավորման ընթացակարգեր ներդնելու կամ այդ ընթացակարգերը փոխելու մասին մյուս Կողմին ոչ ուշ քան հրապարակման

պահից վաթսուն (60) օրվա ընթացքում: Այդպիսի ծանուցումները պետք է պարունակեն տեղեկատվություն, որը սահմանված է Ներմուծման արտոնավորման ընթացակարգերի մասին համաձայնագրի 5-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերերում: Այդպիսի տեղեկատվությունը պետք է փոխանցվի այդ նպատակների համար նշանակված յուրաքանչյուր Կողմի կոնտակտային կետի միջոցով:

3. Ներմուծման արտոնավորման ընթացակարգերի փոփոխության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն պետք է լինի հանրությանը հասանելի մինչև նոր ընթացակարգերի կամ փոփոխությունների ուժի մեջ մտնելու օրը:
4. Յուրաքանչյուր Կողմ վաթսուն (60) օրը չգերազանցող ժամկետում տրամադրում է մյուս Կողմի հիմնավորված հարցման պատասխանը՝ կապված իր ներմուծման լիցենզավորման կանոնների և ներմուծման լիցենզիայի համար հայտի ներկայացման ընթացակարգերի հետ, այդ թվում անձանց, ընկերությունների և հաստատությունների՝ այդպիսի հայտ ներկայացնելու իրավունքի, վարչական մարմինների, որին հարկավոր է դիմել, և արանքների ցուցակի հետ, որոնց վրա տարածվում է արտոնավորման պահանջը:
5. Ներմուծման լիցենզավորման գոյություն ունեցող ընթացակարգի վերաբերյալ 2-րդ կետի պայմանները համարվում են կատարված, եթե Կողմը՝
 - ա) Ներմուծման լիցենզավորման մասին համաձայնագրի 4-րդ հոդվածի համաձայն ձևավորված Ներմուծման լիցենզավորման կոմիտեին ծանուցել է այդ ընթացակարգի մասին՝ այդ համաձայնագրի 5-րդ հոդվածի 2-րդ կետում նշված տեղեկատվության հետ միասին, կամ
 - բ) Ներմուծման լիցենզավորման կոմիտեին է ներկայացրել այդ ընթացակարգի վերաբերյալ Ներմուծման արտոնավորման մասին համաձայնագրի 7-րդ հոդվածի 3-րդ կետում նկարագրված ամենամյա հարցարանով պահանջվող տեղեկատվությունը՝ մինչև սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելը այդ Կողմի համար ներմուծման արտոնավորման ընթացակարգերի մասին վերջին ամենամյա հարցարանի պատասխաններում:

Հոդված 2.12

Ապրանքների առևտրի ենթակոմիտե

1. Կողմերը սույնով ստեղծում են Ապրանքների առևտրի ենթակոմիտե (այսուհետ՝ Ապրանքների գծով ենթակոմիտե), որը կազմված է յուրաքանչյուր Կողմի ներկայացուցիչներից:

2. Ապրանքների գծով ենթակումիտեն հավաքվում է ցանկացած ժամանակ՝ Կողմերի համատեղ որոշմամբ, սույն գլխի շրջանակներում առաջացող ցանկացած հարցի քննարկման համար: Հանդիպումներն անցկացվում են Կողմերի կոմիտեի համատեղ որոշված վայրում և եղանակով:
3. Ապրանքների գծով ենթակումիտեի գործառույթներն են՝
 - ա) սույն գլխի կիրառման և կատարման քննարկումը և մշտադիտարկումը.
 - բ) ցանկացած Կողմի հարցմամբ սույն Գլխի դրույթների ցանկացած փոփոխության կամ 2.6 (Մաքսատուրքերի նվազեցումը և վերացումը) 1-ին կետում նշված սակագնային պարտավորությունների բարելավումների քննարկումը և Համատեղ կումիտեին համապատասխան հանձնարարականների ներկայացում.
 - գ) ըստ անհրաժեշտության և մյուս Կողմի հարցմամբ ՆՀ -ի փոփոխության արդյունքում սակագնային անվանացանկի փոփոխությունների քննարկումը՝ սույն Համաձայնագրով յուրաքանչյուր Կողմի պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով.
 - դ) սույն գլխի դրույթների իրականացման և կիրառման հետ կապված ցանկացած խնդիրների լուծման նպատակով միջոցառումների մշակումը և ներկայացումը. և
 - ե) սույն գլխի իրականացման և կիրառման հետ կապված ցանկացած այլ հարցերի արդյունքների մասին Համատեղ հանձնաժողովին զեկուցումը:
4. Ապրանքների գծով ենթակումիտեն, անհրաժեշտության դեպքում, խորհրդակցում է սույն Համաձայնագրին համապատասխան ստեղծված մյուս ենթակումիտեների հետ այդ ենթակումիտեներին վերաբերող հարցերի քննարկման ժամանակ:

Հոդված 2.13

***Ad hoc* խորհրդատվություններ**

1. Յուրաքանչյուր Կողմ նշանակում է կոնտակտային կետ սույն Գլխի շրջանակներում ցանկացած հարցով Կողմերի միջև կապը պարզեցնելու նպատակով: :
2. Կողմը կարող է նախաձեռնել սույն Գլխի շրջանակներում առաջացող ցանկացած հարցի շուրջ *ad hoc* խորհրդատվությունների անցկացում՝ հարցում ուղարկելով մյուս Կողմին 1-ին կետում նշված կոնտակտային կետերի միջոցով: Հարցման մեջ նշվում են հարցման պատճառները, այդ թվում՝ Կողմի մտահոգության առարկան և սույն Գլխի համապատասխան դրույթները, որոնց վերաբերում է մտահոգությունը:
3. Կողմը՝ 2-րդ կետում նշված հարցումը ստանալու պահից քառասունհինգ (45) օրվա ընթացքում պետք է ներկայացնի իր պատասխանը: Կողմերը առերես կամ էլեկտրոնային միջոցների օգնությամբ քննարկում են հարցման մեջ նշված հարցը՝

պատասխանը ստանալու պահից երեսուն (30) օրվա ընթացքում: Եթե Կողմերը որոշում են հանդիպել առերես, հանդիպումն անցկացվում է Կողմերի կողմից համատեղ որոշված վայրում և եղանակով:

4. Սույն հոդվածին համապատասխան անցկացվող *ad hoc* խորհրդատվությունները գաղտնի են և չպետք է վնաս հասցնեն ցանկացած կողմի իրավունքին, 14-րդ գլխի (Վեճի կարգավորում) համաձայն իրականացվող վեճի կարգավորման գործընթացին կամ արդյունքներին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2-1

ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԵՐ

Առդիրներ 2-1-1-ը (ԵԱՏՄ սակագնային պարտավորությունների ցանկ) և 2-1-2-ը (Սինգապուրի սակագնային պարտավորությունների ցանկ) կազմում են սույն Հավելվածի անբաժանելի մասը և ներկայացված են առանձին փաստաթղթերով:

ԳԼՈՒԽ 3
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ
Բաժին Ա
Ընդհանուր դրույթներ

Հոդված 3.1
Ընդհանուր դրույթներ

1. Եթե սույն գլխի դրույթներով այլ բան նախատեսված չէ, Կողմերը, ՍԱԳՀ-1994-ի VI և XIX հոդվածներին, Հակազնագցման մասին համաձայնագրին, ՍՓՄ

համաձայնագրին և Հատուկ պաշտպանական միջոցների մասին համաձայնագրին համապատասխան կիրառում են հակազնազցման, փոխհատուցման և հատուկ պաշտպանական միջոցներ:

2. Հակազնազցման ու հատուկ պաշտպանական ուսումնասիրությունների և հետագա ցանկացած ընթացակարգերի, ներառյալ՝ կրկնակի ուսումնասիրությունների անցկացման նպատակների համար, Սինգապուրը դիտարկում է ԵԱՏՄ անդամ պետություններն առանձին, այլ ոչ թե որպես ԵԱՏՄ՝ ընդհանուր առմամբ, և չի կիրառում հակազնազցման և հատուկ պաշտպանական միջոցներ ընդհանուր առմամբ ԵԱՏՄ-ից ծագող ներմուծման նկատմամբ: Փոխհատուցման հետազոտությունների և հետագա ցանկացած փոխհատուցման ընթացակարգերի, ներառյալ՝ կրկնակի ուսումնասիրությունների անցկացման նպատակների համար Սինգապուրը դիտարկում է ԵԱՏՄ անդամ պետություններն առանձին, այլ ոչ թե ամբողջովին, և չի կիրառում փոխհատուցման միջոցներ ընդհանուր առմամբ ԵԱՏՄ-ից ծագած ներմուծման հանդեպ, բացառությամբ սուբսիդիաների՝ ՍԱԳՀ-1994-ի XVI հոդվածի և ՍՓՄ համաձայնագրի 1-ին հոդվածի ընկալմամբ, որոնք տրամադրվել են ԵԱՏՄ մակարդակով ԵԱՏՄ բոլոր անդամ պետությունների արտադրողների համար և հատուկ են ՍՓՄ համաձայնագրի 2-րդ հոդվածի ընկալմամբ:
3. Ա և Բ բաժինների նպատակների համար ծագումը սահմանվում է Կողմերի ապրանքների ծագման որոշման ոչ առանձնաշնորհային կանոններին համապատասխան:

Հոդված 3.2

Հաղորդակցություն

1. Կողմերի միջև սույն գլխի շրջանակներում պաշտոնական հաղորդակցությունը և փաստաթղթերի փոխանակումն իրականացվում է Կողմերի՝ ուսումնասիրություն անցկացնող մարմինների կամ այլ իրավասու մարմինների միջև:
2. Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրից 30 օրվա ընթացքում Կողմերը տեղեկատվություն են փոխանակում ուսումնասիրություն անցկացնող կամ այլ իրավասու մարմինների անվանումների և կոնտակտային տվյալների մասին: Կողմերն անհապաղ ծանուցում են միմյանց ուսումնասիրություն անցկացնող կամ այլ իրավասու մարմինների փոփոխության մասին:

3. Ընդհանուր պաշտպանական ուսումնասիրություն անցկացնող Կողմը, Հատուկ պաշտպանական միջոցների մասին համաձայնագրի 12-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, մյուս Կողմին տրամադրում է Հատուկ պաշտպանական միջոցների հարցերով ԱՀԿ կոմիտեին ուղարկվող ծանուցագրերի էլեկտրոնային պատճենը:

Բաժին Բ

Հակազնազցման և փոխհատուցման միջոցներ

Հոդված 3.3

Հակազնազցման միջոցներ

1. Հակազնազցման ուսումնասիրությունների և հետագա ցանկացած հակազնազցման ընթացակարգերի անցկացման նպատակների համար, ներառյալ՝ կրկնակի ուսումնասիրությունների, Կողմերից ոչ մեկը չի կիրառում արտահանող Կողմի ներքին շուկայում սպառման համար նախատեսված համանման ապրանքների նորմալ արժեքի որոշման մեթոդիկաներ, որոնք մասամբ կամ ամբողջությամբ հիմնված են արհեստականորեն նմանակված երկրի տվյալների վրա՝ ՍԱԳՀ-1994-ի I հավելվածում պարունակվող Հակազնազցման համաձայնագրի 2-րդ հոդվածի 7-րդ կետին կամ ՍԱԳՀ-1994-ի VI հոդվածի 1-ին կետի երկրորդ լրացուցիչ դրույթին համապատասխան:
2. Հակազնազցման ուսումնասիրությունների և հետագա ցանկացած հակազնազցման ընթացակարգերի անցկացման նպատակների համար, ներառյալ՝ կրկնակի ուսումնասիրությունները, Կողմերից որ մեկը չի օգտագործում մեթոդիկաներ, որոնք թույլ են տալիս հաշվի չառնել կամ ճշգրտել արտահանող Կողմի ներքին շուկայում սպառման համար նախատեսված համանման ապրանքի արտահանողների կամ արտադրողների ծախքերի վերաբերյալ տվյալները, այն դեպքերում, երբ ուսումնասիրությունն անցկացնող մարմինը գալիս է եզրակացության, որ համանման ապրանքների համար օգտագործվող արտադրության գործոնների շուկայի առանձնահատկություններից ելնելով՝
 - ա) համանման ապրանքի շուկայում առկա է առանձնահատուկ շուկայական իրավիճակ, կամ)
 - բ) ուսումնասիրության օբյեկտ հանդիսացող ապրանք արտահանողների կամ արտադրողների փաստաթղթերում գրանցված ծախքերի մասին տվյալները ողջամտության սահմաններում չեն արտացոլում ուսումնասիրության օբյեկտ հանդիսացող ապրանքի արտադրման և վաճառքի հետ կապված ծախքերը, պայմանով, որ այդ փաստաթղթերը ակնկալվող և բավարար չափով համապատասխանում են այն

ծախքերին կամ արտահայտում են այն ծախքերը, որոնք փաստացիորեն կրել են տվյալ արտահանողները կամ արտադրողները:

Հոդված 3.4

Հակազնագցման և փոխհատուցման ուսումնասիրությունների ընթացակարգերին վերաբերող գործելակերպը

1. Որևէ ընթացակարգի առնչությամբ, եթե ուսումնասիրությունն անցկացնող մարմինն ընդունում է հարցարանին պատասխանած ² անձի կողմից տրամադրված տեղեկատվությունը ստուգիչ այցի միջոցով անձամբ ստուգելու վերաբերյալ որոշում, և եթե կարիքը կա հաշվարկելու գնագցման չափը կամ տրամադրված դրամական նպաստի չափը, ապա ուսումնասիրությունն անցկացնող մարմինն անհապաղ տեղեկացնում է հարցարանին պատասխանած անձին իր նման մտադրության մասին և

ա) ոչ ուշ, քան տասնչորս (14) օր առաջ տեղեկացնում է հարցարանին պատասխանած անձին այն ամսաթվերի մասին, երբ նախատեսում է իրականացնել ստուգիչ այցը.

բ) ոչ ուշ, քան ստուգիչ այցի իրականացման ամսաթվից տաս (10) օր առաջ հարցարանին պատասխանած անձին տրամադրում է փաստաթուղթ, որում շարադրվում են այն հարցերը, որոնց քննարկմանը հարցարանին պատասխանած անձը պետք է պատրաստ լինի ստուգիչ այցի ընթացքում, ինչպես նաև՝ թվարկվում են լրացուցիչ փաստաթղթերի տեսակները, որոնք պետք է ներկայացվեն ստուգման համար³ և

գ) ստուգիչ այցի ավարտից հետո, ինչպես նաև՝ հաշվի առնելով գաղտնի տեղեկատվության պաշտպանության պահանջները, բացահայտել այն տեղեկատվությունն այն մասին, թե որքանով են հաստատվել հարցարանին պատասխանած անձի ներկայացրած տվյալները այցի ընթացքում ստուգված փաստաթղթերով: Հարցարանին պատասխանած անձը, որի նկատմամբ իրականացվել է ստուգիչ այցը, պետք է տեղեկացվի ստուգիչ այցի արդյունքների մասին այնպիսի բավարար ժամկետում, որը թույլ կտա պաշտպանելու իր շահերը:

2 Սույն կետի նպատակների համար «հարցարանին պատասխանած անձ» նշանակում է արտադրող, արտահանող, ներմուծող և, համապատասխան դեպքերում՝ կառավարություն կամ կառավարական մարմին, որոնք պետք է պատասխանեն ուսումնասիրություն անցկացնող Կողմի մարմնի կողմից ուղարկված հակազնագցման կամ փոխհատուցման հարցարանին:

3 Տվյալ առաջարկությունը չի խոչընդոտում մարմնին՝ հարցարանին պատասխանած անձի հետ խորհրդատվություններից հետո փոխել ամսաթիվը, եթե դա անհրաժեշտ է դառնում ուսումնասիրության ընթացքից ելնելով:

2. Կողմի ուսումնասիրությունն անցկացնող մարմինը վարում է յուրաքանչյուր ուսումնասիրության և կրկնակի ուսումնասիրության բաց փաստաթղթապանակը, որը ներառում է՝

ա) բոլոր ոչ գաղտնի փաստաթղթերը, որոնք կազմում են ուսումնասիրության կամ կրկնակի ուսումնասիրության փաստաթղթապանակի մաս. և

բ) այն աստիճանով, որքանով դա հնարավոր է առանց գաղտնի տեղեկատվությունը տարածելու, յուրաքանչյուր ուսումնասիրության կամ կրկնակի ուսումնասիրությունում պարունակվող գաղտնի տեղեկատվության ոչ գաղտնի ամփոփում:

3. Ուսումնասիրության կամ կրկնակի ուսումնասիրության բաց փաստաթղթապանակում պարունակվող բոլոր փաստաթղթերը պետք է լինեն շահագրգիռ անձանց համար ֆիզիկապես հասանելի, հաշվի առնելով Կողմերի օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերը, ուսումնասիրություն անցկացնող մարմինների սովորական աշխատանքային ժամերին ծանոթանալու և պատճենահանելու համար⁴, կամ պետք է լինեն հասանելի էլեկտրոնային տեսքով ներբեռնման համար:

4. Եթե մյուս Կողմից ներմուծման հետ կապված հակազնագցման կամ փոխհատուցման ուսումնասիրության շրջանակներում ուսումնասիրություն անցկացնող Կողմի մարմինները կորոշեն, որ տեղեկատվության հարցմանը ժամանակին ստացված պատասխանը իդեալական չէ բոլոր տեսակետներից, պայմանով, որ շահագրգիռ անձը գործել է հնարավորինս լավագույն կերպով, ուսումնասիրություն անցկացնող մարմինները, որքանով դա գործնականում հնարավոր է, հաշվի առնելով հակազնագցման և փոխհատուցման ուսումնասիրությունները ավարտելու համար նախատեսված ժամկետները, տեղեկատվությունը մերժելուց առաջ պետք է փորձեն ստանալ ուսումնասիրության նպատակների համար ավելի լիարժեք տեղեկատվություն, այդ թվում, երբ անհրաժեշտ է, տվյալ հարցարանին պատասխանած անձին տրամադրել ժամկետի ողջամիտ երկարաձգում ավելի մանրամասն և ճշգրիտ պատասխանի համար՝ Հակազնագցման մասին համաձայնագրի և ՍՓՄ համաձայնագիր դրույթներին համապատասխան: Եթե այդ շահագրգռված կողմը տրամադրում է լրացուցիչ տեղեկատվություն և ուսումնասիրությունն անցկացնող մարմինները համարում են, որ պատասխանը բավարար չէ կամ պատասխանը չէր տրամադրվել ընդունելի ժամկետի ընթացքում, և եթե ուսումնասիրությունն անցկացնող մարմինները ամբողջությամբ կամ մասամբ հաշվի չեն առնում սկզբնական և հաջորդ պատասխանը, ապա ուսումնասիրությունն անցկացնող մարմինները եզրակացության կամ այլ գրավոր ձևով կազմված փաստաթղթի մեջ բացատրում են տվյալ տեղեկատվության հաշվի չառնելու պատճառները:

⁴ Պատճենահանման դիմաց վճարը, եթե առկա է, պետք է սահմանափակվի այն գումարով, որը մոտավորապես համապատասխանում է մատուցված ծառայությունների արժեքին:

Հոդված 3.5

Ծանուցումներ և խորհրդատվություններ

1. Ուսումնասիրություններն անցկացնող Կողմի մարմնի կողմից ներմուծման նկատմամբ հակազնագցման միջոցի կիրառման մասին պատշաճ ձևակերպված դիմումը մյուս Կողմից ստանալուց հետո Կողմը ոչ ուշ, քան տվյալ ուսումնասիրության անցկացումը սկսելուց տասնհինգ (15) օր առաջ մյուս Կողմին գրավոր ձևով ծանուցում է ուղարկում դիմումը ստանալու մասին, որը ներառում է հետևյալը՝
 - ա) ապրանքի նկարագրությունը.
 - բ) մաքսային անվանացանկի ծածկագիրը, որի տակ այդ ապրանքը ներմուծվում է.
 - գ) դիմումի մեջ նշված ապրանքի արտահանողների և արտահանող երկրների մասին տեղեկություններ. և
 - դ) ուսումնասիրությունն անցկացնող մարմնի անվանումը և հասցեն:
2. Ուսումնասիրություններն անցկացնող Կողմի մարմնի կողմից ներմուծման նկատմամբ փոխհատուցման միջոցի կիրառման մասին պատշաճ ձևակերպված դիմումը մյուս Կողմից ստանալուց հետո Կողմը ոչ ուշ, քան տվյալ ուսումնասիրության անցկացումը սկսելուց տասնհինգ (15) օր առաջ մյուս Կողմին պետք է դիմումը ստանալու մասին գրավոր ձևով ծանուցում ուղարկի և առաջարկի մյուս Կողմին անցկացնել տվյալ դիմումը քննարկելու նպատակով խորհրդատվություններ:

Հոդված 3.6

Զրոյացման արգելք

Երբ հակազնագցման չափը որոշվում, սահմանվում կամ վերանայվում է Հակազնագցման մասին համաձայնագրի 2-րդ հոդվածին, 9-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ կետերին և 11-րդ հոդվածին համապատասխան, յուրաքանչյուր առանձին չափ, լինի դա դրական կամ բացասական, պետք է հաշվի առնվի միջին արժեքի որոշման համար՝ միջին կշռված արժեքների համեմատության կամ առանձին գործարքների մասին տվյալների համեմատության ժամանակ: Միջին կշռված տվյալները առանձին գործարքների մասին տվյալների հետ համեմատելիս բացասական չափը չպետք է

պարբերաբար բացառվի Հակագնագցման մասին համաձայնագրի 2-րդ հոդվածի 4.2-րդ ենթակետին հակասող եղանակով:

Հոդված 3.7

Գաղտնի տեղեկատվության հետ վարվելը

Ուսումնասիրություններ անցկացնող Կողմի մարմինը պետք է գաղտնի տեղեկատվություն տրամադրող շահագրգիռ անձանցից պահանջի նաև տրամադրել տվյալ տեղեկատվության ոչ գաղտնի ամփոփումը, որը հիշատակվել է Հակագնագցման համաձայնագրի 6-րդ հոդվածի 5.1-րդ ենթակետում: այդ ոչ գաղտնի ամփոփումը պետք է լինի բավարար չափով մանրամասն, որպեսզի ապահովի գաղտնի տեսքով ներկայացված տեղեկատվության էության ողջամիտ ընկալումը և որպեսզի թույլ տա մյուս շահագրգիռ անձանց՝ հնարավորություն ունենալ ուսումնասիրության ընթացքում մեկնաբանելու և պաշտպանելու իրենց շահերը

Հոդված 3.8

Հիմնական փաստերի բացահայտումը

Մինչև վերջնական եզրակացություն կայացնելը ուսումնասիրություններն անցկացնող մարմինները պետք է տեղեկացնեն բոլոր շահագրգիռ անձանց հիմնական փաստերի մասին, որոնք ընկած են վերջնական միջոցների կիրառման մասին որոշման հիմքում: Հաշվի առնելով գաղտնի տեղեկատվության պաշտպանության պահանջները՝ ուսումնասիրություններն անցկացնող մարմինները կարող են օգտագործել հիմնական փաստերը բացահայտելու համար ցանկացած ողջամիտ միջոցներ, այդ թվում՝ զեկույց, որը ամփոփում է փաստաթղթապանակում պարունակվող տեղեկությունները, զեկույցի նախագիծ կամ նախնական եզրակացություն, կամ տվյալ զեկույցների կամ եզրակացությունների որևէ համադրություն, որը հնարավորություն կտա շահագրգիռ անձանց արձագանքելու բացահայտված հիմնական փաստերին:

Հոդված 3.9

Գնային պարտավորություններ

1. հակազնագցման մասով ուսումնասիրության ժամանակ, եթե հակազնագցման ուսումնասիրության ընթացքում ուսումնասիրություններն անցկացնող Կողմի մարմինը նախնական հաստատող եզրակացություն է կայացնում գնագցման և դրանով պայմանավորված վնասի մասին, Կողմը պետք է մյուս Կողմի արտահանողներին տրամադրի հնարավորություն, որպեսզի նրանք անցկացնեն խորհրդատվություններ առաջարկված գնային պարտավորությունների վերաբերյալ, որոնք հավանություն ստանալու դեպքում Կողմի օրենսդրությանը և ընթացակարգերին համապատասխան կարող են հանգեցնել ուսումնասիրության ավարտին կամ կասեցմանը՝ առանց հակազնագցման տուրքերի սահմանման:

2. փոխհատուցման պարտավորության մասով ուսումնասիրության ժամանակ, եթե հակազնագցման ուսումնասիրության ընթացքում ուսումնասիրություն անցկացնող Կողմի մարմինը նախնական հաստատող եզրակացություն է կայացնում սուբսիդիզացիայի կամ դրանով պայմանավորված վնասի մասին, Կողմը պետք է մյուս Կողմին և նրա արտահանողներին տրամադրի հնարավորություն, որպեսզի նրանք անցկացնեն խորհրդատվություններ առաջարկված գնային պարտավորությունների վերաբերյալ, որոնք հավանություն ստանալու դեպքում Կողմի օրենսդրության և ընթացակարգերին համապատասխան կարող են հանգեցնել ուսումնասիրության ավարտին կամ կասեցմանը՝ առանց փոխհատուցման տուրքերի սահմանման:

Հոդված 3.10

Միջոցի գործողության ժամկետի ավարտի հետ կապված կրկնակի ուսումնասիրություններ

Կողմը նախաձեռնում է Հակազնագցման մասին համաձայնագրի 11-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված կրկնակի ուսումնասիրությունը ոչ ուշ, քան երեք (3) ամիս առաջ այն հինգ (5)-ամյա ժամանակահատվածի ավարտից, որը հաջորդում է հակազնագցման տուրքերի սահմանման օրվան կամ հակազնագցման տուրքերի առավել նոր վերանայումից (վերանայումը ընդգրկում է ինչպես գնագցումը, այնպես էլ վնասը) հետո ընդունված հակազնագցման տուրքերի երկարաձգման մասին որոշման ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ (5)-ամյա ժամանակահատվածին: Կրկնակի ուսումնասիրությունը պետք է ավարտվի սկսվելու օրից տասներկու (12) ամսվա ընթացքում:

Հոդված 3.11

Դադարեցումից հետո ուսումնասիրության անցկացման արգելքը

Եթե մյուս Կողմից ապրանքների նկատմամբ հակազնագցման ուսումնասիրությունը դադարեցվում է բացասական վերջնական եզրակացությամբ, ներմուծող Կողմը չպետք է սկսի ուսումնասիրություն նույն ապրանքների նկատմամբ նախորդ ուսումնասիրություն դադարեցման օրից մեկ (1) տարվա ընթացքում, բացառությամբ իրավիճակի, երբ ուսումնասիրությունը սկսելուց առաջ անցկացված վերլուծությունը ցույց է տալիս, որ հանգամանքները փոփոխվել են:

Հոդված 3.12

Կրկնակի ուսումնասիրությունների շրջանակներում կիրառվող նվազագույն թույլատրելի հակազնագցման ստանդարտները

1. Միջոցը, որի նկատմամբ Հակազնագցման մասին համաձայնագրի 11-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան անցկացվում է կրկնակի ուսումնասիրություն, դադարեցնում է գործողությունը, եթե պարզվել է, որ գնագցման չափը փոքր է Հակազնագցման մասին համաձայնագրի 5-րդ հոդվածի 8-րդ կետով սահմանված նվազագույն թույլատրելի գնագցման չափից:

2. Հակազնագցման մասին համաձայնագրի 9-րդ հոդվածի 5-րդ կետի համապատասխան առանձին չափը որոշելիս արտահանողների կամ արտադրողների նկատմամբ արտահանող Կողմում տուրք չի սահմանվում, եթե պարզվել է, որ գնագցման չափը փոքր է Հակազնագցման մասին համաձայնագրի 5-րդ հոդվածի 8-րդ կետով սահմանված նվազագույն թույլատրելի գնագցման չափից:

Բաժին Գ

Երկկողմ պաշտպանական միջոցներ

Հոդված 3.13

Սահմանումներ

Սույն բաժնի նպատակների համար.

«**տեղական արդյունաբերություն**» նշանակում է Կողմի տարածքում համանման կամ ուղղակիորեն մրցակցող ապրանքի բոլոր արտադրողները կամ այն արտադրողները, որոնց ընդհանուր մասնաբաժինը համանման կամ ուղղակիորեն մրցակցող ապրանքի արտադրությունում կազմում է այդ ապրանքների տեղական արտադրության ընդհանուր ծավալի մեծ մասը.

«**լուրջ վնաս**» նշանակում է տնտեսության բնագավառի էական ընդհանուր վատթարացում.

«**լուրջ վնաս պատճառելու սպառնալիք**» նշանակում է լուրջ վնաս, որը պատճառելն ակնհայտորեն անխուսափելի է՝ 3.16 հոդվածի (<Ետազոտության ընթացակարգերը և թափանցիկության պահանջները>) 3-րդ և 4-րդ կետերի դրույթներին համապատասխան սահմանված : Լուրջ վնասի սպառնալիքի առկայության որոշումը պետք է հիմնված լինի փաստերի, այլ ոչ թե պնդումների, ենթադրությունների կամ քիչ հավանական հնարավորության վրա.

«**անցումային շրջան**» կոնկրետ ապրանքի նկատմամբ նշանակում է ժամանակաշրջան՝ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրից մինչև տվյալ ապրանքի համար մաքսատուրքը չեղյալ համարելու գործընթացի ավարտվելու պահից յոթ (7) տարին լրանալը՝ Հավելված 2-1-ի (Սակագնային պարտավորությունների ցանկ) համաձայն և

«**Երկկողմ պաշտպանական միջոց**» նշանակում է միջոց, որը նկարագրված է 3.14 հոդվածի (Երկկողմ պաշտպանական միջոցների կիրառումը) 2-րդ կետում:

Հոդված 3.14

Երկկողմ պաշտպանական միջոցների կիրառումը

1. Եթե սույն Համաձայնագրին համապատասխան՝ մաքսատուրքի նվազեցման կամ վերացման արդյունքում 2-1 հավելվածում (Սակագնային պարտավորությունների ցանկ) նշված մի Կողմի ծագում ունեցող որևէ ապրանքի ներմուծումը մյուս Կողմի տարածք իրականացվում է բացարձակ ցուցանիշներով կամ տեղական արտադրության ընդհանուր ծավալի նկատմամբ համեմատական ցուցանիշներով այնպիսի ավելացած քանակությամբ և այնպիսի պայմաններում, որ դա հանդիսանում է համանման կամ ուղղակիորեն մրցակցող ապրանքն արտադրող տնտեսության բնագավառին հասցված լուրջ վնաս կամ այն պատճառելու էական սպառնալիք, ապա ներմուծող Կողմը կարող է բացառապես անցումային շրջանում ընդունել միջոցներ, որոնք նախատեսված են 2-րդ կետում՝ սույն բաժնում շարադրված պայմաններին և ընթացակարգերին համապատասխան:

2. Ներմուծող կողմը կարող է կիրառել երկկողմ պաշտպանական միջոց հետևյալ ձևով՝

- ա) կասեցնել դիտարկվող ապրանքի նկատմամբ 2-1 հավելվածում (Սակագնային պարտավորությունների ցանկ) նախատեսված մաքսատուրքի դրույքաչափի հետագա նվազեցումը. կամ
- բ) բարձրացնել դիտարկվող ապրանքի նկատմամբ մաքսատուրքի դրույքաչափը մինչև այն մակարդակը, որը չի գերազանցում՝

- (i) առավել բարենպաստության ռեժիմին համապատասխանող՝ միջոցի կիրառման պահին գործող ներմուծման մաքսատուրքի կիրառվող դրույքաչափը, կամ
- (ii) 2-1 հավելվածում (Սակագնային պարտավորությունների ցանկ) սահմանված մաքսատուրքի բազային դրույքաչափի նվազագույնը:

Հոդված 3.15

Երկկողմ պաշտպանական միջոցի կիրառման ստանդարտները

1. Կողմը կիրառում է երկկողմ պաշտպանական միջոցը միայն այն ժամկետի ընթացքում, որը կարող է անհրաժեշտ լինել լուրջ վնասը կանխելու կամ վերացնելու հարմարեցման գործընթացը հեշտացնելու համար: Տվյալ ժամկետը չպետք է գերազանցի երկու (2) տարին, բացառությամբ դեպքի, երբ ժամկետը կարող է երկարաձգվել մինչև մեկ (1) տարով, եթե ուսումնասիրություններն անցկացնող Կողմի մարմինը 3.16-րդ հոդվածում («Ուսումնասիրության ընթացակարգերը և թափանցիկության պահանջները») շարադրված ընթացակարգերին համապատասխան կորոշի, որ երկկողմ պաշտպանական միջոցը շարունակում է մնալ անհրաժեշտ՝ լուրջ վնասի կանխման կամ վերացման և հարմարեցումը հեշտացնելու համար:
2. Երկկողմ պաշտպանական միջոցը չի կիրառվում սույն Համաձայնագրին համապատասխան բանակցված մաքսատուրքի դրույքաչափի նվազեցման գործընթացը սկսվելուց կամ մաքսատուրքը վերացվելուց հետո առաջին վեց (6) ամսվա ընթացքում:
3. Երկկողմ պաշտպանական միջոցը չի կիրառվում կրկնակի անգամ միևնույն ապրանքի նկատմամբ անցումային պաշտպանական ժամանակաշրջանի ընթացքում, բացառությամբ դեպքերի, երբ լրացել է ժամկետը, որը հավասար է նախկինում կիրառված երկկողմ պաշտպանական միջոցի գործողության ժամկետի կեսին:
4. Երկկողմ պաշտպանական միջոցը չի կարող սահմանվել ապրանքի նկատմամբ, եթե տվյալ ապրանքի նկատմամբ գործում է հատուկ պաշտպանական միջոց: Եթե ապրանքի նկատմամբ սահմանվում է հատուկ պաշտպանական միջոց, միևնույն ապրանքի նկատմամբ գործող ցանկացած երկկողմ պաշտպանական միջոց դադարեցնում է իր գործողությունը:
5. Երկկողմ պաշտպանական միջոցի գործողության ավարտից հետո մաքսատուրքի դրույքաչափը սահմանվում է այն մակարդակի վրա, որը կկիրառվեր միջոցի գործողության ավարտի օրը՝ 2-1 հավելվածի Սակագնային պարտավորությունների ցանկ) համաձայն, եթե այդ միջոցը սահմանված չլիներ:

Հոդված 3.16

Հետազոտության ընթացակարգերը և թափանցիկության պահանջները

1. Կողմը կիրառում է երկկողմ պաշտպանական միջոցը միայն ուսումնասիրություններ անցկացնող Կողմի մարմնի կողմից ուսումնասիրություն անցկացնելուց հետո: Տվյալ ուսումնասիրության շրջանակներում պետք է ապահովվի ողջամիտ հանրային ծանուցում բոլոր շահագրգիռ կողմերին և պետք է անցկացվեն հանրային լուսմներ կամ այլ համապատասխան միջոցառումներ, որոնց ընթացքում ներմուծողները, արտահանողները և այլ շահագրգիռ կողմերը կարող են ներկայացնել ապացույցներ և իրենց դիրքորոշումը, ինչպես նաև հնարավորություն ունենալ մեկնաբանելու մյուս կողմերի ներկայացրած փաստերին և ներկայացնելու իրենց տեսակետը: Ուսումնասիրությունն անցկացնող մարմինը հրապարակում է զեկույց՝ շարադրելով իր եզրահանգումները և հիմնավորված եզրակացությունները բոլոր նշանակություն ունեցող փաստերի և իրավունքի վերաբերյալ:

2. Ցանկացած տեղեկատվություն, որն իր բնույթով հանդիսանում է գաղտնի, կամ որը տրամադրվում է գաղտնիության հիման վրա, պետք է հիմնավորումը ներկայացվելուց հետո դիտարկվի որպես այդպիսին ուսումնասիրությունն անցկացնող մարմինների կողմից: Այդպիսի տեղեկատվությունը ենթակա չէ տարածման առանց այն տրամադրած շահագրգիռ կողմի թույլտվության: Գաղտնի տեղեկատվությունը տրամադրած շահագրգիռ կողմերին կարող է առաջարկվել տրամադրել գաղտնի տեղեկատվության ոչ գաղտնի ամփոփումը կամ, եթե նրանք նշում են, որ այդպիսի տեղեկատվությունը չի կարող ամփոփվել ոչ գաղտնի տեսքով, շարադրել պատճառները, որոնցից ելնելով՝ այդ ամփոփումը չի կարող ներկայացվել: Սակայն եթե ուսումնասիրությունն անցկացնող մարմինը կհամարի, որ գաղտնիությունը պահպանելու պահանջն անհիմն է, և եթե շահագրգիռ կողմը չի ցանկանում հրապարակել այդ տեղեկատվությունը կամ թույլ տար բացահայտել այն ընդհանուր տեսքով կամ ամփոփված ձևով՝ ուսումնասիրությունն անցկացնող մարմինը կարող է հաշվի չառնել այդ տեղեկատվությունը, բացառությամբ դեպքերի, երբ համապատասխան աղբյուրներից կստացվի ներկայացված տեղեկատվության իսկությունը:

3. Որոշելու համար, թե արդյոք ավելացած ներմուծումը տնտեսության բնագավառին լուրջ վնասի էական պատճառ կամ սպառնալիք է հանդիսացել սույն բաժնի դրույթներին համապատասխան, ուսումնասիրությունն անցկացնող մարմինը գնահատում է բոլոր օբյեկտիվ գործոնները, որոնք կարող են արտահայտվել քանակական ցուցանիշներով և որոնք ազդում են տնտեսության բնագավառի տնտեսական վիճակի վրա, մասնավորապես՝ ուսումնասիրության օբյեկտ հանդիսացող ապրանքի ներմուծման աճի տեմպերը և ծավալը բացարձակ և հարաբերական ցուցանիշներով, ներքին շուկայում ուսումնասիրության օբյեկտ հանդիսացող ապրանքի մասնաբաժինը, վաճառքի,

արտադրության, արտադրողականության, արտադրական հզորությունների ծանրաբեռնվածության, եկամուտների և կորուստների ծավալների, ինչպես նաև զբաղվածության մակարդակի փոփոխությունը:

4. Սահմանումը, որը հիշատակված է 3-րդ կետում, չի կարող է արվել, միայն եթե ուսումնասիրությունն օբյեկտիվ տվյալների հիման վրա ցույց չտա պատճառահետևանքային կապի առկայություն՝ տվյալ ապրանքի ավելացած ներմուծման և լուրջ վնասի կամ լուրջ վնասի սպառնալիքի միջև: Երբ մյուս գործոնները, ավելացած ներմուծումից բացի, վնաս են պատճառում տնտեսության բնագավառին հենց այն նույն ժամանակահատվածում, ապա այդպիսի վնասը չպետք է վերագրվի ավելացած ներմուծմանը:

5. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որպեսզի ուսումնասիրություն անցկացնող իր մարմիններն ավարտեն ուսումնասիրությունը դրա սկսման օրից ինն (9) ամսվա ընթացքում:

Հոդված 3.17

Ծանուցագրումներ և խորհրդատվություններ

1. Կողմն անհապաղ ուղարկում է գրավոր ծանուցում մյուս Կողմին՝

(ա) լուրջ վնասի կամ դրա սպառնալիքի առնչությամբ ուսումնասիրություն սկսելու, ինչպես նաև դրա հիմքերի մասին.

(բ) ավելացած ներմուծման պատճառով լուրջ վնասը կամ դրա սպառնալիքը պարզելու մասին. և

(գ) երկկողմ պաշտպանական միջոցի կիրառման կամ երկարաձգման մասին որոշում կայացնելու մասին:

2. Ուսումնասիրություններն անցկացնող մարմինները, 3.16-րդ հոդվածի (Ուսումնասիրության ընթացակարգերը և թափանցիկության պահանջները) 1-ին կետի դրույթներին համապատասխան, անհապաղ հրապարակում են ուսումնասիրվող գործի մանրամասն վերլուծությունը, ինչպես նաև՝ վերլուծված գործոնների վերաբերելիության ապացույցները: Կողմը մյուս Կողմին է տրամադրում իր ուսումնասիրություններն անցկացնող մարմնի զեկույցի ոչ գաղտնի տարբերակի պատճենը, տպագիր կամ էլեկտրոնային եղանակով համացանցի միջոցով:

3. Երբ Կողմը 1 (բ) ենթակետին համապատասխան ծանուցում է այն մասին, որ եզրահանգում է կատարել ավելացած ներմուծման պատճառով լուրջ վնասի կամ դրա սպառնալիքի առկայության վերաբերյալ, այդ Կողմը ծանուցման մեջ ներառում է՝

(ա) ծագող ապրանքի լրիվ նկարագիրը, որի նկատմամբ սահմանվում է երկկողմ պաշտպանական միջոցը, ներառյալ՝ ՆՀ դիրքը և ենթադիրքը, որի վրա հիմնվում է 2-1 հավելվածը (Սակագնային պարտավորությունների ցանկ) և

(բ) ապացույցները, որոնք թույլ են տվել պարզելու սույն Համաձայնագրին համապատասխան մաքսատուրքի նվազեցման կամ վերացվելու արդյունքում, մյուս Կողմի ծագող ապրանքի ավելացած ներմուծման պատճառով՝ լուրջ վնասի կամ դրա սպառնալիքի առկայությունը:

4. Երբ Կողմը, 1 (գ) ենթակետին համապատասխան ծանուցում է այն մասին, որ նա կայացրել է որոշում երկկողմ պաշտպանական միջոցի կիրառման կամ երկարաձգման մասին, Կողմը ծանուցման մեջ ներառում է՝

(ա) ապրանքի լրիվ նկարագիրը, որի նկատմամբ սահմանվում է երկկողմ պաշտպանական միջոցը, ներառյալ՝ ՆՀ դիրքը և ենթադիրքը, որի վրա հիմնվում է 2-1 հավելվածը (Սակագնային պարտավորությունների ցանկ).

(բ) երկկողմ պաշտպանական միջոցի ճշգրիտ նկարագիրը.

(գ) երկկողմ պաշտպանական միջոցի սահմանման ամսաթիվը և միջոցի գործողության ենթադրյալ ժամկետը և

(դ) երկկողմ պաշտպանական միջոցի երկարաձգման դեպքում, ապացույցներ, որ համապատասխան տնտեսության բնագավառը հարմարեցվում է:

5. Այն Կողմի հարցմամբ, որի ապրանքների նկատմամբ անցկացվում է երկկողմ պաշտպանական ուսումնասիրությունը, սույն բաժնին համապատասխան, այդ ուսումնասիրությունն անցկացնող Կողմը պետք է մասնակցի այն Կողմի հետ խորհրդակցություններին, որը դիմել է դրանց անցկացման վերաբերյալ՝ ուսումնասիրությունն անցկացնող մարմնի կողմից ուսումնասիրության հետ կապված 3-րդ և 4-րդ կետերին համապատասխան ներկայացված ծանուցման, հրապարակված ցանկացած ծանուցման կամ զեկույցի քննարկման համար: Այդպիսի խորհրդատվությունները չպետք է խոչընդոտեն Կողմի երկկողմ պաշտպանական ուսումնասիրության անցկացումը և չխանգարեն այդպիսի ուսումնասիրությանը կամ միջոցի սահմանմանը:

ԳԼՈՒԽ 4
Ապրանքների ծագումը որոշելու կանոններ

ԲԱԺԻՆ Ա
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 4.1

Կիրառման շրջանակը

Սույն գլխում նախատեսված ծագման կանոնները կիրառվում են սույն Համաձայնագրին համապատասխան արտոնյալ սակագնային ռեժիմի տրամադրման նպատակների համար:

Հոդված 4.2

Սահմանումներ

Սույն գլխի նպատակների համար՝

«ակվակուլտուրա» նշանակում է ջրային օրգանիզմների, այդ թվում՝ ձկների, կակղամորթերի, խեցգետնանմանների, այլ ջրային անողնաշարավորների և ջրիմուռների բուծում սերմային ֆոնդից, ինչպիսիք են ձվերը, մանրաձկնիկները, սեգոլետկեքը կամ թրթուրները՝ արտադրությունն ավելացնելու նպատակով զարգացման կամ աճի գործընթացների վրա ազդելու, օրինակ՝ կանոնավոր կերպով ձկների քանակի ավելացման, կերակրման կամ գիշատիչներից պաշտպանության միջոցով,

«Լիազորված մարմին» նշանակում է իրավասու մարմին, որին նշանակել է Կողմը սույն Համաձայնագրին համապատասխան ապրանքի ծագման սերտիֆիկատի տրամադրման համար,

«CIF պայմաններով մատակարարման արժեքը» նշանակում է ներմուծված ապրանքի արժեքը և ներառում է նավավարձը, ապահովագրության արժեքը և այլ ծախսեր, որոնք կապված են մինչև նավահանգիստ կամ ներմուծման երկիր մուտքի վայր մատակարարման հետ, բացառությամբ տուրքերը, հարկերը և մաքսային բրոքերների համար հավաքագրումները,

«խմբաքանակ» նշանակում է ապրանք, որն ուղարկվում է միաժամանակ մեկ կամ մի քանի տրանսպորտային փաստաթղթերով արտահանողից մի բեռնաստացողի հասցեով,

«արտահանող» նշանակում է անձ, որը գրանցված է այն Կողմի տարածքում, որտեղից ապրանքներն արտահանվում են այդ անձի կողմից

«FOB պայմանով մատակարարման արժեքը» նշանակում է ապրանքների արժեքը «ազատ է փոխադրամիջոցի վրա», ներառյալ մինչև նավահանգիստ կամ արտերկրում վերջնական բեռնաթափման վայր փոխադրումը,

«փոխադարձ փոխարինելի ապրանքներ կամ նյութեր» նշանակում է ապրանքներ կամ նյութեր, որոնք հանդիսանում են փոխադարձ փոխարինելի առևտրային նպատակների համար և որոնց հատկությունները հիմնականում նույնական են,

«Հաշվապահական հաշվառման համընդհանուր սկզբունքներ» ընկալվում է որպես

նորմեր, որոնք ճանաչվում են կոնսենսուսի միջոցով կամ որոշակի ժամանակ երկրում օգտվում են էական հեղինակավոր աջակցությունից այն առումով, թե տնտեսական ո՞ր ռեսուրսներ և պարտավորություններ պետք է հաշվի առնվեն որպես ակտիվներ և պասիվներ, ակտիվներում և պասիվներում ո՞ր փոփոխությունները պետք է գրանցվեն, ինչպե՞ս պետք է չափվեն ակտիվները և պասիվները և դրանցում փոփոխությունները, ո՞ր տեղեկատվությունը պետք է բացահայտվի և ինչպե՞ս և ինչպիսի՞ ֆինանսական հաշվետվություններ պետք է նախապատրաստվեն: Այդ սկզբունքները կարող են իրենցից ներկայացնել ընդհանուր կիրառման ընդարձակ ուղեցույցներ, ինչպես նաև մանրամասն չափանիշներ, գործելակերպեր և ընթացակարգեր,

«նույնական և փոխադարձ փոխարինելի նյութեր» նշանակում է նույն տեսակի և առևտրային որակի ապրանքներ, նույն տեխնիկական և ֆիզիկական բնութագրերով և որոնք պատրաստի արտադրանքում ներառվելուց հետո հնարավոր չէ տարբերել միմյանցից ծագումը որոշելու նպատակների համար,

«Ներմուծող» նշանակում է այն Կողմի տարածքում գրանցված անձ, ուր այդ անձի կողմից ապրանքներ են ներմուծվում.

«նյութ» նշանակում է ապրանքներ, որոնք օգտագործվում են այլ ապրանքների արտադրության ժամանակ,

«չծագող ապրանքներ» կամ **«չծագող նյութեր»** նշանակում է ապրանքներ կամ նյութեր, որոնք սույն գլխին համապատասխան չեն կարող համարվել ծագող,

«Ծագող ապրանքներ» կամ **«ծագող նյութեր»** նշանակում են ապրանքներ կամ նյութեր, որոնք կարող են համարվել ծագումող սույն գլխին համապատասխան.

«փաթեթանյութեր և բեռնման համար կոնտեյներներ» նշանակում է ապրանք, որն օգտագործվում է մյուս ապրանքի տեղափոխման ժամանակ դրա պաշտպանության համար, սակայն չի ներառում այն փաթեթանյութերը կամ կոնտեյներները, որոնցում ապրանքը փաթեթավորված է մանրածախ վաճառքի համար,

«արտադրող» նշանակում է անձ, որը զբաղվում է Կողմի տարածքում ապրանքների արտադրությամբ.

«արտադրություն» նշանակում է ապրանքների ստացման եղանակներ, ներառյալ՝ աճեցում, բույսերի մշակում, բուծում, արդյունահանում, բերքահավաք, ձկնորսություն,

ծուղակով կենդանիների որս, որսորդություն, կենդանիների բազմացում, ակվակուլտուրա, ապրանքների պատրաստում, վերամշակում կամ հավաքում,

«**վերիֆիկացիայի մարմին**» նշանակում է իրավասու կառավարական մարմին, որին նշանակում է Կողմը վերիֆիկացիայի ընթացակարգերի իրականացման համար:

Հոդված 4.3

Ապրանքների ծագման չափորոշիչներ

Բացառությամբ սույն Գլխով նախատեսված դեպքերի, յուրաքանչյուր Կողմ պետք է ապահովի, որպեսզի ապրանքները ճանաչվեն ծագող, եթե դրանք.

ա) ամբողջությամբ ստացվել կամ արտադրվել են Կողմի տարածքում, ինչպես նախատեսված է սույն Համաձայնագրի 4.4-րդ հոդվածով (Ամբողջությամբ ստացված կամ արտադրված ապրանքներ),

բ) ամբողջությամբ արտադրվել է Կողմի տարածքում, բացառապես մեկ կամ ավելի Կողմերից ծագող նյութերից, ինչպես նախատեսված է 4.8-րդ հոդվածով (Ծագման կուտակում), կամ

գ) արտադրվել են Կողմի տարածքում չծագող նյութերի օգտագործմամբ և բավարարում են Հավելված 4-4-ի (արտադրանքի հատուկ կանոններ) կիրառելի պահանջներին,

և ապրանքը բավարարում է սույն Գլխի մյուս կիրառելի պահանջներին:

Հոդված 4.4

Ամբողջությամբ ստացված կամ արտադրված ապրանքներ

Յուրաքանչյուր Կողմ պետք է ապահովի, որպեսզի սույն Համաձայնագրի 4.3-րդ հոդվածի (Ծագման հատուկ չափորոշիչներ) կիրառման նպատակներով, Կողմի տարածքում ամբողջությամբ ստացված կամ արտադրված ճանաչվեն հետևյալ ապրանքները.

ա) բույսեր և բուսական ծագման ապրանքներ, ներառյալ՝ մրգեր, հատապտուղներ, ծաղիկներ, բանջարեղեն, ծառեր, ջրիմուռներ, սնկեր և կենդանի բույսեր, որոնք աճեցվել, մշակվել, քաղվել, պոկվել կամ հավաքվել են այնտեղ,

- բ) կենդանի կենդանիներ, որոնք ծնվել և մեծացվել են այնտեղ,
- գ) կենդանի կենդանիներից այնտեղ ստացված ապրանքներ,
- դ) հավաքման, որսորդության, ծուղակով որսի, ձկնորսության, աճեցման, բուծման և ակվակուլտուրայի արդյունքում այնտեղ ստացված ապրանքներ,
- ե) հանքանյութեր և այլ բնական օգտակար հանածոներ, որոնք այնտեղ արդյունահանվել կամ վերցվել են օդից, հողից, ջրից կամ ծովի հատակից և ընդերքից,
- զ) ձկնեղեն, կակղամորթեր և ծովային արդյունահանության այլ ապրանքներ, որոնք ստացվել են բաց ծովում, ծովի հատակից կամ ընդերքից միջազգային իրավունքի նորմերին համապատասխան՝ Կողմի տարածքում հաշվառված, թվագրված կամ կցագրված և նրա դրոշի ներքո նավարկող նավի միջոցով,
- է) ապրանքներ, որոնք ստացվել են բացառապես գ) ենթակետում նշված ապրանքներից, վերամշակող նավի վրա, որը հաշվառված, թվագրված կամ կցագրված է Կողմի տարածքում և նավարկում է դրա դրոշի ներքո,
- ը) ձկներից, կակղամորթերից և ծովամթերքներից տարբերվող ապրանքներ, որոնք Կողմը արդյունահանել է ծովի հատակից կամ ընդերքից տարածքային ջրերի սահմաններից դուրս, պայմանով, որ միջազգային իրավունքին համապատասխան, Կողմն իրավունք ունի շահագործել այդ հատակը կամ ընդերքը,
- թ) թափոններ և ջարդոն, որոնք ստացվել են այնտեղ արտադրության կամ սպառման արդյունքում, պայմանով, որ այդ ապրանքները պիտանի են միայն վերամշակման հումքի համար,
- ժ) օգտագործված արտադրատեսակներ, որոնք հավաքվել են այնտեղ, պայմանով, որ այդ արտադրանքը պիտանի է միայն վերամշակման համար,
- ժա) ապրանքներ, որոնք ստացվել են բաց տիեզերքում տիեզերանավերի վրա, պայմանով, որ հաշվառված է Կողմում, և
- ժբ) ապրանքներ, որոնք արտադրվել կամ ստացվել են Կողմի տարածքում, բացառապես սույն հոդվածի (ա) – (ժա) ենթակետերում նշված ապրանքներից:

Հոդված 4.5

Ավելացված արժեքի մասնաբաժինը

1. Սույն գլխի և Հավելված 4-4-ում (Ծագման հատուկ չափորոշիչներ) բերված ծագման

հատուկ չափորոշիչների կիրառման նպատակների համար, ավելացված արժեքի մասնաբաժինը հաշվարկելու համար կիրառվում է հետևյալ բանաձևը (այսուհետ՝ «VAC»)

FOB պայմաններով մատակարարման արժեք - չձագող նյութերի արժեք x 100%

FOB պայմաններով մատակարարման արժեք

2. 1-ին կետում նշված VAC-ի հաշվարկման նպատակների համար, չձագող ապրանքների արժեքը հանդիսանում է.

ա) նյութերը Կողմի տարածք ներմուծման պահին CIF մատակարարման պայմաններով արժեքը, կամ

բ) այդ չձագող նյութերի համար սահմանված, վճարված կամ վճարման ենթակա ամենահին գինը այն Կողմի տարածքում, որտեղ իրականացվել է ապրանքի մշակումը կամ վերամշակումը:

3. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որպեսզի VAC-ի հաշվարկման ժամանակ դիտարկված բոլոր հաշվարկները գրանցվեն և պահվեն Հաշվապահական հաշվառման համընդհանուր սկզբունքներին համապատասխան, որոնք կիրառելի են այն Կողմի տարածքում, որտեղ ապրանքը արտադրվել է:

Հոդված 4.6

Արտադրության մեջ օգտագործված նյութերի արժեքը

1. Երբ Կողմի տարածքում ապրանքն արտադրողը ձեռք է բերում չձագող նյութեր այդ Կողմում, ապա այդ նյութերի արժեքը չի ներառում փոխադրման, ապահովագրման, փաթեթավորման ծախսերը և ցանկացած այլ ծախսեր, որոնք կապված են այդ նյութերի միայն ներքին փոխադրման հետ՝ մատակարարողի տեղակայման վայրից մինչև արտադրության վայր:

2. Յուրաքանչյուր Կողմ պարտավոր է նախատեսել, որպեսզի չձագող նյութերի համար ապրանքների արտադրության ժամանակ նյութերի օգտագործումից առաջացող թափոնների և ջարդոնի արժեքը կարելի լինի հանել նյութերի արժեքից, բացի այն թափոնների և ջարդոնի արժեքի, որոնք վերաօգտագործել:

3. Եթե 1-ին և 2-րդ կետերում նշված արժեքը կամ ծախսերը անհայտ են կամ

բացակայում է շտկման գումարի փաստաթղթավորված հաստատումը, ապա այդ կոնկրետ ծախսերի շտկում չի թույլատրվում:

Հոդված 4.7

Ոչ բավարար մշակում կամ վերամշակում

1. Հետևյալ գործողությունները, որոնք իրականացվում են բացառապես առանձին կամ մեկը մյուսի հետ զուգակցված, համարվում են 4.3-րդ հոդվածի (Ապրանքների ծագման չափորոշիչներ) (բ) և (գ) կետերի պահանջները կատարելու համար ոչ բավարար.

ա) պահպանման գործողությունները, որոնք ապահովում են, որպեսզի պահման և տեղափոխման ընթացքում ապրանքը պահպանի իր նորմալ վիճակում:

բ) սառեցում և ապասառեցում,

գ) փաթեթավորում և վերափաթեթավորում,

դ) փոշու, թթվի, յուղի, ներկի կամ այլ ծածկույթների լվացում, մաքրում, հեռացում,

ե) տեքստիլի արդուկում կամ մամլում,

զ) ներկում, ողորկում, լաքապատում, յուղապատում

է) հացաբույսերի և բրնձի թեփահանում, մասնակի կամ լրիվ սպիտակեցում, հղկում և ողորկում,

ը) շաքարի ներկում կամ կտորով շաքարի ձևավորում,

թ) Կեղևի հանում և սերմերի և կորիզների դուրս բերում, մրգերի, բանջարեղենի և ընկույզների կլայում,

ժ) սրում, հղկում,

ժա) հասարակ կտրում,

ժբ) մաղում, ընտրում, սորտավորում, դասակարգում,

ժգ) լցում, չափաձրարում բանկանների, շշերի, սրվակների, պարկերի, արկղերի, տուփերի մեջ, մակերեսի վրա ամրացում և փաթեթավորման ցանկացած այլ գործողություններ,

ժդ) արտադրանքի կամ դրա փաթեթվածքի վրա առևտրային նշանների, պատկերանիշերի, պիտակների և այլ նման տարբերանշանների գծանշում կամ տպում,

ժե) տարբեր ծագում ունեցող ապրանքների խառնում, պայմանով, որ արդյունքում ստացված արտադրանքի բնութագրերը էապես չեն տարբերվելու սկզբնական բաղադրիչների բնութագրերից,

ժզ) ապրանքի հասարակ հավաքում,

ժէ) ապրանքի մասիրի բաժանում,

ժը) կենդանիների սպանդ:

2. 1-ին կետի կիրառման նպատակների համար, "հասարակ" նշանակում է գործողություն, որի իրականացման համար չի պահանջվում տվյալ գործողության համար նախատեսված հատուկ կարողություններ (հմտություններ) կամ մեքենաներ, սարքեր կամ սարքավորումներ:

Հոդված 4.8

Ծագման կուտակում

1 Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որպեսզի Կողմում ծագող ապրանքները կամ նյութերը, որոնք օգտագործվում են մյուս Կողմի տարածքում ապրանքների արտադրության ժամանակ, համարվեն մյուս Կողմի տարածքից ծագող, որտեղ կատարվել են վերջին գործողությունները, բացի նրանցից, որոնք նշված են 4.7-րդ հոդվածի (Ոչ բավարար մշակում կամ վերամշակում) 1-ին կետում:

2. Յուրաքանչյուր Կողմ նախատեսում է, որ արտադրությունը, որն իրականացվում է մի կամ մի քանի արտադրողի կողմից մի կամ մի քանի Կողմերի տարածքներից չծագող նյութերի օգտագործմամբ, կարող է իր ներդրումն ունենալ ապրանքի ծագման մեջ՝ դրա ծագումը որոշելու նպատակների համար, անկախ նրանից, բավական է արդյոք այդ արտադրությունը բուն նյութին ծագում հաղորդելու համար, թե ոչ:

3. Եթե ապրանքի արտադրության համար օգտագործվում է չծագող նյութ, յուրաքանչյուր Կողմ պետք է նախատեսի, որ VAC-ի պահանջներին ապրանքի համապատասխանությունը որոշելու համար կարող են հաշվի առնվել.

(ա) մի կամ մի քանի Կողմերի տարածքում չծագող նյութերի մշակման արժեքը, և

(բ) մի կամ մի քանի Կողմերի տարածքում չծագող նյութի արտադրության համար

օգտագործվող ցանկացած ծագող ապրանքի արժեքը,

4. Այդպիսի նյութի ծագումը պետք է հաստատվի լիազորված մարմնի կողմից տրված ծագման մասին սերտիֆիկատով (EAS ձև):

Հոդված 4.9

Արտադրության մեջ օգտագործվող նյութեր

Յուրաքանչյուր Կողմ պետք է նախատեսի, որ, եթե չծագող նյութը ենթարկվել է հետագա վերամշակման այնպիսի կերպով, որը համապատասխանում է սույն Գլխի պահանջներին, ապա ստացված ապրանքի ծագումը հետագայում որոշելու ժամանակ, նյութը դիտարկվում է որպես ծագող, անկախ նրանից արտադրվել է այն ապրանքի արտադրողի կողմից, թե ոչ:

Հոդված 4.10

De Minimis

1 Յուրաքանչյուր Կողմ նախատեսում է, որպեսզի ապրանքը, որը պարունակում է չծագող նյութեր, որոնք չեն բավարարում Հավելված 4-4-ում (Ապրանքների ծագման հատուկ չափորոշիչներ) նշված ապրանքի սակագնային դասակարգման փոփոխության կիրառելի պահանջներին, այնուամենայնիվ դիտարկվի որպես ծագող ապրանք, եթե ապրանքի արտադրության մեջ օգտագործվող բոլոր չծագող նյութերի արժեքը չի գերազանցում FOB պայմաններով այդպիսի ապրանքների արժեքի տաս (10) տոկոսը, իսկ ապրանքները համապատասխանում են սույն Գլխի մյուս կիրառելի պահանջներին:

2. 1-ին կետը կիրառվում է միայն այն ժամանակ, երբ ապրանքի արտադրության մեջ օգտագործվում են չծագող ապրանքներ:

3 Եթե 1-ին կետում նկարագրված ապրանքը նույնպես հանդիսանում է VAC մասով պահանջի առարկա, այդ չծագող նյութերի արժեքը պետք է ներառվի չծագող նյութերի արժեքում՝ VAC կիրառելի պահանջների հաշվարկման նպատակով:

Հոդված 4.11

Անմիջական մատակարարում

1. Յուրաքանչյուր Կողմ նախատեսում է, որպեսզի ծագող ապրանքները պահպանեն իրենց ծագումը, եթե ապրանքները փոխադրվել են անմիջականորեն արտահանող Կողմի տարածքից ներմուծող Կողմի տարածք՝ առանց երրորդ կողմի տարածքով անցնելու:

2. Յուրաքանչյուր Կողմ նախատեսում է, որ եթե ծագող ապրանքները փոխադրվում են մեկ կամ ավելի երրորդ կողմերի տարածքով, ապա ապրանքները պահպանում են իրենց ծագումը, պայմանով, որ.

ա) երրորդ կողմի տարածքով տարանցումը պայմանավորված է աշխարհագրական պատճառներով կամ բացառապես տրանսպորտային պահանջներով,

բ) ապրանքները չեն հանդիսացել առևտրի կամ սպառման օբյեկտ և մնացել են սույն Համաձայնագրի Կողմ չհանդիսացող երկրի տարածքում մաքսային մարմինների հսկողության ներքո, և

գ) ապրանքները չեն ենթարկվել որևէ գործողությունների, բացառությամբ բեռնաթափման, կրկնակի բեռնման (այդ թվում՝ տրանսպորտային միջոցների տեսակների և կոնտեյներների փոփոխությամբ), պահման, մակնշման և ցանկացած գործողությունների, որոնք անհրաժեշտ են դրանց պահպանվածությունը և լավ վիճակը ապահովելու կամ ներմուծող Կողմի տարածք տեղափոխելու համար:

3. Հայտարարատուն պետք է ներմուծող Կողմի մաքսային մարմիններին ներկայացնի համապատասխան փաստացի ապացույց՝ 2-րդ կետով սահմանված պահանջները կատարելու մասին: Այդպիսի ապացույցը ներմուծող Կողմի մաքսային մարմիններին է ներկայացվում հետևյալ փաստաթղթերի ներկայացման միջոցով.

ա մի Կողմի տարածքից մյուս Կողմի տարածք տեղափոխման երթուղին հաստատող տրանսպորտային փաստաթղթեր, որոնք պարունակում են հետևյալ տեղեկատվությունը.

i. ապրանքի ստույգ նկարագիրը, և

ii. որտեղ կիրառելի է՝

Ա նավերի կամ օգտագործվող այլ տրանսպորտային միջոցների անվանումները,

Բ կոնտեյներների համարները,

Գ պայմանները, որոնցում ապրանքները գտնվել են տարանցման երկրում պատշաճ վիճակում,

Դ տարանցման երկրի մաքսային մարմինների նշումները,

Ե ապրանքների բեռնաթափման և կրկնակի բեռնման ամսաթվերը կամ

(Զ) փաստաթուղթ, որը տրվել է տարանցման երկրի մաքսային մարմինների կողմից, որը պարունակում է (ա) ենթակետում նշված տեղեկատվությունը:

4. Հայտարարատուն կարող է ներկայացնել այլ փաստաթղթեր, 3-րդ կետում նշվածներից բացի, որոնք հաստատում են 2-րդ կետի պահանջների կատարումը:

Հոդված 4.12

Փոխադարձ փոխարինելի ապրանքներ կամ նյութեր

1. Եթե ապրանքի արտադրության ժամանակ օգտագործվում են նույնական և փոխադարձ փոխարինելի ծագող և չծագող ապրանքներ կամ նյութեր, այդ նյութերը պահման ժամանակ պետք է լինեն ֆիզիկապես բաժանված՝ կախված դրանց ծագումից:

2. Այն դեպքերում, երբ նույնական և փոխադարձ փոխարինելի ծագող կամ չծագող նյութերի պաշարների առանձին պահման ժամանակ առաջանում են զգալի ծախսեր, արտադրական պրակտիկա կամ նյութական դժվարություններ, լիազորված մարմինները կարող են արտադրողների գրավոր հարցմամբ թույլատրել նյութերի կառավարումը հաշվապահական հաշվառման մեջ բաժանման միջոցի օգտագործմամբ՝ առանց նյութերի առանձին պահման: Թույլտվությունը տրամադրվում է միայն այն դեպքում, եթե հաշվապահական հաշվառման մեջ բաժանման մեթոդի օգնությամբ կարելի է երաշխավորել, որ ցանկացած ժամանակ, ստացված ապրանքների քանակը, որոնք կարող են դիտարկվել որպես Կողմից ծագող, համընկնում է ապրանքների այն քանակի հետ, որը կարող էր ստացվել պաշարների ֆիզիկական բաժանման մեթոդի օգտագործմամբ:

3. Հաշվապահական հաշվառման ընտրված մեթոդը գրանցվում, կիրառվում և պահպանվում է այն ընտրած անձի համար Հաշվապահական հաշվառման համընդհանուր սկզբունքներին համապատասխան, որոնք կիրառվում են այն Կողմի տարածքում, որտեղ ապրանքներն արտադրվում են ֆինանսական տարվա ընթացքում:

4. 3-րդ կետում նշված հաշվապահական հաշվառման մեթոդն ընտրած և օգտագործող արտադրողը պետք է պահպանի նյութերի ծագումը հաստատող փաստաթղթերը ոչ պակաս, քան երեք (3) տարվա ընթացքում: Արտահանող Կողմի ստուգման նպատակով վերիֆիկացիայի մարմնի կողմից կատարված հարցման դեպքում, արտադրողը պետք է տրամադրի բավարար հայտարարություն այն մասին, թե պաշարների կառավարումն ինչպես է կատարվում:

5. Լիազորված մարմինները հսկում են -րդ կետում նշված թույլտվության օգտագործումը և կարող են չեղարկել այն, եթե արտադրողն այն կիրառում է ոչ պատշաճ կերպով կամ չի կատարում սույն գլխով սահմանված մյուս պայմանները:

Հոդված 4.13

Երրորդ կողմի հաշիվ-ապրանքագիրը

Ներմուծող Կողմը պարտավոր է ծագող ապրանքին տրամադրել պրեֆերենցիալ սակագնային ռեժիմ այն դեպքում, երբ հաշիվ-ապրանքագիրը տրվում է կամ կողմ չհանդիսացող երկրում գտնվող ընկերության կողմից, կամ արտահանողի կողմից արտահանող Կողմում նշված ընկերության հաշվին ու պայմանով, որ ապրանքը համապատասխանում է սույն Գլխի պահանջներին:

Հոդված 4.14

Փաթեթանյութեր և մանրածախ առևտրի համար կոնտեյներներ

1. Յուրաքանչյուր Կողմ պարտավոր է նախատեսել, որպեսզի փաթեթանյութերը և կոնտեյներները, որոնց մեջ ապրանքները տեղադրված են մանրածախ առևտրի համար, ապրանքների հետ դասակարգման դեպքում, պետք է դիտարկվեն որպես այդ ապրանքների մաս և ունենա նույն ծագումը:

2. Յուրաքանչյուր կողմ պարտավոր է նախատեսել, որ եթե ապրանքները հանդիսանում են ավելացված արժեքի մասնաբաժնի մասով պահանջի առարկա, ապա փաթեթանյութերի և այդ ապրանքները պարունակող մանրածախ առևտրի համար

կոնտեյներների արժեքը, եթե դրանք դասակարգվում են ապրանքների հետ՝ ապրանքների ավելացված արժեքի մասնաբաժնի հաշվարկման նպատակով, պետք է գրանցվեն որպես ծագող կամ չծագող՝ կախված իրավիճակից:

Հոդված 4.15

Փաթեթանյութեր և փոխադրման համար կոնտեյներներ

Յուրաքանչյուր կողմ պարտավոր է նախատեսել, որպեսզի փաթեթանյութերը և կոնտեյներները, որոնք նախատեսված են բացառապես ապրանքների փոխադրման համար, հաշվի չառնվեն ապրանքի ծագումը որոշելիս:

Հոդված 4.16

Հարմարանքներ, պահեստամասեր, գործիքներ և հրահանգավորման կամ այլ տեղեկատվական նյութեր

1. Յուրաքանչյուր կողմ պետք է նախատեսի, որ.

(ա) ապրանքի լրիվ ստացված կամ արտադրված լինելը, կամ Հավելված 4-4-ում (Ապրանքների ծագման հատուկ չափորոշիչները) նշված պահանջներին՝ գործընթացի կամ ապրանքների դասակարգման փոփոխության համապատասխանությունը որոշելիս, հարկավոր է անտեսել հարմարանքները, պահեստամասերը, գործիքները կամ հրահանգավորման կամ այլ տեղեկատվական նյութերը, ինչպես նկարագրված է 3-րդ կետում, և

(բ) ավելացված արժեքի մասնաբաժնի մասով պահանջներին ապրանքի համապատասխանությունը որոշելիս, հարմարանքների, պահեստամասերի, գործիքների կամ հրահանգավորման կամ այլ տեղեկատվական նյութերի արժեքը, ինչպես նշված է 3-րդ կետում, ավելացված արժեքի մասնաբաժինը հաշվարկելու նպատակով, պետք է հաշվի առնվի որպես ծագող կամ չծագող նյութերի՝ կախված իրավիճակից:

2. Յուրաքանչյուր կողմ պետք է նախատեսի, որպեսզի հարմարանքները, պահեստամասերը, գործիքները կամ հրահանգավորման կամ այլ տեղեկատվական նյութերը , ինչպես նշված է 3-րդ կետում, ունենան նույն ծագումն ինչ որ ապրանքները, որոնց հետ միասին դրանք մատակարարվել են:

3 Հարմարանքները, պահեստամասերը, գործիքները և հրահանգավորման կամ այլ տեղեկատվական նյութերը ենթարկվում են կարգավորման սույն հոդվածի նպատակների համար, եթե.

(ա) հարմարանքները, պահեստամասերը, գործիքները և հրահանգավորման կամ այլ տեղեկատվական նյութերը դասակարգվում և մատակարարվում են ապրանքների հետ միասին, սակայն դրանց հանդեպ ներկայացված չէ ապրանքներից առանձին առևտրային հաշիվ, և

(բ) հարմարանքների, պահեստամասերի, գործիքների և հրահանգավորման և այլ տեղեկատվական նյութերի տեսակները, քանակը և արժեքը սովորական են տվյալ ապրանքների համար:

Հոդված 4.17

Ապրանքների հավաքածուներ

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է նախատեսի, որպեսզի Ներդաշնակեցված համակարգի մեկնաբանման հիմնական կանոնների 3(a) կամ 3(b) Կանոններին համապատասխան դասակարգվող հավաքածուն դիտարկվի որպես ծագող՝ այդ հավաքածուի նկատմամբ կիրառվող Ապրանքների ծագման հատուկ չափորոշիչներին համապատասխան:

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է նախատեսի, որպեսզի Ներդաշնակեցված համակարգի մեկնաբանման հիմնական կանոնների 3(c) Կանոնին համապատասխան դասակարգվող հավաքածուն ճանաչվի որպես ծագող, եթե հավաքածուի յուրաքանչյուր ապրանքը հանդիսանում է ծագող, ընդ որում և ապրանքները և հավաքածուն համապատասխանում են սույն Գլխի մյուս կիրառելի պահանջներին:

3. Չնայած 2-րդ կետի դրույթներին, Ներդաշնակեցված համակարգի մեկնաբանման հիմնական կանոնների 3(c) Կանոնին համապատասխան դասակարգվող հավաքածուն, ճանաչվում է ծագող, եթե չծագող ապրանքների արժեքը չի գերազանցում հավաքածուի արժեքի տաս (10) տոկոսը FOB պայմաններով մատակարարման դեպքում:

Հոդված 4.18

Անուղղակի նյութեր

Ապրանքի ծագումը որոշելու նպատակների համար հաշվի չի առնվում հետևյալ

անուղղակի նյութերի ծագումը, որոնք կարող են օգտագործվել այդպիսի ապրանքի արտադրման ժամանակ և չեն ներառվում այդ ապրանքի բաղադրության մեջ.

ա) վառելիք և էլեկտրական էներգիա, կատալիզատորներ և լուծիչներ,

բ) գործիքներ, դրոշմակնիքներ և ճնշակադապարներ,

գ) պահեստամասեր և նյութեր, որոնք օգտագործվում են սարքավորումների և շինությունների տեխնիկական սպասարկման ժամանակ,

դ) քսանյութեր, հավելանյութեր և այլ նյութեր, որոնք օգտագործվում են սարքավորումների և շինությունների տեխնիկական սպասարկման ժամանակ,

ե) անվտանգության ապահովման համար ձեռնոցներ, ակնոցներ, կոշիկներ, հագուստ, հանդերձանք և սարքավորումներ,

զ) ապրանքների թեստավորման կամ ստուգման համար օգտագործվող սարքավորումներ, սարքեր, և

է) ցանկացած այլ նյութ, որը չի ներառվել այդպիսի ապրանքներում, որի օգտագործումը ապրանքների արտադրության մեջ սակայն կարող է ներկայացվել որպես արտադրական գործընթացի մաս:

ԲԱԺԻՆ Բ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Հոդված 4.19

Պրեֆերենցիալ սակագնային ռեժիմի տրամադրման մասին դիմում

1. 2.6 հոդվածի (Մաքատուրքերի նվազեցումը և վերացումը) համաձայն պրեֆերենցիալ սակագնային ռեժիմ ստանալու համար հայտարարատուն, բացառությամբ 4.20-րդ (Ծագման մասին հայտարարագիր) և 4.21-րդ (Հանգամանքներ, որոնցում ապրանքի ծագման սերտիֆիկատի ներկայացում չի պահանջվում) հոդվածներում նշված դեպքերի, պարտավոր է ներմուծող Կողմի մաքսային մարմինն ներկայացնել ապրանքի ծագման սերտիֆիկատի (ձև EAS) թղթային տարբերակը:

2. Ներմուծող Կողմի մաքսային մարմիններին ներկայացվող ապրանքի ծագման

սերտիֆիկատը պետք է լինի բնօրինակը, վավեր, ինչպես նաև համապատասխանի Հավելված 4-1-ով (Ապրանքի ծագման սերտիֆիկատ (ձև EAS)) սահմանված ձևաչափին, և պետք է լինի պատշաճ կերպով լրացված անգլերեն լեզվով, Հավելված 4-2-ով (Ապրանքի ծագման սերտիֆիկատի (ձև EAS) լրացման հրահանգներ) սահմանված պահանջներին համապատասխան:

3. Ապրանքի ծագման սերտիֆիկատը պետք է վավեր լինի տրման պահից տասներկու (12) ամսվա ընթացքում և պետք է ներկայացվի ներմուծող Կողմի մաքսային մարմիններին այդ ժամանակահատվածում, ներմուծման մաքսային հայտարարագրի ներկայացման պահից ոչ ուշ, բացառությամբ 5-րդ կետում նշված դեպքերի:

4. Երբ շահագրգիռ Կողմերը միմյանց միջև օգտագործում են Ապրանքների ծագման սերտիֆիկացման էլեկտրոնային համակարգը (այսուհետ՝ ՍԷՀ), ինչպես սահմանվել է 4.32-րդ հոդվածով (Սերտիֆիկացման էլեկտրոնային համակարգ), ապրանքի ծագման մասին հավաստագրի բնօրինակի ներկայացնելը թղթային կրիչի վրա չի պահանջվում: Այդ դեպքում այդպիսի սերտիֆիկատի ամսաթիվը և համարը պետք է նշվեն մաքսային հայտարարագրում:

5. Եթե ներմուծողը ներմուծման ժամանակ չի կարող ներկայացնել ապրանքի ծագման սերտիֆիկատը, ներմուծող Կողմը գանձելու է մաքսատուրքեր առավել բարենպաստության ռեժիմի դրույքաչափերի չափով կամ, որտեղ դա կիրառելի է, կպահանջի վճարել ներմուծող ապրանքի համար դեպոզիտը: Այս դեպքում ներմուծողը կարող է դիմել պրեֆերանցիալ սակագնային ռեժիմի տրամադրման համար և ստանալ մաքսատուրքի կամ դեպոզիտի չափը գերազանցող չափով փոխհատուցում, ներմուծող Կողմի ազգային օրենսդրությանը համապատասխան ներմուծման մաքսային հայտարարագրի գրանցման օրվանից տասներկու (12) ամսվա ընթացքում, ներմուծող Կողմի օրենսդրության համաձայն, պայմանով, որ կատարվում են 4.27-րդ հոդվածի (Պրեֆերենցիալ սակագնային ռեժիմի տրամադրում) դրույթների պահանջները:

Հոդված 4.20

Ծագման մասին հայտարարագիր

1. Պրեֆերենցիալ սակագնային ռեժիմ ստանալու համար, երբ ծագող ապրանքի առևտրային և ոչ առևտրային խմբաքանակների մաքսային արժեքը չի գերազանցում հինգ հազար (5000) ԱՄՆ դոլարը կամ համարժեք գումարը ներմուծող Կողմի արժույթով, ծագման մասին սերտիֆիկատի փոխարեն կարող է ներկայացվել Ապրանքի ծագման մասին հայտարարագիրը:

2. Կողմերն ապահովում են, որպեսզի այդպիսի ներմուծումը իրենից չներկայացնի մի կամ մի քանի խմբաքանակների մաս, որոնք հիմնավոր կերպով կարող են համարվել բաժանված կամ կազմակերպված՝ ապրանքի ծագման սերտիֆիկատի ներկայացումից խուսափելու նպատակով:

3. Ապրանքի ծագման մասին հայտարարագիրը, որը ձևակերպվում է արտադրողի կամ արտահանողի կողմից, իրենից ներկայացնում է առևտրային կամ այլ փաստաթուղթ, որը կապված է ապրանքի հետ և պարունակում է ապրանքի ծագման մասին տեղեկատվություն՝ սույն Հավելված 4-3-ում (Ապրանքի ծագման մասին հայտարարագիր) նշված օրինակին համապատասխան: Ապրանքի ծագման մասին հայտարարագրերը պետք է պարունակեն արտադրողի, արտահանողի կամ նրանց լիազորված ներկայացուցչի ստորագրության բնօրինակը:

4. Արանքի ծագման մասին հայտարարագրում պետք է ներառվեն ծագող ապրանքները մեկ խմբաքանակից և այն պետք է վավեր լինի տրման օրվանից տասներկու (12) ամսվա ընթացքում:

5. Արտադրողը կամ արտահանողը, որոնք ձևակերպում են Ապրանքի ծագման մասին հայտարարագիրը, ներմուծող Կողմի մաքսային մարմնի հարցման դեպքում, արտահանող Կողմի վերիֆիկացիայի մարմնի միջոցով պետք է ներկայացնի բոլոր համապատասխան փաստաթղթերը, որոնք հաստատում են նշված ապրանքների ծագումը, ինչպես նաև սույն գլխի մյուս պահանջների կատարումը:

6. Եթե ներմուծող Կողմի մաքսային մարմինները հիմնավորված կասկածներ ունեն ապրանքների ծագման հայտարարագրի իսկության կամ տվյալ ապրանքի՝ ծագման չափանիշներին համապատասխանության վերաբերյալ, ապա նրանք կարող են ներմուծողից պահանջել տրամադրել ապրանքների ծագման վկայագիր: Նման հայցը պետք է կատարվի գրավոր և պետք է պարունակի այն հիմքերը, թե ինչու է այն արվել:

Հոդված 4.21

Հանգամանքներ, որոնցում ապրանքի ծագման սերտիֆիկատի ներկայացում չի պահանջվում

Ապրանքի ծագման հաստատումը պրեֆերենցիալ սակագնային ռեժիմի ստացման համար չի պահանջվում ծագող ապրանքների առևտրային կամ ոչ առևտրային ներմուծման ժամանակ, որոնց մաքսային արժեքը չի գերազանցում երկու հարյուր (200) ԱՄՆ դոլարը կամ համարժեք գումարն արտարժույթով, պայմանով, որ տվյալ մատակարարումը չի հանդիսանում մեկ կամ մի քանի խմբաքանակի մաս, ինչը կարող է հիմնավորված կերպով դիտարկվել որպես արանքի ծագման մասին փաստաթղթերի

տրամադրումից խուսափելու միջոց:

Հոդված 4.22

Ապրանքի ծագման սերտիֆիկատի տրամադրումը

1. Ապրանքի ծագման սերտիֆիկատը տրվում է լիազորված մարմնի կողմից արտահանող Կողմի ապրանքի արտադրողին կամ արտահանողին մինչև ապրանքների արտահանումը կամ արտահանման պահին, բոլոր դեպքերում, երբ արտահանվող ապրանքները կարող են համարվել Կողմի տարածքից ծագող՝ սույն գլխի իմաստով:
- 2 Ապրանքի ծագման սերտիֆիկատը տրվում է ապրանքի մեկ խմբաքանակի համար:
3. Յուրաքանչյուր Ապրանքի ծագման սերտիֆիկատ պետք է ունենա եզակի գրանցման համար, որը տրվել է առանձին, լիազորված մարմնի կողմից:
4. Եթե Ապրանքի ծագման սերտիֆիկատում նշված բոլոր ապրանքները չեն կարող թվարկվել ծագման մասին սերտիֆիկատի (ձև EAS) մեկ էջի վրա, ինչպես դա նախատեսվել է սույն Հավելված 4-1-ում (Ապրանքի ծագման սերտիֆիկատ (ձև EAS)), Ապրանքի ծագման սերտիֆիկատի (ձև EAS) մյուս թերթերը կարող են օգտագործվել որպես Ապրանքի ծագման սերտիֆիկատի լրացուցիչ էջեր:
5. Ապրանքի ծագման սերտիֆիկատը (ձև EAS) պետք է բաղկացած լինի մեկ բնօրինակից և երկու պատճենից:
6. Ապրանքի ծագման սերտիֆիկատի (ձև EAS) մի պատճենը պետք մնա արտահանող Կողմի լիազորված մարմնի մոտ: Մյուս պատճենը պետք է պահվի արտահանողի մոտ:
7. Չհակասելով սույն 4.19-րդ հոդվածի (Պրեֆերենցիալ սակագնային ռեժիմի տրամադրման մասին դիմում) 3-րդ կետին, երբ բացառիկ դեպքերում Ապրանքի ծագման սերտիֆիկատը (ձև EAS) չի տրվել ապրանքի արտահանումից առաջ կամ արտահանման պահին, այն կարող է տրվել ապրանքի ուղարկումից (բեռնափոխադրումից) հետո տասներկու (12) ամսվա ընթացքում, ընդ որում սերտիֆիկատում նշվում է «ՏՐՎԵԼ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ» ("ISSUED RETROACTIVELY").
8. ՍԷՀ-ի ստեղծումից հետո, ինչպես նախատեսվել է 4.32-րդ հոդվածով (Ծագման սերտիֆիկացման էլեկտրոնային համակարգ), սույն հոդվածի դրույթները գերակայում են:
- 9 Հավելված 4-1-ում (Ապրանքի ծագման սերտիֆիկատ (ձև EAS) նշված ձևերի վրա հիմնված Ապրանքի ծագման սերտիֆիկատը պետք է լինել ստորագրված և դրոշմված: Ստորագրությունը կարող է դրվել էլեկտրոնային եղանակով:

10. Եթե արտահանող Կողմի լիազորված մարմինը պարզում է, որ ներմուծող Կողմին արդեն տրամադրված Ապրանքի ծագման սերտիֆիկատը, այդ թվում՝ ներմուծող կողմի մաքսային մարմնի կողմից վերիֆիկացիայի հարցման շրջանակներում նույնականացված սերտիֆիկատը տրվել է ապրանքի ծագման վրա ազդող՝ անվավեր կամ սխալ փաստաթղթերի կամ տեղեկատվության հիման վրա, ապա արտահանող Կողմի լիազորված մարմինը պետք է չեղյալ համարի այդ սերտիֆիկատը և անմիջապես տեղեկացնի այդ մասին այդ սերտիֆիկատում նշված ներմուծող Կողմի Կենտրոնական մաքսային մարմնին:

Հոդված 4.23

Աննշան տարբերություններ

Յուրաքանչյուր կողմ պետք է նախատեսի, որ.

(ա) եթե ապրանքի ծագումը կասկածներ չի առաջացնում, Ապրանքի ծագման սերտիֆիկատի և ներմուծող Կողմի մաքսային մարմնին ներկայացված փաստաթղթերում պարունակվող տեղեկատվության մեջ աննշան տարբերությունների հայտնաբերումն *ipso facto* (ինքնին) չպետք է հանդիսանա Ապրանքի ծագման սերտիֆիկատը անվավեր ճանաչելու համար հիմք, եթե դրանում նշված տեղեկությունները, փաստորեն համապատասխանում են ներկայացված ապրանքներին և

(բ) եթե Ապրանքի ծագման սերտիֆիկատում նշվել է մի քանի ապրանք, ապա թվարկված ապրանքներից մեկի նկատմամբ առաջացած խնդիրը չպետք է ազդի Ապրանքի ծագման սերտիֆիկատում նշված մյուս ապրանքների դրանց նկատմամբ մաքսային ընթացակարգերի իրականացմանը կամ պրեֆերենցիալ սակագնային ռեժիմի տրամադրմանը կամ դրանց իրականացման կամ տրամադրման հետաձգմանը:

Հոդված 4.24

Ապրանքի ծագման մասին սերտիֆիկատի տրամադրման հատուկ դեպքեր

1. Ապրանքի ծագման սերտիֆիկատի գողության, կորստի կամ ոչնչացման դեպքում, ապրանքների արտադրողը կամ արտահանողը կարող է դիմել լիազորված մարմնին, Ապրանքի ծագման սերտիֆիկատի պաշտոնապես վավերացված կրկնօրինակի ստացման համար, նշելով նման դիմում ներկայացնելու պատճառները: Կրկնօրինակը պետք է պատրաստվի նախկինում տրված Ապրանքի ծագման սերտիֆիկատի և ուղեկցող փաստաթղթերի հիման վրա:

2. Վավերացված կրկնօրինակը պետք է պարունակի հետևյալ բառերը՝ «ԱՊՐԱՆՔԻ

ԾԱԳՄԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿ ՀԱՄԱՐ__ ԱՄՍԱԹԻՎ__» (“DUPLICATE OF THE CERTIFICATE OF ORIGIN NUMBER_DATE_”): Ապրանքի ծագման սերտիֆիկատի վավերացված կրկնօրինակն ուժի մեջ է Ապրանքի ծագման սերտիֆիկատի տրման օրվանից տասներկու (12) ամսից ոչ ավել:

3. Ներմուծման Կողմում ապրանքը ազատ շրջանառության մեջ դրվելուց հետո և մինչև փաստաթղթերի՝ 4.26-րդ հոդվածում (Փաստաթղթերի պահման վերաբերյալ պահանջներ) նշված պահպանման ժամկետի ավարտը, Ապրանքի ծագման սերտիֆիկատի մեջ պատահական սխալների կամ վրիպակների հայտնաբերման դեպքում, լիազորված մարմինը պարտավոր է բնօրինակի փոխարեն տրամադրել նոր Ապրանքի ծագման սերտիֆիկատ: Այդ դեպքում Ապրանքի ծագման սերտիֆիկատը պետք է ունենա նշում. «ՏՐՎԵԼ Է ԱՊՐԱՆՔԻ ԾԱԳՄԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏԻ ՀԱՄԱՐ_ ԱՄՍԱԹԻՎ_ՓՈԽԱՐԵՆ» (“ISSUED IN SUBSTITUTION FOR THE CERTIFICATE OF ORIGIN NUMBER_DATE_”).

Հոդված 4.25

Փոփոխություններ Ապրանքի ծագման սերտիֆիկատում

Ապրանքի ծագման սերտիֆիկատում չպետք է լինեն վրիպակներ և ուղղումներ: Ցանկացած փոփոխությունը կատարվում է սխալ տվյալները գծելով ջնջելու և ցանկացած պահանջվող լրացուցիչ տեղեկատվության տպագրման միջոցով: Այդպիսի փոփոխությունը պետք է վավերացվի Ապրանքի ծագման սերտիֆիկատի ստորագրման համար լիազորված անձի կողմից, լինի հաստատված Ապրանքի ծագման սերտիֆիկատը տրամադրած լիազորված մարմնի պաշտոնական կնիքով:

Հոդված 4.26

Փաստաթղթերի պահման վերաբերյալ պահանջները

1. Ապրանքի ծագման սերտիֆիկատի տրամադրման վերաբերյալ դիմում ներկայացրած արտադրողը կամ արտահանողը պարտավոր է պահել լիազորված մարմնին տրամադրած բոլոր փաստաթղթերը և դրանց պատճեններն Ապրանքի ծագման սերտիֆիկատի տրման պահից առնվազն երեք (3) տարվա ընթացքում:

2. Ներմուծողը, որին տրամադրվել է պրեֆերենցիալ սակագնային ռեժիմ, պարտավոր

է առնվազն երեք (3) տարվա ընթացքում պահել ապրանքի ծագման մասին այն սերտիֆիկատի պատճենը, որի հիման վրա տրամադրվել է պրեֆերենցիալ սակագնային ռեժիմը:

3. Պահվող փաստաթղթերը կարող են ներառել էլեկտրոնային փաստաթղթեր և պետք է պահվեն յուրաքանչյուր Կողմի ազգային օրենսդրությանը և պրակտիկային համապատասխան:

4. Ապրանքի ծագման սերտիֆիկատի տրամադրման վերաբերյալ դիմումը և այդ դիմումին վերաբերող բոլոր փաստաթղթերը պետք է լիազորված մարմնի կողմից պահվեն Ապրանքի ծագման սերտիֆիկատի տրման օրվանից առնվազն երեք (3) տարվա ընթացքում:

5. Արտադրողը կամ արտահանողը, որը տվել է ապրանքի ծագման մասին հայտարարագիրը, պարտավոր է պահել համապատասխան ապրանքների ծագումը հաստատող բոլոր փաստաթղթերը և դրանց պատճեններն ապրանքի ծագման մասին հայտարարագրի տրման պահից առնվազն երեք (3) տարվա ընթացքում:

ԲԱԺԻՆ Գ. Պրեֆերենցիալ սակագնային ռեժիմ

Հոդված 4.27

Պրեֆերենցիալ սակագնային ռեժիմի տրամադրում

1. Պրեֆերենցիալ սակագնային ռեժիմը սույն Համաձայնագրի շրջանակներում պետք է կիրառվի ծագող ապրանքների նկատմամբ, որոնք բավարարում են սույն գլխի պահանջներին:

2. Ներմուծող Կողմի մաքսային մարմինները տրամադրում են պրեֆերենցիալ սակագնային ռեժիմ ապրանքներին, որոնք ծագում են արտահանող Կողմից, հետևյալ պայմանների կատարման դեպքում.

ա) ներմուծվող ապրանքը համապատասխանում է ծագման չափորոշիչներին, որոնք նշված են 4.3-րդ հոդվածում (Ապրանքների ծագման չափորոշիչներ),

բ) հայտարարատուն կատարում է սույն գլխի պահանջները , և

գ) սույն գլխի Բաժին Բ-ի պահանջների համապատասխան ներմուծող Կողմի մաքսային մարմիններին ներկայացվել է վավեր և պատշաճորեն լրացված Ապրանքի

ծագման սերտիֆիկատի բնօրինակը (կամ ծագման հայտարարագիրը):

3. Չնայած 2-րդ կետի դրույթներին, եթե ներմուծող կողմի մաքսային մարմինները ունեն հիմնավորված կասկածներ այն ապրանքի ծագման վերաբերյալ, որի նկատմամբ պահանջվել է պրեֆերենցիալ սակագնային ռեժիմ, կամ կասկածներ ներկայացված Ապրանքի ծագման սերտիֆիկատի (կամ Ծագման հայտարարագրի) վերաբերյալ, այդ մաքսային մարմինները կարող են մերժել կամ կասեցնել համապատասխան ապրանքների նկատմամբ պրեֆերենցիալ սակագնային ռեժիմի կիրառումը: Այնուամենայնիվ, ապրանքները կարող են բաց թողնվել տվյալ հարցերի վերաբերյալ այդպիսի Կողմի ազգային օրենսդրության և նորմատիվային ակտերի պահանջներին համապատասխան:

Հոդված 4.28

Պրեֆերենցիալ սակագնային ռեժիմի տրամադրման մերժում

1. Այն դեպքում, եթե ապրանքը չի համապատասխանում սույն գլխի պահանջներին կամ եթե ապրանքների ներմուծողը կամ արտահանողը չեն ապահովում սույն գլխի պահանջների ապահովումը, ներմուծող Կողմի մաքսային մարմինը կարող է մերժել պրեֆերենցիալ ռեժիմի տրամադրումը և գանձել չվճարված մաքսատուրքերն ներմուծող Կողմի օրենսդրությանը համապատասխան:

2. Ներմուծող Կողմի մաքսային մարմիններն իրավուն ունեն մերժել պրեֆերենցիալ ռեժիմի տրամադրումը, եթե.

ա) ապրանքները չեն համապատասխանում սույն գլխի պահանջներին, ինչը թույլ չի տալիս դրանք դիտարկել որպես արտահանող Կողմից ծագող ապրանքներ,

բ) չեն կատարվում սույն գլխի մյուս պահանջները, այդ թվում՝

i. 4.11-րդ հոդվածի (Անմիջական մատակարարում) պահանջները, կամ

ii. չեն պահպանվում Հավելված 4-1-ում (Ծագման սերտիֆիկատ (ձև EAS)) նշված ձևաչափը, որով պետք է ներկայացվեն Ապրանքի ծագումը հաստատող փաստաթղթերը կամ Հավելված 4-2-ում (Ծագման սերտիֆիկատ (ձև EAS) լրացման մասին հրահանգներ) կամ 4-3-ում (Ծագման հայտարարագիր) նշված պահանջները.

գ) վերիֆիկացիայի ընթացակարգեր, որոնք իրականացվել են 4.33-րդ (Ծագման վերիֆիկացիա) և 4.34-րդ (Արտագնա ստուգում) հոդվածներին համապատասխան, թույլ չեն տալիս որոշել ապրանքի ծագումը կամ վկայում են այն մասին, որ ապրանքը չի համապատասխանում ծագման չափորոշիչներին,

դ) արտահանող Կողմի վերիֆիկացիայի մարմինը հաստատել է, որ ապրանքի ծագման սերտիֆիկատ չի տրվել (այսինքն՝ Ապրանքի ծագման սերտիֆիկատը կեղծ է) կամ չեղարկվել էր (հետ էր կանչվել),

ե) ներմուծող Կողմի մաքսային մարմինները վերիֆիկացիայի մասին հարցումն ուղարկելու օրվանից առավելագույնը վեց (6) ամսվա ընթացքում չեն ստացել արտահանող Կողմի վերիֆիկացիայի մարմնի պատասխանը, կամ ստացված պատասխանը չի պարունակում տեղեկություններ, որոնք բավական են ապրանքի՝ Կողմից ծագելը որոշելու համար, կամ

զ) ներմուծող Կողմի մաքսային մարմինը 4.34-րդ հոդվածի (Արտագնա ստուգում) 2-րդ կետով նախատեսված ծանուցումն ուղարկելու պահից վաթսուն (60) օրվա ընթացքում վերիֆիկացիայի մարմնից չի ստացել արտագնա ստուգման անցկացման վերաբերյալ 4.34-րդ հոդվածի (Արտագնա ստուգում) 4-րդ կետին համապատասխան գրավոր համաձայնությունը կամ ստացել է այդպիսի արտագնա ստուգումն անցկացնելու մերժում:

3. 2(բ) ենթակետում նշված դեպքերում, ներմուծող Կողմի մաքսային մարմինները պարտավոր չեն արտահանող Կողմի լիազորված մարմնի հասցեին ուղարկել 4.33 (Ծագման վերիֆիկացիա) հոդվածով նախատեսված վերիֆիկացիայի հարցումը՝ պրեֆերենցիալ սակագնային ռեժիմի տրամադրումը մերժելու որոշումը կայացնելու նպատակների համար:

ԲԱԺԻՆ Դ

ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հոդված 4.29

Վարչական համագործակցության լեզուն

Կողմերի միջև սույն բաժնի շրջանակներում բոլոր ծանուցումները և հաղորդակցությունը պետք է իրականացվեն համապատասխան մարմինների կողմից անգլերեն լեզվով:

Հոդված 4.30

Լիազորված և վերիֆիկացիայի մարմիններ

Կողմերից յուրաքանչյուրը նշանակում է լիազորված կամ վերիֆիկացիայի մարմին կամ ապահովում է դրանց գործելը:

Հոդված 4.31

Ծանուցումներ

1. Սույն Համաձայնագրին համապատասխան լիազորված մարմնի կողմից որևէ ապրանքի ծագման սերտիֆիկատի տրամադրումից առաջ, Կողմերից յուրաքանչյուրը Սինգապուրի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի համապատասխան իրավասու մարմնի միջոցով մյուս Կողմին է ուղարկում, համապատասխանաբար.

ա) բոլոր իրավասու և վերիֆիկացիայի մարմինների անվանումների և հասցեների մասին տեղեկատվություն (ներառյալ՝ վերիֆիկացիայի նպատակների համար էլեկտրոնային փոստի հասցեները),

բ) նրանց կողմից օգտագործվող դրոշմերի և կնիքների բնօրինակ և ընթեռնելի նմուշները,

գ) հետագայում օգտագործվելիք ապրանքի ծագման սերտիֆիկատի բլանկի նմուշը, և

դ) ապրանքի ծագման սերտիֆիկատի պաշտպանության առանձնահատկությունների մասին տեղեկություններ:

2. Սինգապուրը Եվրասիական տնտեսական հանձնաժողովին է ուղարկելու սույն հոդվածի 1-ին կետում նշված սկզբնական տեղեկատվությունը վեց օրինակներից: Եվրասիական տնտեսական հանձնաժողովը կարող է դիմել Սինգապուրին, հայցելով նշված տեղեկատվության լրացուցիչ օրինակների տրամադրումը:

3. Եվրասիական տնտեսական հանձնաժողովը և Սինգապուրը պետք է ինտերնետային ցանցում հրապարակեն Կողմերից յուրաքանչյուրի լիազորված և վերիֆիկացիայի մարմինների անվանումների և հասցեների մասին տեղեկատվությունը:

4. Վերը նշված տեղեկատվության ցանկացած փոփոխություն մասին նույն կարգով պետք է տեղեկացվեն սույն հոդվածի 1-ին կետում նշված մարմինները:

5. Սույն հոդվածի 1-ին և 4-րդ կետերին համապատասխան ներկայացվող տեղեկատվությունը կիրառվելու է Սինգապուրի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի համապատասխան իրավասու մարմնի կողմից այդպիսի տեղեկատվությունով բնագիր թղթային պատճենի ստացման պահից, համապատասխանաբար:

Հոդված 4.32

Ծագման սերտիֆիկացման էլեկտրոնային համակարգ

1. Մաքսային գործառնությունների պարզեցման և պրեֆերենցիալ սակագնային ռեժիմի ստացման նպատակով, Կողմերը մշակում են ՍԷՀ-ը և ապահովում են նրա աշխատանքը:
2. ՍԷՀ-ը հնարավորություն է տալիս ներմուծող Կողմի մաքսային մարմիններին օգտագործել արտահանող կաղմի լիազարված մարմինների կողմից տրված՝ ծագման մասին էլեկտրոնային սերտիֆիկատների վերաբերյալ էլեկտրոնային տվյալների բազայում առկա տեղեկատվությունը (ձև EAS):
3. Եթե Կողմերն օգտագործում են ՍԷՀ-ը միմյանց միջև առևտրում, ծագման մասին սերտիֆիկատների (ձև EAS) թղթային պատճենը չի կիրառվում:
4. Ներմուծող Կողմի կենտրոնական մաքսային մարմինների և արտահանող Կողմի լիազորված մարմնի միջև էլեկտրոնային տվյալների փոխանակումը ՍԷՀ-ի շրջանակներում պետք է իրականացվի ԵԱՏՄ ինտեգրված տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ «ԵԱՏՄ ԻՏՀ») միջոցների օգտագործմամբ:
5. ՍԷՀ-ի կիրառման համար պահանջները և մասնագրերը պետք է շարադրվեն առանձին համաձայնագրում:
6. Կողմերը ձգտում են ներդնել ՍԷՀ-ը ոչ ուշ, քան սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից երկու տարուց հետո:

Հոդված 4.33

Ծագման վերիֆիկացիա

1. Ներմուծող Կողմի մաքսային մարմինների մոտ Ապրանքի ծագման սերտիֆիկատի (Ծագման մասին հայտարարագրի) հավաստիության դեպքում և/կամ Ապրանքների ծագման սերտիֆիկատում (կամ Ծագման մասին հայտարարագրում) նշված ապրանքների նկատմամբ պրեֆերենցիալ սակագնային ռեժիմի տրամադրման համար պահանջներին համապատասխանության վերաբերյալ հիմնավորված կասկածների առաջացման դեպքում, կամ ընտրովի ստուգման դեպքում, դրանք կարող են X.26-րդ հոդվածում նշված փաստաթղթերի պահման ժամկետների շրջանակներում անցկացնել ստուգում հետևյալ եղանակներով.

(ա) կատարելով գրավոր հարցում ներմուծողից լրացուցիչ տեղեկատվություն ստանալու նպատակով,

(բ) կատարելով գրավոր հարցում արտահանողից կամ արտադրողից արտահանող Կողմի վերիֆիկացիայի մարմնի միջոցով լրացուցիչ տեղեկատվություն

ստանալու նպատակով,

(գ) արտահանող Կողմի վերիֆիկացիայի մարմինը ստուգել ապրանքի ծագումը, ինչպես դա նախատեսված է ստորև ներկայացված 3-րդ կետում:

2. Բոլոր վերիֆիկացման հարցումները պետք է ուղղորդվեն տեղեկատվությամբ, որը բավական կլինի դիտարկվող ապրանքների նույնականացման համար: Վերիֆիկացիայի մարմինն ուղարկված հարցումը պետք է ուղեկցվի Ապրանքի ծագման սերտիֆիկատով (Ծագման մասին Հայտարարագրով) և ներառի տեղեկություններ դրա նախաձեռնման հանգամանքների և պատճառների մասին: Վերիֆիկացիայի հարցման պատճենը և դրան կից փաստաթղթերը պետք է փոխանցվեն էլեկտրոնային եղանակով ներմուծող Կողմի մաքսային մարմինների կողմից արտահանող Կողմի վերիֆիկացիայի մարմինն 31-րդ հոդվածի 1(a) կետում նշված կոնտակտային հասցեների միջոցով:

3. Պատասխանելով սույն հոդվածի 33.1(c)-րդ կետի համաձայն հարցմանը, արտահանող Կողմի վերիֆիկացիայի մարմինը պարտավոր է օպերատիվորեն հաստատել՝ արտահանող կողմում տրվել է արդյոք Ապրանքի ծագման սերտիֆիկատ (Ապրանքի ծագման մասին հայտարարագիր) և/կամ արդյոք հնարավոր է համարել նշված ապրանքներն այդ Կողմի տարածքից ծագող: Եթե այդպիսի հարցում կատարվել է ներմուծող Կողմի մաքսային մարմնի կողմից, վերիֆիկացիայի մարմինը պարտավոր է կցել արտահանողի/արտադրողի կողմից ներկայացված փաստաթղթերը, որոնց հիման վրա տրվել է Ապրանքի ծագման սերտիֆիկատը: Ներմուծող Կողմի մաքսային մարմինը որոշում է արդյոք ունեն ապրանքները պրեֆերենցիալ սակագնային ռեժիմի համար իրավունք:

4. Վերիֆիկացիայի արդյունքներին սպասելու ժամանակ ներմուծող Կողմի մաքսային մարմինները կարող են կասեցնել ապրանքների համար պրեֆերենցիալ սակագնային ռեժիմի կիրառումը: Եթե մաքսային մարմինը որոշել է ճանաչել ապրանքը արտահանող Կողմից ծագող, կասեցված պրեֆերենցիալ սակագնային ռեժիմը վերականգնվում է:

5. Արտահանող Կողմի վերիֆիկացիայի մարմինը վերիֆիկացիայի վերաբերյալ հարցումը ստանալուց հետո, պետք է էլեկտրոնային ձևով հաստատի հարցման ստացումը և պատասխանել դրան՝ այդ հարցման օրվանից անմիջապես վեց ամսվա ընթացքում: Վերիֆիկացիայի հարցման պատասխանի պատճենը նույնպես փոխանցվում է վերիֆիկացիայի մարմնի կողմից ներմուծող Կողմի մաքսային մարմինն էլեկտրոնային եղանակով, 31.1(a)-րդ հոդվածում նշված կոնտակտային տվյալների միջոցով:

6. Կողմերի իրավասու մարմինները, նրանց ներքին օրենսդրությամբ և պրակտիկայով թույլատրված շրջանակներում, պետք է լիարժեք համագործակցեն չափորոշիչներին

համապատասխանության վերիֆիկացիայի ցանկացած գործողություններում:

7. Վերիֆիկացիայի ամբողջ գործընթացը պետք է ավարտվի ինն ամսվա ընթացքում:

Հոդված 4.34

Արտագնա ստուգում

1. Այն դեպքում, եթե ներմուծող Կողմի մաքսային մարմինները բավարարված չեն սույն Համաձայնագրի 33-րդ հոդվածում նշված ստուգման արդյունքներով, նրանք բացառիկ հանգամանքներում կարող են արտահանող Կողմին ուղարկել հարցում՝ սույն Համաձայնագրի 24-րդ կետում նշված փաստաթղթերի ուսումնասիրման և/կամ ապրանքների արտադրման ժամանակ օգտագործվող օբյեկտները զննելու համար արտագնա ստուգում անցկացնելու մասին:

2 Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան, ներմուծող Կողմի մաքսային մարմինները մինչև արտագնա ստուգման անցկացումը պետք է ուղարկեն այդպիսի ստուգում անցկացնելու վերաբերյալ իրենց մտադրության մասին գրավոր ծանուցում մյուս Կողմի ստուգող մարմնին, որի տարածքում այդ ստուգումը պետք է իրականացվի: Արտագնա ստուգման մասին հարցման պատճենը պետք է փոխանցվի էլեկտրոնային եղանակով ներմուծող Կողմի մաքսային մարմինների կողմից արտահանող Կողմի վերիֆիկացիայի մարմնին:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված գրավոր ծանուցումը պետք է լինի առավելագույն չափով լիարժեք և, մնացածից բացի, ներառի՝

ա) ծանուցումն ուղարկած Կողմի մաքսային մարմինների անվանումները,

բ) արտադրողի և/կամ արտահանողի անվանումը, որի ձեռնարկությունները պետք է այցելվեն,

գ) արտագնա ստուգման ենթադրվող ամսաթիվը,

դ) արտագնա ստուգման ընդգրկումը, ներառյալ՝ ստուգման առարկա հանդիսացող ապրանքների մասին տեղեկությունները և նրանց ծագման հետ կապված կասկածները,

ե) արտագնա ստուգումը իրականացնող պաշտոնատար անձանց անուններն ու պաշտոնները:

4. Վերիֆիկացիայի մարմինը պետք է հայցի ապրանքների արտադրողի և/կամ

արտահանողի, որոնց ձեռնարկություններն այցելվելու են, արտագնա ստուգման իրականացման վերաբերյալ գրավոր համաձայնությունը և ուղարկի այն հայցող Կողմին՝ սույն հոդվածի 2-րդ կետի համաձայն, նրա կողմից ծանուցումը ուղարկելու օրվանից 60 օրվա ընթացքում:

5. Եթե վերիֆիկացիայի մարմնից գրավոր համաձայնությունը չի ստացվել սույն հոդվածի 2-րդ կետում նշված ծանուցումն ուղարկելուց հետո 60 օրվա ընթացքում, կամ եթե ստացվել է արտագնա ստուգումն անցկացնելու մերժում, ապա ծանուցումն ուղարկող Կողմը մերժում է այն ապրանքների նկատմամբ պրեֆերենցիալ սակագնային ռեժիմի տրամադրումը, որոնք նշված են ստուգման առարկա հանդիսացող Ապրանքի ծագման սերտիֆիկատում (Սերտիֆիկատներում):

6. Ցանկացած արտագնա ստուգում պետք է սկսվի գրավոր համաձայնությունը ստանալուց հետո 60 օրվա ընթացքում և ավարտվի ողջամիտ ժամկետում:

7. Արտագնա ստուգումն իրականացնող մարմինը պետք է արտագնա ստուգման առաջին օրվանից հետո ոչ ուշ քան 90 օրվա ընթացքում ապրանքների արտադրողին և/կամ արտահանողին, որի արանքները և շինությունները հանդիսանում են արտագնա ստուգման առարկա, ինչպես նաև արտահանող Կողմի վերիֆիկացիայի մարմնին ներկայացնի այդպիսի ստուգման արդյունքների վերաբերյալ գրավոր որոշում:

8. Արտագնա ստուգումը, որը ներառում է փաստացի ստուգում և որոշում, թե արդյոք ստուգվող ապրանքները հանդիսանում են ծագող թե ոչ, պետք է իրականացվի և դրա իրականացման արդյունքները պետք է ուղարկվեն իրավասու մարմնին՝ ժամկետում, որը չի գերազանցում 210 օրը: Մինչև ստուգման արդյունքների ստանալը, կարող են կիրառվել սույն Համաձայնագրի 27-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթները:

9. Կասեցված կամ չեղյալ համարված պրեֆերենցիալ սակագնային ռեժիմը պետք է վերականգնվի գրավոր որոշման հիման վրա, որը վկայում է այն բանի մասին, որ տվյալ ապրանքները դասակարգվում են որպես ծագող և որ պահպանվել են ապրանքների ծագման չափորոշիչները սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան:

10. Վերիֆիկացիայի խումբը ձևավորվում է ներմուծող Կողմի կենտրոնական մաքսային մարմնի կողմից, ազգային օրենսդրությանը և նորմատիվային ակտերին համապատասխան:

11. Արտահանող Կողմի վերիֆիկացիայի մարմինը կամ լիազորված մարմինը պարտավոր է աջակցել ներմուծող Կողմի մաքսային մարմինների կողմից արտագնա ստուգման իրականացմանը:

12. Արտագնա ստուգման վերաբերյալ համաձայնությունը տված ապրանքների արտադրողը և/կամ արտահանողը պարտավոր է աջակցել դրա իրականացմանը,

ապահովել արտագնա ստուգման առարկային առնչվող արտադրական շինությունների, ֆինանսական (հաշվապահական) և այլ արտադրական փաստաթղթերի հասանելիությունը, ինչպես նաև պետք է ներկայացնի ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն և/կամ փաստաթղթեր, եթե դա կպահանջվի:

13. Եթե արտագնա ստուգման անցկացման ժամանակ ստուգվող Կողմի մարմինների կամ կազմակերպությունների կողմից ստեղծվում են արգելքներ, որոնք անհնարին են դարձնում այդպիսի ստուգման անցկացումը, ներմուծող Կողմը իրավունք ունի մերժել համապատասխան ապրանքներին պրեֆերենցիալ սակագնային ռեժիմի տրամադրումը:

14 Արտագնա ստուգման հետ կապված բոլոր ծախսերը պետք է վճարի ներմուծող Կողմը:

Հոդված 4.35

Տուգանքներ

Կողմերից յուրաքանչյուրը նախատեսում է սույն գլխին վերաբերող իր համապատասխան օրենսդրության և նորմատիվային ակտերի խախտման համար քրեական կամ վարչական պատասխանատվության միջոցներ:

Հոդված 4.36

Ենթակումիտե ապրանքների ծագման կանոնների մասով

1. Սույնով Կողմերը ստեղծում են Ապրանքների ծագման կանոնների և ծագման ընթացակարգերի հարցերով Ենթակումիտե (այսուհետ՝ «Ծագման կանոնների հարցերով ենթակումիտե»), որը ներառում է յուրաքանչյուր կողմի ներկայացուցիչներին: Սույն Համաձայնագրի ոգուն և նպատակներին համապատասխան՝ սույն գլխի դրույթների արդյունավետ, միատեսակ և հետևողական կատարումն ապահովելու և սույն գլխի վարչարարության նպատակով համագործակցության համար, Կումիտեն անցկացնում է խորհրդատվություններ կանոնավոր հիմքերով:

2. Ծագման կանոնների հարցերով ենթակումիտեն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

(a) քննարկում և Համատեղ կումիտեին խորհրդատվությունների ընդունում, հետևյալ հարցերով՝

i. սույն Համաձայնագրի Հավելված 4-5-ի վերանայում՝ Ապրանքների նկարագրման ր

ծածկագրման ներդաշնակեցված համակարգի մասին Միջազգային կոնվենցիայի հավելվածում ներկայացված անվանացանկում կատարվող փոփոխություններին համապատասխան: Այդպիսի վերանայումն իրականացվում է առանց գործող պարտավորություններին վնաս հասցնելու և պետք է իրականացվի ժամանակին,

ii. սույն գլխի կատարումը և իրականացումը, ներառյալ իմպլեմենտացիայի վերաբերյալ պայմանավորվածությունների ստեղծումը,

iii. Կողմերի՝ սույն բաժնում սահմանված պարտավորությունների չկատարումը,

iv. Սույն համաձայնագրի սույն գլխի և հավելվածներ 4-1-ի, 4-2-ի, 4-3, 4-4-ի ցանկացած ուղղումներ կամ փոփոխություններ,

v. ծագման էլեկտրոնային սերտիֆիկացման ներկայացման և ֆորմատի տեխնիկական կողմերի կամ ՍԷՀ-ի տեխնիկական կողմերի մասին:

(b) Սույն գլխի հետ կապված՝ Կողմի առաջարկած ցանկացած այլ հարցի քննարկում,

(c) Համատեղ Կոմիտեին Կանոնների հարցերով ենթակոմիտեի հաշվետվությունների ներկայացումը, և

(d) այլ գործառույթների կատարում, որոնք կարող են փոխանցվել Համատեղ կոմիտեի կողմից սույն Համաձայնագրի 15.1 հոդվածին համապատասխան:

3. Ծագման կանոնների հարցերով ենթակոմիտեն նիստերն անցկացնում է սույն գլխին համապատասխան առաջացող ցանկացած հարցի քննարկման համար Կողմերի միջև փոխադարձաբար համաձայնեցված հաճախությամբ: Կողմերը փոխադարձաբար նախօրոք համաձայնեցնում են նիստերի անցկացման վայրը և օգտագործվող միջոցները:

4. Յուրաքանչյուր խորհրդակցության օրակարգը Կողմերին է ուղարկվում, որպես կանոն, ոչ ուշ, քան հանդիպումից մեկ ամիս առաջ:

Հոդված 4.37

Ապրանքները փոխադրման կամ պահման ժամանակ

Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 3 ամսվա ընթացքում արտահանող երկրից ներմուծող երկիր տեղափոխվող ծագող ապրանքները, ինչպես նաև նրանք, որոնք գտնվում են ներմուծող Կողմի մաքսային պահեստներում ժամանակավոր

պահման համար, պետք է ստանան պրեֆերենցիալ ռեժիմ 27-րդ հոդվածով նախատեսված բոլոր պայմանների կատարման դեպքում:

ԾԱԳՄԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏ

1. Արտահանող (ֆիրմային անվանումը, հասցեն և երկիրը)			4. N _____ ԵԱՏՄ-Սինգապուր ԱԱԳ Ծագման սերտիֆիկատ Ձև EAS		
2. Ներմուծող (ֆիրմային անվանումը, հասցեն և երկիրը)			Տրվել է _____ ում _____ ներկայացնելու համար (երկիր)		
3. Տրանսպորտային միջոցի տեսակը և երթուղին (որքանով այն հայտնի է), առաքման ամսաթիվը Նավի/ինքնաթիռի etc. անվանումը բեռնաթափման վայրը			5. Պաշտոնական օգտագործման համար		
6. Հերթակա ն համար	7. Փաթեթված քների մակնշվածք ը, քանակը և տեսակը	8. Ապրանքների նկարագիրը	9. Ծագման չափորոշիչները	10. Ապրանքներ ի քանակը	11. Հաշիվ- ապրանքագր ի համարը և ամսաթիվը
12. Վավերագիր Նշվածով վավերացվում է այն փաստը, որ դիմողի հայտարարագիրը [SG: արտահանողի] համապատասխանում է [EAEU: դիմողի] իրականությանը			13. Հայտարարագիրը [SG: արտահանողի] [EAEU: դիմողի] Ստորև ստորագրողը հայտնում է, որ նշված տեղեկությունները համապատասխանում են իրականությանը, բոլոր ապրանքները՝ արտադրված են _____ - ում, (երկիր)		

<p>Վայրը Ամսաթիվը Ստորագրությունը Կնիքը</p>	<p>Եվ որ դրանք համապատասխանում են ԵԱՏՄ-Սինգապուր ԱԱԳ-ի Գլուխ X-ում («Ապրանքների ծագումը որոշելու կանոններ») նախատեսված ծագման կանոններին</p>
<p>14.</p> <p><input type="checkbox"/> Երրորդ կողմի հաշիվ- ապրանքագիր <input type="checkbox"/> De Minimis</p> <p><input type="checkbox"/> Տրվել է փոխարեն <input type="checkbox"/> Կրկնօրինակ</p> <p><input type="checkbox"/> Տրվել է հետագայում <input type="checkbox"/> Կուտակում</p> <p><input type="checkbox"/> Ասիական սննդամթերք <input type="checkbox"/> Մասնակի կուտակում</p>	<p>Վայրը Ամսաթիվը Ստորագրությունը Կնիքը</p>

Ապրանքի ծագման սերտիֆիկատի լրացման հրահանգներ (ձև EAS)

Ապրանքի ծագման սերտիֆիկատ (ձև EAS) և դրա լրացուցիչ թերթերը ձևակերպվում են A4 (ISO) ձևաչափի թղթի վրա, սույն Հավելվածում նշված օրինակին համապատասխան: Այն պետք է կատարվի անգլերեն լեզվով

6-11-րդ վանդակներում չօգտագործված մասերի վրա պետք է գիծ քաշվի՝ դրանցում հետագայում որևէ լրացուցիչ տեղեկության գրանցման հնարավորությունը կանխելու նպատակով:

Ապրանքի ծագման սերտիֆիկատը պետք է .

a) ձևակերպվում է թղթի վրա, սույն Հավելվածում բերված օրինակին համապատասխան, անգլերեն լեզվով,

b) պարունակի նվազագույն անհրաժեշտ տեղեկատվությունը բոլոր վանդակներում,

c) պարունակի պաշտոնատար անձի ստորագրությունը և պաշտոնական կնիքը, ինչպես նաև պաշտպանության տարրեր: Ստորագրությունը պետք է դրված լինի ձեռքով, պաշտոնական կնիքի ֆաքսիմիլիտի կիրառումը չի թույլատրվում:

Սյունյակ 1՝ Նշվում են ապրանքն արտահանող անձի մասին տեղեկությունները՝ ֆիրմային անվանումը, հացեն և երկիրը:

Սյունյակ 2՝ Նշվում են ապրանքները ներմուծող անձի (պարտադիր) և ստացողի (եթե հայտնի է) մասին տեղեկությունները՝ ֆիրմային անվանումը, հացեն և երկիրը

:

Սյունյակ 3՝ Նշվում են տեղեկություններ ապրանքների փոխադրման երթուղու (որքանով այն հայտնի է), ինչպիսիք են առաքման (բեռնման) ամսաթիվը, տրանսպորտային միջոցի տեսակը (նավ, ինքնաթիռ և այլն), բեռնաթափման վայրը (նավահանգիստ, օդանավակայան):

Սյունյակ 4՝ Նշվում է սերտիֆիկատի եզական գրանցման համարը, սերտիֆիկատը տված երկիրը, և այն երկիրը, որի համար այդ սերտիֆիկատը:

Սյունյակ 5՝ Եթե համապատասխան նշումները կատարվել են 14-րդ վանդակում, ապա նշվում է հետևյալը՝

«DUPLICATE OF THE CERTIFICATE OF ORIGIN NUMBER___DATE___» ապրանքի ծագման

սերտիֆիկատի բնօրինակի կրկնօրինակի տրման դեպքում:

«ISSUED IN SUBSTITUTION FOR THE CERTIFICATE OF ORIGIN NUMBER___DATE___» B
ապրանքի ծագման սերտիֆիկատի բնօրինակի փոխարինման դեպքում:

Սյունյակ 6՝ Նշվում է ապրանքի հերթական համարը:

Սյունյակ 7՝ Նշվում է փաթեթվածքների քանակը և տեսակը, և, եթե կիրառելի է, փաթեթվածքների մակնշվածքը:

Սյունյակ 8՝ Նշվում է ապրանքի ծածկագիրը ՆՀ-ին համապատասխան:

Ապրանքների նկարագիրը պետք է լինի բավականին մանրամասն, որպեսզի ստուգումն իրականացնող մաքսատան աշխատակիցը կարողանա այն նույնականացնել:

Այն դեպքերում, երբ ապրանքները դասակարգվում են «EX out» ենթավերնագրում, 8-րդ վանդակում պարունակվող նկարագրությունը պետք է նույնական լինի Հավելված X-ում նշված նկարագրությանը:

Սյունյակ 9՝ 8-րդ վանդակում նշված յուրաքանչյուր ապրանքի համար նշվում են ծագման չափորոշիչները՝ աղյուսակում բերված նշումներին համապատասխան՝

Ծագման չափորոշիչները	Նշված է 9-րդ վանդակում
(a) Ապրանքներն ամբողջությամբ ստացված են կամ արտադրված են Կողմում, սույն Համաձայնագրի X.4-րդ հոդվածին համապատասխան	WO
(b) Ապրանքներն ամբողջությամբ արտադրվել են Կողմի տարածքում բացառապես ծագող նյութերից, որոնք ծագում են մի կամ երկու Կողմերից, ինչպես նախատեսված է սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածում	PE
(c) Ապրանքներն արտադրվել են Կողմում, չծագող նյութերի օգտագործմամբ և բավարարում են սույն Համաձայնագրի Հավելված X-ում սահմանված պահանջները:	«PSR», «CC», «CTH», «CTSH», «VAC» *

*Եթե սույն Համաձայնագրի Հավելված X-ը թույլ է տալիս ծագման այլընտրանքային չափորոշիչներ, ապրանքի համար պետք է նշվի, թե կոնկրետ որ չափորոշիչն է կատարվել:

Եթե օգտագործվել է ավելացված արժեքի մասնաբաժին («VAC») չափորոշիչը, պետք է նշվի ավելացված արժեքի կոնկրետ մասնաբաժինը, որը կատարվել է (օրինակ՝ VAC 51%): Սակայն ավելացված արժեքի մասնաբաժնի ցուցանշումը ինքնին չի կարող

կասկած առաջացնել ծագման չափորոշիչի կատարման կամ ծագման մասին սերտիֆիկատի իսկության վերաբերյալ,

«PSR» հապավումը նշվում է միայն այն դեպքերում, երբ սույն Համաձայնագրի Հավելված X-ով սահմանվել են ծագման չափորոշիչներ, որոնք տարբերվում են «CTC» («CC», «CTH», «CTSH») կամ «VAC»-ից:

Սյունյակ 10՝ Նշվում է ապրանքի քանակը՝ բրուտո քաշը (կիլոգրամով) կամ այլ չափման միավորներ (հատ, լիտր և այլն): Մատակարարված ապրանքի փաստացի քաշը չպետք է գերազանցի ապրանքի ծագման սերտիֆիկատում նշված քաշն ավելի քան 5 տոկոսով:

Սյունյակ 11՝ Նշվում է ապրանքի ծագման սերտիֆիկատի ստացման համար լիազորված մարմնին ներկայացրած հաշիվ-ապրանքագիր(ների) համարը(ները) և ամսաթիվը(երը):

Սյունյակ 12՝ Նշվում են տվյալներ ապրանքի ծագման սերտիֆիկատի տրման ամսաթվի և վայրի մասին, դրվում են լիազորված մարմնի կնիքը, ինչպես նաև պաշտոնատար անձի ստորագրությունը

Սյունյակ 13՝ Նշվում է ապրանքի ծագման երկրի անունը (մի կողմից, Սինգապուրի Հանրապետություն, մյուս կողմից, ԵԱՏՄ անդամ պետություն), հայտարարագրի վայրը և ամսաթիվը, դիմողի կնիքը և ստորագրությունը:

Սյունյակ 14՝ Դրվում է (✓) նիշը, եթե.

- հաշիվ-ապրանքագիրը տրվել է ազատ առևտրի մասին համաձայնագրի մասնակից չհանդիսացող երկրի ռեզիդենտի կողմից (Համաձայնագրի 14-րդ հոդված):

- չափորոշիչի որոշման ժամանակ օգտագործվել է «de Minimis» կանոնը (Համաձայնագրի 11-րդ հոդված):

- ապրանքի ծագման սերտիֆիկատի բնօրինակը փոխարինվել է պատահական սխալների կամ վրիպակների հետևանքով (Համաձայնագրի 24-րդ հոդված)

ապրանքի ծագման սերտիֆիկատը տրվել էր ապրանքի արտահանումից հետո (Համաձայնագրի 22-րդ հոդված)

- փաստաթուղթը՝ սերտիֆիկատի բնօրինակի կրկնօրինակն է (Համաձայնագրի 24-րդ հոդված)

- չափորոշիչի որոշման ժամանակ օգտագործվել է կուտակման կանոնը (Համաձայնագրի 9-րդ հոդված)

- չափորոշիչի որոշման ժամանակ օգտագործվել են «ասիական սննդամթերքի» համար

ծագման հատուկ չափորոշիչները

- մասնակի կուտակման կանոնի կիրառում (Համաձայնագրի 25-րդ հոդված)

ՀԱՎԵԼՎԱԾ 4-3

ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

« _____ արտադրողը կամ արտահանողը հայտարարում է, որ ապրանքի, որի վրա տարածվում է տվյալ փաստաթուղթը, ծագման երկիր է հանդիսանում _____՝ ԵԱՏՄ և Սինգապուրի միջև ազատ առևտրի մասին համաձայնագրի ապրանքի ծագման որոշման կանոնների պահանջներին համապատասխան»

(Ստորագրողի անունը, ստորագրությունը, ամսաթիվը)

Նշումներ՝

1. Ապրանքի արտադրողի կամ արտահանողի ֆիրմային անվանումը ուղեկցող փաստաթղթերին համապատասխան:
2. Ապրանքի ծագման երկրի անունը:
3. Ստորագրողի լրիվ անունը, ստորագրությունը և տրման ամսաթիվը:

ՀԱՎԵԼՎԱԾ 4-4

Հավելված 4-4-ը ներկայացված է առանձին հավելվածում:

ԳԼՈՒԽ 5

**ՄԱՔՍԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ և ԱՌԵՎՏՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ
ՊԱՐԶԵՑՈՒՄ**

**Հոդված 5.1
Նպատակներ**

Սույն գլխի նպատակներն են .

ա) Կողմերի մաքսային օրենսդրության կիրառման մեջ կանխատեսելիության, համաձայնեցվածության և թափանցիկության ապահովում .

բ) մաքսային ընթացակարգերի արդյունավետ վարչարարությանը և ապրանքների արագացված մաքսային ձևակերպման աջակցության ցուցաբերում .

գ) Կողմերի մաքսային ընթացակարգերի պարզեցում և, որքանով հնարավոր է, համապատասխան միջազգային չափանշվածքների հետ դրանց ներդաշնակեցումը .

դ) Կողմերի մաքսային մարմինների միջև համագործակցությանն աջակցություն .

ե) Կողմերի միջև ապրանքաշրջանառության պարզեցում, այդ թվում՝ մատակարարումների գլոբալ և տարածաշրջանային շղթաների համար պայմանների բարելավման միջոցով:

Հոդված 5.2 Ընդգրկում

Սույն գլուխը, կիրառելի ազգային օրենքներին համապատասխան, կիրառվում է մաքսային ընթացակարգերի նկատմամբ, որոնք կիրառվում են Կողմերի միջև առևտրի առարկա հանդիսացող ապրանքների նկատմամբ:

Հոդված 5.3 Սահմանումները

«Մաքսային օրենսդրություն և կանոններ» նշանակում է օրենսդրական և նորմատիվ ակտեր, որոնք կիրառելի են կամ ենթակա են իրականացման յուրաքանչյուր Կողմի համապատասխան մաքսային մարմնի կողմից;

«Մաքսային մարմին» նշանակում է իրավասու մարմին, որը յուրաքանչյուր Կողմի օրենսդրությանը համապատասխան պատասխանատվություն է կրում մաքսային օրենսդրության և կանոնների վարչարարության համար;

«Մաքսային ընթացակարգեր» նշանակում է ռեժիմ, որը կիրառվում է յուրաքանչյուր Կողմի մաքսային մարմնի կողմից այն ապրանքների նկատմամբ, որոնք ընկնում են այդ Կողմի մաքսային օրենսդրության և կանոնների գործողության տակ:

Հոդված 5.4

Մաքսային ընթացակարգեր և առևտրի ընթացակարգերի պարզեցում

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որպեսզի իր մաքսային ընթացակարգերը և կանոնները լինեն կանխատեսելի, հետևողական, թափանցիկ և ավելի դյուրին դարձնեն առևտուրը:

2. Յուրաքանչյուր Կողմի մաքսային ընթացակարգերը հնարավորության չափով և նրա մաքսային օրենսդրությամբ թույլատրվող սահմաններում, համապատասխանում են Առևտրի համաշխարհային կազմակերպության չափանշվածքներին և խորհուրդ տրվող պրակտիկաներին:

3. Յուրաքանչյուր Կողմ կվերանայի իր մաքսային օրենսդրությունը և կանոնները՝ դրանց պարզեցման և առևտրի՝ ավելի դյուրին դարձնելու նպատակով:

Հոդված 5.5

Հրապարակում և տեղեկատվության հասանելիություն

1. Յուրաքանչյուր Կողմ ոչ խտրական հիմունքներով և պարզ ու մատչելի ձևով պետք է արագորեն հրապարակի շահագրգիռ կողմերին ծանոթացնելու նպատակով հետևյալ տեղեկատվությունը՝

(ա) ներմուծման, արտահանման և տարանցման ընթացակարգերը (ներառյալ՝ նավահանգիստներում, օդանավակայաններում և այլ անցակետերում գործող ընթացակարգերը) և անհրաժեշտ ձևերն ու փաստաթղթերը.

(բ) ներմուծման և արտահանման ժամանակ գանձվող ցանկացած տեսակի մաքսատուրքերի և հարկերի կիրառելի դրույքաչափերը.

(գ) մաքսային նպատակների համար ապրանքների դասակարգման և գնահատման կանոնները.

(դ) ծագման կանոններին վերաբերող օրենքները, կանոնակարգերը և ընդհանուր կիրառման վարչական կանոնները.

(ե) ներմուծման, արտահանման կամ տարանցման սահմանափակումները կամ արգելքները.

(զ) ներմուծման, արտահանման կամ տարանցման հետ կապված վճարներն ու հավաքագրումները, որոնք գանձվում են կառավարական գերատեսչությունների կողմից կամ դրանց համար.

(է) ներմուծման, արտահանման կամ տարանցման ժամանակ ձևականությունների խախտման պատճառով տուգանքները.

(ը) բողոքարկման կամ վերանայման ընթացակարգերը.

(թ) ցանկացած երկրի կամ երկրների հետ ներմուծմանը, արտահանմանը կամ տարանցմանն առնչվող համաձայնագիրը կամ դրա մասը.

(ժ) սակագնային սահմանված նորմերի վարչարարության հետ կապված ընթացակարգերը:

2 . Յուրաքանչյուր Կողմ համացանցում տեղադրելու է և՛ հնարավորության սահմաններում, և՛ անհրաժեշտության դեպքում թարմացնելու է 1-ին կետում նշված տեղեկատվությունը:

3 . Կողմերը ձգտելու են 1-ին կետում պարունակվող տեղեկատվությունը տեղադրել համացանցում անգլերեն լեզվով:

4 . Յուրաքանչյուր Կողմ իր օրենսդրությանը համապատասխանող եղանակով հնարավորություն և հարմարավետ ժամկետ է տրամադրելու շահագրգիռ անձանց՝ ապրանքների տեղափոխմանը, շրջանառության մեջ դնելուն և, այդ թվում՝ տարանցիկ տեղափոխվող ապրանքների մաքսային ձևակերպմանը վերաբերող օրենքներում և ընդհանուր կիրառման կանոններում առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ մեկնաբանությունների ներկայացման համար:

5 . Յուրաքանչյուր Կողմ սահմանում է տեղեկատվական կենտրոններ՝ մաքսային կարգավորման և առևտրի պարզեցման հարցերով շահագրգիռ անձանց հարցումների ուսումնասիրության համար: Եթե հարցումներն արվել են անգլերեն լեզվով, այդպիսի հարցումների պատասխանները պետք է ներկայացվեն անգլերեն լեզվով:

Հոդված 5.6 Մաքսային գնահատում

Կողմերի միջև առևտրային շրջանառության մեջ գտնվող ապրանքների մաքսային արժեքը պետք է որոշվի Կողմերի մաքսային օրենսդրությանը համապատասխան, որը հիմնված է ՍԱԳՀ-1994-ի VII հոդվածում և ՍԱԳՀ-1994-ի VII հոդվածի կիրառման մասին համաձայնագրում նախատեսված հիմնական սկզբունքների և կանոնների վրա:

Հոդված 5.7 Սակագնային դասակարգում

Կողմերի միջև առևտրային շրջանառության մեջ գտնվող ապրանքների նկատմամբ Կողմերը կիրառում են ապրանքային անվանացանկը, որը հիմնված է 1986 թվականի հունիսի 24-ի Ապրանքների նկարագրման և ծածկագրման համաձայնեցված համակարգի մասին միջազգային կոնվենցիայի հավելվածում ներկայացված՝ Ներդաշնակեցված համակարգի վերջին խմբագրության վրա:

Հոդված 5.8

Նախնական որոշումներ

1. Յուրաքանչյուր Կողմ արտահանողի, ներմուծողի կամ ցանկացած այլ անձի դիմումի հիման վրա տալիս է նախնական որոշում ապրանքների ծագման և սակագնային դասակարգման մասին: Կողմերը նաև ձգտելու են ներդնել և պահպանել մաքսային արժեքի որոշման վերաբերյալ նախնական որոշման տրամադրումը:

2. Կողմը կարող է պահանջել, որպեսզի դիմողը ունենա իրավաբանական ներկայացուցչություն կամ լինի գրանցված իր տարածքում:

3. Կողմերը նախնական որոշումներ են տալու՝

(ա) ապրանքի սակագնային դասակարգման վերաբերյալ՝ ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալու պահից վաթսուն (60) օրվա ընթացքում.

(բ) ապրանքների ծագման վերաբերյալ՝ ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալու պահից իննսուն (90) օրվա ընթացքում:

4. Կողմերը ձգտելու են տրամադրել նախնական որոշումները մաքսային արժեքի որոշման մեթոդի կիրառման վերաբերյալ ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալու պահից իննսուն (90) օրվա ընթացքում:

5. Կողմերը ձգտելու են նվազեցնել վերը նշված ժամկետները, իրենց համապատասխան օրենսդրությունում փոփոխությունների իրականացման միջոցով:

6. Ապրանքի սակագնային դասակարգման մասին նախնական որոշումը գործելու է տրման օրից առնվազն երեք (3) տարվա կամ այդպիսի ժամկետը գերազանցող այլ ժամանակահատվածի ընթացքում, ինչպես նշված է Կողմերի օրենսդրությունում և կանոններում:

7. Ապրանքների ծագման կանոնների և ապրանքների մաքսային արժեքի որոշման համար մեթոդի կիրառման վերաբերյալ նախնական որոշումը գործելու է տրման ամսաթվից հետո ողջամիտ ժամկետի ընթացքում:

8. Նախնական որոշումը տրամադրած Կողմը կարող է փոխել, չեղյալ համարել կամ հետ կանչել այն՝

(ա) եթե որոշումը հիմնված էր սխալ փաստի կա՛մ կեղծ, կա՛մ ոչ ճշգրիտ տեղեկատվության վրա.

(բ) եթե տեղի են ունեցել որոշման համար հիմք հանդիսացած էական փաստերի և հանգամանքների փոփոխություն, կա՛մ

(գ) կապված է դատարանի որոշման, կա՛մ Կողմի ներքին օրենսդրության փոփոխության հետ:

9. Յուրաքանչյուր Կողմ ապահովելու է, որպեսզի նախնական որոշման ցանկացած փոփոխություն, չեղյալ համարում կամ հետ կանչում ուժի մեջ մտնի փոփոխության, չեղյալ համարվելու կամ հետ կանչվելու օրից կամ ավելի ուշ ժամկետում, որը կարող է նշվել համապատասխան որոշման մեջ և չկիրառվի ներմուծման գործողությունների նկատմամբ, որոնք իրականացվել են մինչ այդ ամսաթիվը, միայն եթե անձը, որին տրվել է նախնական որոշումը, չի տրամադրել կեղծ կամ ոչ ճշգրիտ տեղեկատվություն:

10. Եթե կողմը փոխում է նախնական որոշումը հետադարձ արդյունքով, նա կարող է դա անել այն դեպքում, երբ սխալը, որը պարունակվում է որոշման մեջ, չի ազդում տեղեկատվության վրա (ապրանքների սակագնային դասակարգման կամ դրանց ծագման):

11. Այն դեպքերում, երբ յուրաքանչյուր կողմը փոխում է, չեղյալ է համարում կամ հետ է կանչում նախնական որոշումը, այն դիմողին է ուղարկում գրավոր ծանուցում, որտեղ նշում է համապատասխան փաստերը և որոշման համար հիմքերը: Եթե կողմը հետին թվով չեղյալ է համարում, փոխում է, կամ անվավեր է ճանաչում նախնական որոշումը, նա կարող է դա անել միայն այն ժամանակ, երբ որոշումը հիմնվել է ոչ լիարժեք, սխալ, կեղծ կամ մոլորության մեջ գծող տեղեկատվության հիման վրա:

12. Որևէ կողմի տված նախնական որոշումը պարտադիր է այդ կողմի հայտատուի համար: Կողմը կարող է նախատեսել, որ նախնական որոշումը պարտադիր է դիմողի համար:

Հոդված 5.9

Ապրանքների ժամանակավոր ներմուծում

Միջազգային չափորոշիչներին համապատասխան՝ կողմերի մաքսային մարմինները պարզեցնում են մաքսային գործառնությունների իրականացումը ապրանքների ժամանակավոր ներմուծման առումով:

Հոդված 5.10

Մաքսային համագործակցություն

1. Մաքսային հարցերով համագործակցության ընդլայնման նպատակով կողմերը, մնացածից բացի,

ա) հիմնադրելու են երկխոսություն՝ մաքսային ոլորտում լավագույն պրակտիկաների փոխանակման և Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների (S<<S) ներդրման նպատակով:

բ) քննարկելու են ներմուծման, արտահանման և այլ մաքսային ընթացակարգերի հետ կապված, ինչպես նաև գործարար շրջանակներին ծառայությունների արդյունավետ տրամադրումն ապահովելու նպատակով համատեղ նախաձեռնությունների մշակման հնարավորությունը:

գ) համատեղ աշխատելու են անվտանգության ապահովման մաքսային ասպեկտների և միջազգային առևտրում մատակարարումների շղթայի պարզեցման ուղղությամբ:

2. Եթե Կողմի մաքսային մարմինը համապատասխան Կողմի օրենքներին և կանոններին համապատասխան ունի հայտարարագրի ճշմարիտ և ստույգ լինելու վերաբերյալ հիմնավորված կասկած, այդպիսի մաքսային մարմինը որոշակի դեպքերում կարող է դիմել մյուս Կողմի մաքսային մարմնին ներմուծման հայտարարագրի ստուգման համար տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ խնդրանքով:

3. Սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ հարցումը պետք է լինի գրավոր տեսքով, դրանում պետք է նշվեն նպատակը, որի համար այդ տեղեկատվությունը հարցվում է, այն պետք է պարունակի տվյալներ, որոնք բավական են համապատասխան ապրանքների նույնականացման համար:

4. Կողմը, որից սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան հարցվել է տեղեկատվությունը, պետք է ներկայացնի հարցված տեղեկատվությունը պարունակող գրավոր պատասխանը ոչ ուշ, քան գրավոր հարցումից հետո 90 օրվա ընթացքում:

5. Հարցվող Կողմը, մինչև տեղեկատվության տրամադրելը կարող է իր ազգային օրենսդրությանը և իրավական համակարգին համապատասխան պահանջել հավաստիացում այն մասին, որ կոնկրետ տեղեկատվությունը չի օգտագործվի որպես ապացույց քրեական հետաքննություններում, դատական քննություններում կամ մաքսային դատավարական գործողություններում առանց հարցվող Կողմի անմիջական գրավոր թույլատվության: Եթե Հարցնող Կողմը ի վիճակի չէ կատարել այդ պահանջները, նա պետք է հայտնի այդ մասին հարցնող Կողմին:

Հոդված 5.11

Մաքսային մարմինների կոնտակտային անձինք

1. Կողմերը փոխանակվելու են սույն գլխի իրականացման ժամանակ առաջացող հարցերով նշանակվող կոնտակտային անձանց ցուցակներով:

2. Կոնտակտային անձինք ձգտելու են խորհրդատվությունների անցկացման միջոցով արագորեն լուծել սույն գլխում ներառված հարցերը:

Հոդված 5.12

Մշակում մինչև ապրանքների ժամանումը

1. Ժամանելիս ապրանքների բաց թողնելը արագացնելու նպատակով Կողմերից

յուրաքանչյուրը պետք է ընդունի կամ պահպանի ընթացակարգերը, որոնք թույլ են տալիս ներկայացնելու ներմուծման փաստաթղթերը և այլ անհրաժեշտ տեղեկատվությունը, որպեսզի սկսել դրանց մշակումը մինչև ապրանքների ժամանումը:

2. Յուրաքանչյուր Կողմ հնարավորության սահմաններում ապահովում է էլեկտրոնային տեսքով փաստաթղթերի նախնական ներկայացումը՝ այդպիսի փաստաթղթերի նախնական մշակման նպատակով:

Հոդված 5.13

Արագացված մատակարարումներ

1. Կողմի մաքսային մարմինն ապահովելու է, որպեսզի մաքսային գործառնությունները արագացված մատակարարումների նկատմամբ Կողմի մաքսային օրենսդրությանը համապատասխան պատշաճ մաքսային հսկողության պահպանմամբ իրականացվեն առաջնային կարգով: Այդպիսի ընթացակարգերը պետք է.

(ա) ապահովեն արագացված մատակարարումների հետ կապված տեղեկատվության մշակումը մինչև ապրանքի ժամանումը.

(բ) որպես ապրանքների բացթողման նախապայման՝ թույլ տան ճեպընթաց սպասարկման ընկերությանը՝ հնարավորության սահմաններում էլեկտրոնային եղանակով ներկայացնել միասնական փաստաթղթեր այն տեսքով, որը Կողմը տեղին կհամարի, օրինակ՝ հրովարտակով կամ հայտարարագրով, որը կներառի խմբաքանակի բոլոր ապրանքները.

(գ) որքան հնարավոր է նվազագույնի հասցնել արագացված մատակարարումների բացթողման համար անհրաժեշտ փաստաթղթերի քանակը . ինչպես նաև՝

(դ) բոլոր անհրաժեշտ մաքսային փաստաթղթերի ներկայացման դեպքում թույլատրել արագացված մատակարարումների բացթողումը (սովորական պայմաններում) մաքսային հայտարարագրի գրանցման պահից 4 (չորս) ժամվա ընթացքում:

Հոդված 5.14

Ապրանքների բացթողումը

1. Յուրաքանչյուր Կողմ ընդունում կամ պահպանում է ընթացակարգերը, որոնք

(ա) ապահովում են ապրանքների բացթողումը այնպիսի ժամկետում, որը չի գերազանցում սեփական մաքսային օրենսդրության պահպանման համար անհրաժեշտ ժամկետը:

(բ) թույլ են տալիս նորմալ հանգամանքներում բաց թողնել ապրանքները Կողմի տարածք ժամանելու պահից սկսած 24 ժամվա ընթացքում, պայմանով, որ համապատասխան մաքսային հայտարարագիրը գրանցվել է և բոլոր մնացած պահանջները՝ կատարվել:

(գ) թույլ են տալիս ներմուծողներին, որոնք հետևել են Կողմի նախատեսած՝ արժեքի որոշման և մաքսատուրքի վճարման ընթացակարգերին, դուրս բերել ապրանքները մաքսատնից, եթե ներմուծողը որպես ապրանքների բացթողման նախապայման կներկայացնի ապահովություններ (երաշխիքներ), երբ այդպիսի ապահովությունները (երաշխիքները) նշանակում են, որ ապրանքների բացթողման, ինչպես նաև մնացած բոլոր կարգավորող պահանջները կկատարվեն:

2. Յուրաքանչյուր Կողմ

(ա) ապահովելու է, որպեսզի ապահովության (երաշխիքի) գումարը չգերազանցի այդ ապահովության (երաշխիքի) առարկա հանդիսացող ապրանքների հետ վերջին հաշվով կապված մաքսատուրքերի, հարկերի, հավաքագրումների և այլ ծախսերի վճարումը ապահովելու համար անհրաժեշտ գումարը:

(բ) ապահովելու է, որպեսզի ցանկացած ապահովություն (երաշխիք) որքան հնարավոր է արագ չեղյալ համարվի այն բանից հետո, երբ նրա մաքսային մարմինները կհամոզվեն ապրանքների ներմուծման հետ կապված պարտավորությունները կատարման մեջ. ինչպես նաև՝

(գ) ընդունելու է ընթացակարգեր, որոնք թույլ կտան

i . ներմուծողներին տրամադրել ապահովություն (երաշխիքներ) մի քանի ներմուծման մատակարարումների նկատմամբ. ինչպես նաև

ii . ներմուծողներին տրամադրել ապահովություն (երաշխիքներ) Կողմի օրենսդրությամբ սահմանված ցանկացած այլ ձևերով

Հոդված 5.15 Վտանգների կառավարումը

1 . Յուրաքանչյուր Կողմ կիրառում է վտանգների հաճախական գնահատման միջոցներով վտանգների կառավարման համակարգը, որը թույլ է տալու ապահովել մաքսային հսկողությունը վտանգի բարձր աստիճան ունեցող բեռների նկատմամբ և պարզեցնել մաքսային հսկողության կիրառումը վտանգի ցածր աստիճանով բեռների նկատմամբ, դրանց բացթողումն արագացնելու նպատակով:

2. Յուրաքանչյուր Կողմ մշակում և կիրառում է վտանգների կառավարման համակարգը

այնպես, որ խուսափել միջազգային առևտրում ակամա կամ չհիմնավորված խտրականությունից կամ ոչ ակնհայտ սահմանափակումներից:

3 . Յուրաքանչյուր Կողմ հիմնում է վտանգների կառավարումը ընտրության համապատասխան չափորոշիչներով վտանգների գնահատման վրա: Այդպիսի ընտրական չափորոշիչները կարող են ներառել, մնացածից բացի, ՆՀ ծածկագիրը, ապրանքի բնույթը և նկարագրությունը, ծագման երկիրը, ապրանքների բեռնման երկիրը, ապրանքների արժեքը, առևտրային գործառնության մասնակիցների կողմից նորմատիվ պահանջների կատարումը, ինչպես նաև փոխադրամիջոցային միջոցի տեսակը:

Հոդված 5.16

Ապրանքների բացթողումից հետո անցկացվող մաքսային ստուգայց

1. Ապրանքների բացթողումն արագացնելու նպատակով յուրաքանչյուր Կողմ ընդունում կամ պահպանում է ապրանքների բացթողումից հետո մաքսային ստուգայցի ընթացակարգը՝ մաքսային և այլ համապատասխան օրենքների պահպանումն ապահովելու համար:

2 . Յուրաքանչյուր Կողմ ընտրում է անձի կամ մատակարարում՝ մաքսային ձևակերպումից հետո ռիսկերի գնահատման հիման վրա, որոնք կարող են ներառել ընտրության համապատասխան չափորոշիչներ: Յուրաքանչյուր կողմ պետք է անցկացնի ստուգայցը ապրանքների բացթողումից հետո հաշվի առնելով թափանցիկության սկզբունքը: Երբ ստուգայցին ներգրավվել է շահագրգիռ անձ և ստացվել են վերջնական արդյունքները, Կողմերը պետք է անհապաղ ծանուցեն այն անձին, որի գործառնությունը ստուգվում է, արդյունքների, այդ անձի իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև՝ հնարավորության դեպքում՝ ստացված արդյունքների պատճառների մասին:

3 . Ստուգայցի ընթացքում ստացված տեղեկատվությունը կարող է օգտագործվել հետագա վարչական կամ դատական քննությունների ժամանակ:

4 . Կողմերը, երբ դա գործնականում իրագործելի է, օգտագործում են ստուգայցի արդյունքները վտանգների կառավարման համակարգի աշխատանքում:

Հոդված 5.17

Միասնական պատուհան

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է ստեղծի կամ պահպանի միասնական պատուհանի աշխատանքը՝ առևտուր անող անձանց թույլ տալով մասնակցող մարմիններին կամ գերատեսչություններին ներկայացնել փաստաթղթեր և/կամ տվյալներ, որոնք պահանջվում են միասնական թողանցիկ ուղիով ներմուծման, արտահանման կամ տարանցման համար: Մասնակցող մարմինների կամ գերատեսչությունների կողմից փաստաթղթերի և/կամ տվյալների ստուգումից հետո արդյունքները պետք է միասնական պատուհանի միջոցով ժամանակին ներկայացվեն դիմողներին ի գիտություն:

2. Այն դեպքերում, երբ փաստաթղթերը և/կամ պահանջվող տվյալները արդեն ներկայացվել էին միասնական պատուհանի միջոցով, միևնույն փաստաթղթերը և/կամ պահանջվող տվյալները չեն կարող պահանջվել մասնակցող մարմինների և գերատեսչությունների կողմից, բացառությամբ արտակարգ հանգամանքների և այլ բացառությունների, որոնք պետք է հրապարակվեն:

3. Կողմերը ձգտելու են զարգացնել ազգային «միասնական պատուհանների» միջև փոխգործակցությունը, ինչը թույլ կտա ստեղծելու պայմաններ արտաքին առևտրային գործունեության իրականացման համար անհրաժեշտ էլեկտրոնային փաստաթղթերի և տվյալների փոխադարձ ճանաչման համար: Այդ նպատակներով Կողմերը ձգտելու են զարգացնել ազգային միասնական պատուհանների միջև տեղեկատվության փոխանակումը ապահովելու համար ինստիտուցիոնալ, իրավաբանական և տեխնիկական հիմքերը:

Հոդված 5.18

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում և տեղեկատվական փոխգործակցություն

1. Մաքսային գործառնությունների իրականացման համար յուրաքանչյուր Կողմ կիրառում է տեղեկատվական տեխնոլոգիաներ Համաշխարհային մաքսային կազմակերպության կողմից առաջարկվող չափանշվածքներին և առաջադեմ փորձին համապատասխան:

2. Միջազգային չափանշվածքներին և միջազգային մատակարարումների շղթաների անվտանգության ապահովման համար մաքսային հսկողության իրականացման սկզբունքներին համապատասխան, Կողմերը կարող են փոխադարձ համաձայնությամբ սահմանել և կանոնավոր հիմքերով կիրառել Կողմերի մաքսային մարմինների միջև Կողմերի միջև առևտրի առարկա հանդիսացող ապրանքների մասին տեղեկատվության փոխանակում (այսուհետ՝ էլեկտրոնային տեղեկատվական փոխանակում):

3. Կողմերը կարող են օգտագործել տեղեկատվության փոխանակման արդյունքում ստացված տեղեկատվությունը սույն Համաձայնագրի X.15 հոդվածին համապատասխան վտանգների գնահատման նպատակների համար, ինչպես նաև ապրանքների բացթողման արագացման և մաքսային օրենսդրության խախտումների կանխարգելման համար:

4. Կողմերը ձգտում են իրականացնել էլեկտրոնային տեղեկատվական փոխանակումը Եվրասիական տնտեսական միության Ինտեգրված տեղեկատվական համակարգի տեխնիկական ենթակառուցվածքի և Սինգապուրի Միասնական պատուհանի ազգային հարթակի օգտագործման հիման վրա:

Հոդված 5.19

Հարկերի և հավաքագրումների էլեկտրոնային վճարումներ

Յուրաքանչյուր Կողմ իր համապատասխան օրենսդրության շրջանակներում ընդունում կամ պահպանում է ընթացակարգերը, որոնք թույլ են տալիս իրականացնելու ներմուծման և արտահանման հետ կապված՝ մաքսային մարմինների կողմից գանձվող տուրքերի, հարկերի, հավաքագրումների էլեկտրոնային վճարումները:

Հոդված 5.20

Ակնարկի և բողոքարկման ընթացակարգերը

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որպեսզի ներմուծողին, արտահանողին կամ ցանկացած այլ անձին, որի շահերին դիպչում է մաքսային հարցերով վարչական որոշումը, լինեն հասանելի՝

(ա) աշխատակցից կամ մաքսային մարմնից անկախ, վերանայվող որոշման համար պատասխանատու վերադաս մաքսային մարմնի կողմից որոշումների վարչական վերանայման մեխանիզմը.

(բ) որոշումների՝ դատական կարգով վերանայումը:

2. Բողոքարկման վերաբերյալ որոշումը հասցվում է դիմողին. այդպիսի որոշման պատճառները պետք է ներկայացվեն գրավոր տեսքով:

Հոդված 5.21 Տուգանքներ

Յուրաքանչյուր Կողմ ընդունում է և պահպանում է միջոցները, որոնք նախատեսում են անհրաժեշտության դեպքում քրեական կամ վարչական տուգանքների և պատժամիջոցների և անհրաժեշտության դեպքում՝ սույն գլխի դրույթների հետ կապված սեփական մաքսային օրենքների և կանոնների խախտման համար քաղաքացիական պատասխանատվության կիրառումը:

Հոդված 5.22 Գաղտնիություն

1. Սույ գլխում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես Կողմերից ցանկացածին ուղղված՝ սույն գլխում նշված գաղտնի տեղեկատվության տրամադրման կամ այն հասանելի դարձնելու պահանջ, որի բացահայտումը ըստ Կողմի՝

ա) հակասում է իր օրենսդրությամբ սահմանված հասարակական շահերին .

բ) հակասում է նրա օրենքներից ցանկացածին, ներառյալ, բայց չսահմանափակվելով մասնավոր կյանքի կամ ֆինանսական հաստատությունների առանձին հաճախորդների ֆինանսական հարցերի և հաշիվների անձեռնմխելիությունը պաշտպանող օրենսդրությունը .

գ) խոչընդոտում է իրավապահ գործունեությանը . կամ

դ) կարող է կանխակալ կարծիք ստեղծել օրինական առևտրական շահերի նկատմամբ, որոնք կարող են ներառել մրցակցային դիրքորոշում, առանձին պետական կամ մասնավոր ձեռնարկություններ:

2. Եթե Կողմը սույն գլխին համապատասխան տեղեկատվություն է տրամադրում մյուս Կողմին և բնորոշում է այն որպես գաղտնի, տեղեկատվությունը ստացող Կողմը պահպանում է տեղեկատվության գաղտնիությունը, այն օգտագործում է միայն տրամադրող Կողմի նշած նպատակների համար և չի բացահայտում այն առանց տեղեկատվությունը տրամադրած Կողմի հատուկ գրավոր թույլատվության:

Հոդված 5.23

Լիազորված տնտեսական օպերատորների փոխադարձ ճանաչում

Յուրաքանչյուր Կողմ ստեղծում է Լիազորված տնտեսական օպերատորների (LSO) ծրագիր և կարող է ուսումնասիրել Կողմերի միջև LSO ծրագրերի փոխադարձ ճանաչման վերաբերյալ բանակցությունների անցկացման հնարավորությունը:

ԳԼՈՒԽ 6
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՐԳԵԼՔՆԵՐՆ ԱՌԵՎՏՐՈՒՄ

Հոդված 6.1

Նպատակներ

Սույն գլխի նպատակը Կողմերի միջև ապրանքների առևտրի պարզեցումն է հետևյալ միջոցներով՝

(ա) առևտրում ավելորդ խոչընդոտների կանխարգելում ու վերացում, որոնք կարող են առաջանալ չափանշվածքների, տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի մշակման, ընդունման և կիրառման հետևանքով.

(բ) աջակցություն Կողմերից յուրաքանչյուրի չափանշվածքների, տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի փոխադարձ ընկալման.

(գ) չափանշվածքների, տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի մշակման, ընդունման և կիրառման ոլորտում Կողմերի միջև տեղեկատվության փոխանակման զարգացում.

(դ) չափանշման, հավատարմագրման և համապատասխանության գնահատման ոլորտում միջազգային մարմինների աշխատանքի շրջանակներում Կողմերի միջև համագործակցության ամրապնդում.

(ե) առևտրում տեխնիկական արգելքների հետ կապված հարցերով համագործակցության զարգացում.

(զ) սովյալ նպատակներին հասնելու համար հիմքի ապահովում:

Հոդված 6.2

Կիրառման ոլորտ

1. Սույն գլուխը կիրառվում է Առևտրում տեխնիկական արգելքների (ԱՏԱ) մասին ԱՀԿ Համաձայնագրի Հավելված 1-ում սահմանված՝ Կողմերի չափանշվածքների, տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի մշակման, ընդունման և կիրառման նկատմամբ, որոնք կարող են անմիջապես կամ միջնորդավորված կերպով ազդել Կողմերի միջև առևտրի վրա, բացառությամբ՝

(ա) գնումային հատկորոշումների, որոնք պատրաստվում են կառավարական մարմինների կողմից՝ արտադրության կարիքների և կառավարական մարմինների

սպառման համար գնումների նպատակով [սահմանվել են Պետական գնումներ գլխում].
և

(բ) սանիտարական և բուսասանիտարական միջոցների, որոնք սահմանվել են սույն Համաձայնագրի Գլխում

2. Չափանշվածքների, տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի վրա կատարվող հղումները սույն Գլխում մեկնաբանվում են այնպես, որ ներառեն այդ չափանշվածքների, տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի կանոնների և ապրանքային ընդգրկույթի փոփոխությունները և ցանկացած լրացումները, բացառությամբ ոչ էական բնույթի փոփոխությունների և լրացումների:

Հոդված 6.3

Սահմանումներ

Սույն Գլխի նպատակների համար կիրառվում են Առևտրում տեխնիկական արգելքների (ԱՏԱ) մասին Համաձայնագրի Հավելված 1-ում շարադրված սահմանումները:

Հոդված 6.4

ԱՏԱ Համաձայնագրի միացումը

1. Եթե սույն Գլխում այլ բան նախատեսված չէ, ԱՏԱ Համաձայնագիրը կիրառվում է Կողմերի միջև և սույնով ներմիավորվել է սույն Համաձայնագրին և կազմում է դրա անբաժանելի մասը.

2. Սույն Գլխում ոչինչ չի սահմանափակում ԱՏԱ Համաձայնագրին համապատասխան Կողմերից յուրաքանչյուրի համապատասխան իրավունքներն ու պարտականությունները:

Հոդված 6.5

Թափանցիկություն

1. Կողմերն ընդունում են թափանցիկության կարևորությունը չափանշվածքների, տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի մշակման, ընդունման և կիրառման ընթացքում:

2. Կողմի՝ ԱՏԱ Համաձայնագրի 2.9 հոդվածին և/կամ 5.6 հոդվածին համապատասխան ծանուցում ուղարկելու դեպքում, այդ Կողմը.

(ա) մյուս Կողմին և նրա շահագրգիռ անձանց, որպես կանոն, տրամադրում է ծանուցումը հրապարակելուց հետո մեկնաբանությունների համար նախատեսված առնվազն 60 օր կազմող ժամանակահատված: Եթե Կողմը կարող է տրամադրել 60 օրից ավել ժամկետ, այդ Կողմին խորհուրդ է տրվում անել հետևյալը.

(բ) հաշվի է առնում մյուս Կողմի մեկնաբանությունները, որոնք մյուս Կողմը ներկայացրել է սույն հոդվածի 2 (ա) պարագրաֆին համապատասխան մեկնաբանությունների ներկայացման ժամանակահատվածի ընթացքում.

(գ) մյուս Կողմի հարցման դիմաց ձգտում է տրամադրել սույն հոդվածի 2 (բ) կետում նշված մեկնաբանությունների պատասխանները.

(դ) գրավոր հարցում ստանալուց հետո 15 օրվա ընթացքում պարզաբանում է առաջարկվող տեխնիկական կանոնակարգի կամ համապատասխանության գնահատման ընթացակարգի նպատակը կամ տեխնիկական կանոնակարգի կամ համապատասխանության գնահատման ընթացակարգի՝ դրան հասնելու եղանակը: Հարցման դիմաց նաև տրամադրվում են մշակվող տեխնիկական կանոնակարգի կամ համապատասխանության գնահատման ընթացակարգի նկարագրությունները և տեքստերը: Եթե տեխնիկական կանոնակարգի կամ համապատասխանության գնահատման ընթացակարգի նախագծի պատճենները հարցման պահին հասանելի չեն լինի, հարցվող Կողմը դրանք կուղարկի հարցում կատարող Կողմին անմիջապես պատրաստ լինելուց հետո:

(ե) մյուս Կողմի հարցման դիմաց տեղեկատվություն է տրամադրում մշակվող տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի՝ համապատասխան միջազգային չափանշվածքներից, ուղեցույցներից և հանձնարարականներից էական տարբերությունների մասին, եթե դրանք առկա են:

(զ) հարցման դիմաց տրամադրում է տեղեկատվություն այն մեկնաբանությունների ուսումնասիրության արդյունքների մասին, որոնք արվել են մինչև տեխնիկական կանոնակարգի և/կամ համապատասխանության գնահատման ընթացակարգի ընդունումը՝ «ա» ենթակետում նշված՝ մեկնաբանություններ համար նախատեսված ժամկետի ընթացքում.

(է) ձգտում է բավական ժամանակ տրամադրել մեկնաբանությունների համար նախատեսված ժամանակահատվածի ավարտի և տեխնիկական կանոնակարգի կամ համապատասխանության գնահատման ընթացակարգի ընդունման միջև:

3. Եթե Կողմը հարցում է ուղարկում ԱՏԱ Համաձայնագրի 2.10 հոդվածին և/կամ 5.7 հոդվածին համապատասխան, այդ Կողմը մյուսի գրավոր հարցման դիմաց տրամադրում է ծանուցվող տեխնիկական կանոնակարգերի և/կամ համապատասխանության գնահատման ընթացակարգերի պատճենները՝ նման հարցում ստանալու պահից սկսած 10 օրվա ընթացքում:

4. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է ընդունված տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի և, որքանով որ դա հնարավոր է, տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի նախագծերի անհապաղ հրապարակումը, կամ դրանք հասանելի է դարձնում այնպես, որպեսզի մյուս Կողմի շահագրգիռ անձինք կարողանան դրանց ծանոթանալ:

5. Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմին է տրամադրում իր ազգային մարմինների կողմից պաշտոնական հավատարմագրումն ընդունած հավաստագրման մարմինների և փորձարկման լաբորատորիաների ցանկը և դրանց հավատարմագրման ոլորտի մասին տեղեկատվությունը:

6. Կողմերին առաջարկվում է ուսումնասիրել մեթոդները, որոնք ապահովում են լրացուցիչ թափանցիկությունը չափանշվածքների, տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի մշակման ժամանակ, այդ թվում՝ էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ հասարակության տեղեկացման և խորհրդատվությունների եղանակը:

7. Յուրաքանչյուր Կողմ, որպես կանոն, տրամադրում է առնվազն 6 ամիս ժամկետ տեխնիկական կանոնակարգերի ընդունման և դրանց ուժի մեջ մտնելու միջև, բացառությամբ այնպիսի դեպքերի, երբ Կողմերի համար առաջանում է անվտանգության, առողջության, շրջակա միջավայրի պաշտպանության կամ ազգային անվտանգության ապահովման անհապաղ խնդիր կամ դրա առաջացման սպառնալիք, կամ երբ դա անարդյունավետ կլինի այդպիսի տեխնիկական կանոնակարգերի օրինական նպատակներին հասնելու տեսակետից: Այն Կողմին, որը կարող է տրամադրել 6 ամսից ավել ժամկետ, խորհուրդ է տրվում այն տրամադրել:

8. Կողմերը 7-րդ կետը կիրառելիս ապահովում են ողջամիտ ժամկետ, որպեսզի մատակարարողները կարողանան տվյալ հանգամանքներում ցուցադրել տեխնիկական կանոնակարգի պահանջներին իրենց ապրանքների համապատասխանությունը՝ այդպիսի տեխնիկական կանոնակարգի ուժի մեջ մտնելու ժամանակ:

9. Կողմերը ձգտում են սույն հոդվածին համապատասխան տեղեկատվության փոխանակումը որքան հնարավոր է իրականացնել անգլերեն լեզվով:

Հոդված 6.6

Միջազգային չափանշվածքներ, Հրահանգումներ և Հանձնարարականներ

1. Կողմերը ճանաչում են միջազգային չափանշվածքների, հրահանգումների և հանձնարարականների կարևոր դերը, դրանց ներդրումը նորմատիվ իրավական ակտերի նույնականության բարձր մակարդակի, նորմատիվ կարգավորման պատշաճ պրակտիկայի պահպանման և առևտրի համար ավելորդ արգելքների կրճատման մեջ:

Հոդված 6.7

Տեխնիկական կանոնակարգեր

1. ԱՏԱ Համաձայնագրի 2.4 հոդվածին համապատասխան՝ Կողմերն օգտագործում են համապատասխան միջազգային չափանշվածքները կամ դրանց մասերը՝ որպես սեփական տեխնիկական կանոնակարգերի հիմք, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի միջազգային չափանշվածքները կարող են, որպես միջոց, լինել անարդյունավետ կամ ոչ համապատասխան՝ օրինական հետապնդվող նպատակներին հասնելու համար: Եթե Կողմը չի օգտագործում այդպիսի միջազգային չափանշվածքները կամ դրանց համապատասխան մասերը որպես սեփական տեխնիկական կանոնակարգերի հիմք, նա, մյուս Կողմի խնդրանքով, բացատրում է դրա պատճառը:

2. Յուրաքանչյուր Կողմ ձգտում է միատեսակ և հետևողականորեն կիրառել տեխնիկական կանոնակարգերն իր ամբողջ տարածքում՝ հաշվի առնելով այն տարածքները, որտեղ դրանք նախապատրաստվել և ընդունվել են:

Հոդված 6.8

Համապատասխանության գնահատում

1. Կողմերը ճանաչում են համապատասխան տարածաշրջանային և/կամ միջազգային կազմակերպությունների, ինչպիսիք են Հավատարմագրման միջազգային համաժողովը (IAF) և Լաբորատորիաների միջազգային հավատարմագրման համագործակցությունը (ILAC), կարևոր դերը համապատասխանության գնահատման ոլորտում համագործակցության զարգացման և առևտրի պարզեցման մեջ: Ելնելով դրանից՝ յուրաքանչյուր Կողմ հաշվի է առնում այդպիսի կազմակերպություններում մյուս Կողմի

համապատասխան մարմինների մասնակցության կարգավիճակը՝ այդպիսի համագործակցությունը զարգացնելու նպատակով:

2. Կողմերն ապահովում են, որ տնտեսական օպերատորները կարող են ընտրել շուկայում ապրանքի իրացման համար անհրաժեշտ գնահատման համապատասխանության մարմիններ այն դեպքերում, երբ առկա են Կողմից հավատարմագրված համապատասխանության գնահատման ընթացակարգերի համար երկու կամ ավելի նման մարմիններ:

3. Կողմերը ճանաչում են համապատասխանության գնահատման ընթացակարգերի արդյունքների ճանաչմանը նպաստող մեխանիզմների լայն հավաճը և փոխանակվում են այդ մեխանիզմների հետ կապված տեղեկատվությամբ՝ համապատասխանության գնահատման արդյունքների ընդունումը պարզեցնելու նպատակով:

Հոդված 6.9

Մակնշում և պիտակավորում

1. Կողմերը նշում են, որ USU Համաձայնագրի Հավելված 1-ի 1-ին կետին համապատասխան՝ տեխնիկական կանոնակարգը կարող է ներառել կամ բացառապես պարունակել մակնշմանը և պիտակավորմանը ներկայացվող պահանջներ, և համաձայնում են, որ այդպիսի տեխնիկական կանոնակարգում մակնշման և պիտակավորման վերաբերյալ պարտադիր պահանջների պարունակվելու դեպքում, գործելու են USU Համաձայնագրի 2.2-րդ հոդվածում նշված սկզբունքներին համապատասխան, ըստ որոնց՝ տեխնիկական կանոնակարգերը չպետք է մշակվեն, ընդունվեն և կիրառվեն այնպես, որ միջազգային առևտրում ստեղծեն ավելորդ արգելքներ կամ հանգեցնեն այդպիսի արգելքների ստեղծմանը և ավելի մեծ սահմանափակող ազդեցություն ցուցաբերեն առևտրի վրա, քան պահանջվում է օրինական նպատակներին հասնելու համար:

2. Կողմերը փոխանակվում են մակնշման ու պիտակավորման ընթացակարգերի վերաբերյալ իրենց համապատասխան պահանջների վերաբերյալ տեղեկատվությամբ փոխադարձ առևտրի պարզեցման նպատակով:

Հոդված 6.10

Համաձայնագրեր և Պայմանավորվածություններ (առևտրի պարզեցման մասին)

1. Կողմերը ձգտում են սահմանել չափանշվածքների, տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի նկատմամբ առևտրի պարզեցման նախաձեռնություններ, որոնք կիրառելի են փոխադարձ հետաքրքրության կոնկրետ հարցերի կամ հատվածների համար:

2. Առևտրի պարզեցման այդպիսի ընթացակարգերը կարող են ներառել նորմատիվ իրավական կարգավորման հարցերով համաձայնագրեր կամ պայմանավորվածություններ, ինչպիսիք են չափանշվածքների միասնականացումը, տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի մոտեցումն ու համարժեքությունը, համապատասխանության գնահատման ընթացակարգերի արդյունքների փոխադարձ կատարման և ճանաչման հարցեր:

3. Կողմերն ապահովում են այդպիսի համաձայնագրերի և պայմանավորվածությունների քննարկման ժամանակ անհրաժեշտ ամբողջ տեղեկատվության ներկայացումը:

4. Համապատասխանության գնահատման արդյունքների փոխադարձ ճանաչման վերաբերյալ համաձայնագրերի կամ պայմանավորվածությունների շուրջ քննարկումների կամ բանակցությունների սկսելու մասին որոշում կայացնելու դեպքում Կողմերը համագործակցում են այն փուլերում, որոնք կարող են ներառել, *inter alia`*

(ա) կոնկրետ ապրանքների և այդ ապրանքների նկատմամբ համապատասխան պահանջների սահմանում.

(բ) այդպիսի ապրանքների համար տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի համարժեքության գնահատում.

(գ) համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման/նշանակման ընթացակարգեր և հավատարմագրման/նշանակման համակարգերի գնահատում:

5. Համապատասխանության գնահատման արդյունքների փոխադարձ ճանաչման մասին 4-րդ պարագրաֆում նշված համաձայնագրերի և պայմանավորվածությունների կիրառման նպատակով, յուրաքանչյուր Կողմ, որպես կանոն, իր տարածքում նշանակում է համապատասխանության գնահատման մարմիններ:

6. Եթե Կողմը մերժում է այդպիսի համաձայնագրերի կամ պայմանավորվածությունների քննարկման՝ մյուս Կողմի առաջարկը, նա այդ Կողմի խնդրանքով բացատրում է իր որոշման պատճառը գրավոր ձևով:

Հոդված 6.11

Համագործակցություն

1 . Սույն Գլխի կիրառմանն աջակցելու և համապատասխան համակարգերի փոխըբռնումը ամրապնդելու նպատակով, Կողմերը համագործակցում են համատեղ հետաքրքրություն ներկայացնող ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի ոլորտներում: Այդպիսի համագործակցությունը պետք է հիմնված լինի փոխհամաձայնեցված պայմանների վրա:

2. Համապատասխան սույն հոդվածի կետ 1-ի՝ համագործակցությունը կարող է ներառել հետևյալը.

(ա) Կողմերից յուրաքանչյուրի՝ չափանշվածքների, տեխնիկական կանոնակարգի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի փոխադարձ ընկալման բարձրացման և պարզեցման նպատակներով համատեղ միջոցառումների անցկացում.

(բ) փորձի փոխանակում, ներառյալ՝ այց երկրներ.

(գ) տեղեկատվության փոխանակում չափանշվածքների, տեխնիկական կանոնակարգի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի մասին.

(դ) առևտրի մեջ տեխնիկական խոչընդոտների հետ կապված՝ շուկայում վերահսկողական գործունեության մասին տեղեկատվության փոխանակում.

(ե) համագործակցության ամրապնդում միջազգային համաժողովներին, ներառյալ՝ չափանշման և համապատասխանության գնահատման միջազգային մարմինների, ինչպես նաև՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող առջևտրում տեխնիկական խոչընդոտների գծով ԱՀԿ կոմիտեն.

(զ) Կողմերից յուրաքանչյուրի ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի համար պատասխանատու մարմինների՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ համագործակցությանն աջակցություն.

(է) գիտական և տեխնիկական համագործակցություն չափանշվածքների, տեխնիկական կանոնակարգի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի կիրառման և մշակման կատարելագործման նպատակով.

(ը) չափանշվածքների, տեխնիկական կանոնակարգի և արդյունքի և արդյունավետության բարձրացման համար նորմատիվային կարգավորման համապատասխան պրակտիկայի օգտագործման զարգացում.

(թ) Կողմերի ազգային չափանշվածքների ներդաշնակման ուժեղացման խրախուսում՝ համապատասխան միջազգային չափանշվածքներին, բացառությամբ այն դեպքերի, երբ այն արդարացված կամ արդյունավետ չէ:

3. Կողմերն ամրապնդում են տեղեկատվության փոխանակումը գոյություն ունեցող և հնարավոր մեխանիզմներով, որոնք ուղղված են համապատասխանության գնահատման ընթացակարգերի արդյունքների ճանաչման հեշտացմանը, իրավական նորմատիվային գործունեությունների նմանության մակարդակի բարձրացմանը և Կողմերի միջև առևտրում ավելորդ խոչընդոտների հեռացմանը:

4. Սույն գլխի կիրառման ոլորտի շրջանակներում, կապված կոնկրետ հատվածների հետ, մի կողմը մյուսի հարցմամբ պատշաճ ուշադրություն է դարձնում համագործակցության առաջարկների վրա:

5. Կողմերը, երբ հնարավոր և նպատակարմար է, համագործակցում են իրար հետ այն այն բանի ապահովման նպատակներով, որ միջազգային չափանշվածքները, հրահանգումներն ու հանձնարարականները, որոնք կարող են չափանշվածքների, տեխնիկական կանոնակարգի և համապատասխանության գնահատման ընթացակարգերի հիմք հանդիսանալ, ավելորդ խոչընդոտներ չստեղծեն փոխադարձ առևտրի համար:

Հոդված 6.12

Տեղեկատվության փոխանակում

1. Եթե սույն գլխով այլ բան նախատեսված չէ. տեղեկատվությունը, որի համար Կողմը հարցում է կատարում սույն գլխին համապատասխան, տրամադրվում է տպատառ կամ էլեկտրոնային տեսքով ողջամիտ ժամկետի ընթացքում, որը, որպես կանոն, կազմում է 60 օր:

2. Սույն գլխում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես պահանջ, որպեսզի Կողմը տրամադրի ցանկացած տեղեկատվություն, որի բացահայտումը հակասում է նրա անվտանգության էական շահերին:

Հոդված 6.13

Տեխնիկական խորհրդատվություններ

1. Կողմը կարող է տեխնիկական խորհրդատվությունների անցկացման վերաբերյալ մյուս Կողմից հարցում կատարել ցանկացած հարցով, որը ծագում է սույն Գլխին համապատասխան:

2. Փոխընդունելի որոշում կայացնելու համար հարցվող Կողմը մասնակցում է տեխնիկական խորհրդատվություններին հարցումը ստանալու պահից 60 օրվա ընթացքում: Տեխնիկական խորհրդատվությունները կարող են անցկացվել Կողմերի միջև փոխհամաձայնեցված ցանկացած եղանակներով:

3. Եթե հարցում կատարող Կողմը համարում է, որ հարցն անհապաղ է, նա կարող է պահանջել անցկացնել քննարկումներն ավելի կարճ ժամկետում: Մյուս Կողմը հաշվի է առնում այդպիսի պահանջները:

4. Եթե տեխնիկական խորհրդատվություններին մասնակցող Կողմերը այլ բանի մասին չեն պայմանավորվել, տեխնիկական խորհրդատվություններում փոխանցվող տեղեկատվությունը պետք է լինի գաղտնի:

Հոդված 6.14 **Կոնտակտային կետեր**

1. Կողմերը նշանակում են կոնտակտային կետ կամ կոնտակտային կետեր, որոնք պատասխանատու են սույն Գլխի կիրառման հարցերի համաձայնեցման համար:
2. Այդպիսի կոնտակտային կետերի գործառույթները, սույն գլխին համապատասխան ներառում են *inter alia*.

(ա) «Թափանցիկություն» հոդվածի կիրառման համաձայնեցում.

(բ) սույն Գլխի շրջանակներում առաջացող հարցերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակում.

(գ) համագործակցության վերաբերյալ հարցումների ուղղում և ստացում, անհրաժեշտ պատասխանների տրամադրում.

(դ) «Տեխնիկական խորհրդատվություններ» հոդվածին և «Համաձայնագրեր և Պայմանավորվածություններ (առևտրի պարզեցման մասին)» հոդվածին համապատասխան հարցումների ուղղում և ստացում, անհրաժեշտ պատասխանների տրամադրում.

(ե) սեփական տարածքում համապատասխան իրավասու մարմինների փոխգործակցություն և համաձայնեցում, սույն Գլխի հետ կապված համապատասխան հարցերի շուրջ:

3. Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմին է ներկայացնում նշանակված կոնտակտային կետի կամ կոնտակտային կետերի մասին տեղեկատվություն, ներառյալ՝ կոնտակտային տվյալները, այն է՝ կոնտակտային անձի (կոնտակտային անձանց) անունը (անունները), հեռախոսի (-ների) համարը (-ները), և էլեկտրոնային փոստի հասցեն (-ները): Յուրաքանչյուր Կողմ պետք է թարմացնի այդ տեղեկատվությունը:

4. Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմին է ներկայացնում համապատասխան իրավասու մարմինների մասին տեղեկատվությունը, նրանց գործառույթների գրավոր նկարագրությունը: Յուրաքանչյուր Կողմ պետք է թարմացնի այդ տեղեկատվությունը:

5. Կոնտակտային կետերի միջև փոխգործակցությունն իրականացվում է անգլերեն լեզվով: Կողմերը ձգտում են փոխանակվել այդպիսի փոխգործակցության շրջանակներում հարցվող տեղեկատվությամբ անգլերեն լեզվով:

ԳԼՈՒԽ 7

ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ և ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Հոդված 7.1

Նպատակներ

Սույն գլխի նպատակներն են՝

ա) փոխադարձ առևտրի նկատմամբ սանիտարական և բուսասանիտարական (այսուհետ՝ ՍԲՍ) միջոցների բացասական ազդեցությունների նվազագույնին հասցնելը, պաշտպանելով Կողմերի տարածքներում մարդկանց, կենդանիների և բույսերի կյանքն ու առողջությունը.

բ) թափանցիկության բարձրացում, ՍԲՍ միջոցների ոլորտում տեղեկատվության փոխանակման պարզեցում և Կողմերի կարգավորման համակարգերի փոխադարձ ընկալման բարելավում.

գ) Կողմերի իրավասու մարմինների միջև համագործակցության ուժեղացում.

դ) սույն Գլխի կիրառման ոլորտի շրջանակներում ապրանքների երկկողմ առևտրի վրա ազդող հարցերի արդյունավետ լուծմանը նպաստող գործիքի ապահովում.

Հոդված 7.2

Կիրառման ոլորտը

Սույն Գլուխը կիրառվում է Կողմերի բոլոր ՍԲՍ միջոցների նկատմամբ, որոնք կարող են անմիջապես կամ միջնորդավորված կերպով ազդել Կողմերի միջև առևտրի վրա:

Հոդված 7.3

Սահմանումները

1. Սույն Գլխի նպատակների համար կիրառվում են հետևյալ սահմանումները, որոնք շարադրված են ՍԲՍ Համաձայնագրի Հավելված Ա-ում

2. Կողմերը կարող են լրացուցիչ համաձայնեցնել այլ սահմանումներ սույն Գլխի կիրառման համար, հաշվի առնելով այնպիսի միջազգային կազմակերպությունների գլոսսարիումներն ու սահմանումները, ինչպիսիք են «Կողեքս Ալիմենտարիուս» Հանձնաժողովը (այսուհետ՝ «Կողեքս Ալիմենտարիուս»), Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպությանը (այսուհետ՝ ՄԷԲ) և Բույսերի կարանտինի և պաշտպանության միջազգային համաձայնագրի (այսուհետ՝ ԲԿՊՄԿ) շրջանակներում գործող՝ համապատասխան միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունները:

Հոդված 7.4

ՍԲՍ Համաձայնագրի ներմիավորում

1. Եթե սույն Գլխում այլ բան սահմանված չէ, ՍԲՍ Համաձայնագիրը ներմիավորվել է սույն Համաձայնագրին և կազմում է դրա անբաժանելի մասը.
2. Սույն Գլխում ոչինչ չի սահմանափակում ՍԲՍ Համաձայնագրի շրջանակներում յուրաքանչյուր Կողմի համապատասխան իրավունքներն ու պարտականությունները:

Հոդված 7.5

Թափանցիկություն և տեղեկատվության փոխանակում

1. Կողմերը ճանաչում են սանիտարական և բուսասանիտարական միջոցների մշակման և կիրառման մասին տեղեկատվության ժամանակին և մշտապես փոխանակման արժեքը: Սույն հոդվածը կիրառելիս Կողմերը հաշվի են առնում համապատասխան միջազգային կազմակերպությունների ուղեցույցները և հանձնարարականները:
2. Եթե Կողմը ծանուցում է ուղարկում ՍԲՍ Համաձայնագրի Հավելված Բ-ի 5 (բ) կետին կամ 6 (ա) կետին համապատասխան, այդպիսի Կողմը հարցում ուղարկած Կողմին հարցման դիմաց տրամադրում է մշակվող ՍԲՍ կանոնների⁵ պատճենները:
3. Յուրաքանչյուր Կողմ տրամադրում է առնվազն 60 օր, որպեսզի մյուս Կողմը կարողանա ներկայացնել մշակվող ՍԲՍ միջոցների մեկնաբանությունները, բացառությամբ առողջության պաշտպանության հետ կապված անհետաձգելի խնդիրների առաջացման կամ առաջացման սպառնալիքի գոյացման դեպքերում: Եթե Կողմը կարող է տրամադրել 60 օրից ավել ժամկետ, դա համարվում է ողջունելի:
4. Յուրաքանչյուր Կողմ հաշվի է առնում մյուս Կողմի մեկնաբանությունները և, անհրաժեշտության դեպքում, տրամադրում դրանց պատասխանները:
5. Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի գրավոր հարցումը ստանալիս ժամանակին տեղեկատվություն է ներկայացնում ՍԲՍ միջոցների հետ կապված ցանկացած հարցի վերաբերյալ, որն առաջացել է կամ կարող է առաջանալ Կողմերի փոխադարձ առևտրում:
6. Արտահանող Կողմի հարցման դիմաց, ներմուծող Կողմը 30 օրվա ընթացքում հնարավոր առավելագույն ծավալով ներկայացնում է որոշակի ապրանքների ներմուծմանը ներկայացվող համապատասխան ՍԲՍ պահանջները, ներառյալ՝ անվտանգությունը հաստատող ընթացակարգերը ու փաստաթղթերի ձևերը և ներմուծող Կողմի նախատեսած՝ ՍԲՍ վերահսկողության ոլորտի այլ համապատասխան տեղեկատվությունը:

⁵ Սանիտարական և բուսասանիտարական միջոցներ՝ օրենքներ, որոշումներ կամ ընդհանուր գործողության որոշումներ:

7. Արտահանող Կողմի հարցման դիմաց ներմուծող Կողմը ՄԲՍ մասով 30 օրվա ընթացքում ներկայացնում է արտահանող Կողմի՝ շուկա մուտք գործելու վերաբերյալ դիմումի կարգավիճակի մասին տեղեկատվությունը:

Հոդված 7.6

Համագործակցության

1. Կողմերը պայմանավորվել են ուժեղացնել համագործակցությունը, ներառյալ՝ ՄԲՍ ոլորտում իրավասու մարմինների միջև, համապատասխան համակարգերի փոխընկալման և ՄԲՍ վերահսկողության համակարգերի կատարելագործման համար: Այդպիսի համագործակցությունը, որը հիմնված է փոխհամաձայնեցված պայմանների վրա, կարող է ներառել՝

(ա) սույն Գլխի կիրառման ոլորտի շրջանակներում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ՄԲՍ հարցերին վերաբերող խնդիրների հետ կապված համատեղ աշխատանք և տեղեկատվության փոխանակում:

(բ) Կողմերի իրավասու մարմինների համագործակցության ուժեղացում, որոնք զբաղվում են սննդամթերքի անվտանգության, մարդկանց, կենդանիների և բույսեր կյանքի և առողջության հարցերով միջազգային կազմակերպությունների շրջանակներում:

(գ) սննդամթերքի անվտանգության, սանիտարական և բուսասանիտարական միջոցների կիրառման, կենդանիների հիվանդությունների և վնասատուների տարածումը կանխարգելման հարցերում Կողմերի ներուժի և փոխըմբռնման նպատակներով իրավասու մարմինների միջև փորձի փոխանակման համար ծրագրերի մշակում:

(դ) ՄԲՍ միջոցների հետ կապված հարցերով լրացուցիչ պայմանավորվածություններ, ներառյալ՝ առևտրի զարգացման աջակցության նախաձեռնությունները:

2. Կողմերը համատեղ աշխատանք են անցկացնելու ապրանքի արտահանված խմբաքանակի մեջ էական ՄԲՍ վտանգի հայտնաբերման դեպքում ժամանակին տեղեկատվություն տրամադրելու ուղղությամբ: Այդպիսի աշխատանքը հիմնվելու է փոխհամաձայնեցված պայմանների վրա:

Հոդված 7.7

Համարժեքություն

1. Կողմերն ընդունում են, որ համարժեքությունը հանդիսանում է առևտրի պարզեցման կարևոր գործիք:
2. Կողմերը կարող են ճանաչել առանձին միջոցի և/կամ միջոցների խմբի և/կամ ՍԲՍ վերահսկողության համակարգի համարժեքությունը, որոնք կիրառվում են մեկ բնագավառում կամ բնագավառի մի մասում:
3. Կողմերը պայմանավորվել են ընդլայնել համագործակցությունը՝ հաշվի առնելով ԱՀԿ սանիտարական և բուսասանիտարական միջոցների գծով Կոմիտեի, Բույսերի կարանտինի և պաշտպանության միջազգային համաձայնագրի (ԲԿՊՄԿ), Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության (ՄԷԲ) և «Կողեքս Ալիմենտարիուսի» ուղեցույցներն ու հանձնարարականները:
4. Եթե համարժեքությունը ճանաչվել է, Կողմերը կարող են համաձայնության գալ կենդանիների կամ կենդանական ծագման արտադրանքի, բույսերի կամ բուսական ծագման արտադրանքի կամ այլ համապատասխան ապրանքների յուրաքանչյուր խմբաքանակի ներմուծման համար նախատեսված անվտանգությունը հավաստող փաստաթղթերի երկկողմ ձևի վերաբերյալ:

Հոդված 7.8

Հարմարեցում տարածաշրջանային պայմաններին

1. Կողմերը պայմանավորվել են ընդլայնել համագործակցությունը տարածաշրջանային պայմաններին հարմարեցմանն առնչվող հարցերի շուրջ, ներառյալ՝ հիվանդություններից կամ վնասատուներից ազատ գոտիների, հիվանդությունների կամ վնասատուների աննշան տարածման գոտիների և հիվանդություններից ու վնասատուներից ազատ արտադրական տարածքների և/կամ պաշտպանական ցածր մակարդակի տնտեսությունների ճանաչումը՝ հաշվի առնելով ԱՀԿ սանիտարական և բուսասանիտարական միջոցների գծով Կոմիտեի, Բույսերի կարանտինի և պաշտպանության միջազգային համաձայնագրի (ԲԿՊՄԿ), Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության (ՄԷԲ) և «Կողեքս Ալիմենտարիուսի» ուղեցույցներն ու հանձնարարականները:
2. Կողմերը կարող են սահմանել լրացուցիչ մանրամասներ այդպիսի գոտիների, արտադրական տարածքների և/կամ կոմպարտմենտների ճանաչման ընթացակարգերի, այդ թվում՝ հիվանդությունների բռնկումներից կամ վնասատուների տարածումից հետո այդպիսի գոտիների, արտադրական տարածքների և/կամ պաշտպանական ցածր մակարդակի տնտեսությունների ճանաչման ընթացակարգի համար՝ հաշվի առնելով համապատասխան չափանշվածքները, ԱՀԿ սանիտարական և բուսասանիտարական միջոցների գծով Կոմիտեի, Բույսերի կարանտինի և պաշտպանության միջազգային համաձայնագրի (ԲԿՊՄԿ), Կենդանիների առողջության համաշխարհային

կազմակերպության (ՄԷԲ) և «Կողեքս Ալիմենտարիուսի» ուղեցույցներն ու հանձնարարականները:

3. Եթե ներմուծող Կողմը չի ընդունում արտահանող Կողմի ներկայացրած ապացույցները, նա պետք է բացատրի պատճառները և պատրաստ լինի սկսել տեխնիկական խորհրդատվությունները:

4. Կողմերն աջակցում են իրենց պատասխանատու մարմինների համագործակցությանը սույն Հոդվածի կիրառումը պարզեցնելու նպատակով:

Հոդված 7.9

Ստուգայց և հսկողական ստուգումներ

1. Յուրաքանչյուր Կողմ կարող է ստուգայց անցկացնել և/կամ հսկողական ստուգումներ արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը ապահովելու նպատակով: Կողմերը համաձայնվում են ընդլայնել ստուգայցի և տեսչության ոլորտում հետագա համագործակցությունը:

2. Ստուգայց և հսկողական ստուգումների անցկացման ժամանակ յուրաքանչյուր Կողմ հաշվի է առնում համապատասխան միջազգային չափանշվածքները, ուղեցույցներն ու հանձնարարականները:

3. Ստուգայց և հսկողական ստուգումներ անցկացնող Կողմը տրամադրում է Կողմին, որտեղ անցկացվում են ստուգայցը և հսկողական ստուգումները՝ դրանք մեկնաբանելու հնարավորություն:

4. Ստուգայց և հսկողական ստուգումներ անցկացնող Կողմի ծախսերը հոգում է Ստուգայց և հսկողական ստուգումներն անցկացնող Կողմը, եթե Կողմերը այլ բանի մասին չեն պայմանավորվել:

Հոդված 7.10

Անվտանգությունը հաստատող փաստաթղթեր

1. Եթե Կողմերի միջև առևտրի առարկա հանդիսացող արտադրանքի (ապրանքների) անվտանգության հաստատման համար պահանջվում է ներկայացնել որևէ փաստաթուղթ, արտահանող Կողմն ապահովում է ներմուծող Կողմի պահանջների կատարումը: Ներմուծող Կողմը ապահովում է, որպեսզի նրա ներմուծման պահանջները կիրառվեն համաչափ և ոչ խտրական հիմունքներով:

2. Կողմերը պայմանավորվել են ընդլայնել Կողմերի միջև առևտրի առարկա հանդիսացող որոշակի արտադրանքի (ապրանքների) կամ արտադրանքի (ապրանքների) խմբի անվտանգության հաստատման համար երկկողմ փաստաթղթերի մշակման նպատակով համագործակցությունը:

3. Առևտրի պարզեցման նպատակով Կողմերը նպաստում են արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հաստատող փաստաթղթերում էլեկտրոնային տեխնոլոգիաների կիրառմանը:

Հոդված 7.11

Ներմուծման ստուգումներ

1. Ներմուծման ստուգումները, որոնք անցկացվում են արտահանող Կողմից ներմուծվող արտադրանքի նկատմամբ, հիմնված են այդպիսի ներմուծման հետ կապված սանիտարական և բուսասանիտարական վտանգների վրա: Այդպիսի ներմուծման ստուգումներն անցկացվում են առանց անհիմն ձգձգումների:

2. Չարգացնելով 1-ին կետը՝ ներմուծող Կողմը կարող է փոխել ստուգումների հաճախականությունը, այդ թվում՝ ֆիզիկական ստուգումների և լաբորատոր հետազոտությունների, որոնք կիրառվում են արտահանող Կողմից ներմուծվող բեռների նկատմամբ:

3. Ներմուծման ստուգման ընթացքում արտադրանքի՝ ներմուծող Կողմի ներմուծման պահանջներին անհամապատասխանության հայտնաբերման դեպքում ցանկացած ՄԲՍ միջոց պետք է համապատասխանի ԱՀԿ – ՄԲՍ Համաձայնագրին:

Հոդված 7.12

Առևտրի պարզեցում

Եթե սույն Գլխում այլ բան սահմանված չէ, ներմուծող Կողմը, որպես օրենք, չի կասեցնում առևտուրը մյուս Կողմի հետ ապրանքների մեկ խմբաքանակում ՄԲՍ պահանջներին անհամապատասխանության հայտնաբերման հիման վրա:

Հոդված 7.13

Տեխնիկական խորհրդատվություններ

1. Եթե Կողմը ենթադրում է, որ մյուս Կողմի ՍԲՍ միջոցը դիպչում է այդ Կողմի հետ իր առևտրին, նա կարող է հարցի լուծման նպատակով համապատասխան կոնտակտային կետերի միջոցով տեխնիկական խորհրդատվությունների անցկացման մասին գրավոր հարցում ուղարկել :
2. Փոխընդունելի լուծում գտնելու նպատակով հարցվող Կողմը դուրս է գալիս տեխնիկական խորհրդատվությունների առավելագույնը 60 օրվա ընթացքում, եթե այլ բան համաձայնեցված չէ: Տեխնիկական խորհրդատվությունները կարող են անցկացվել ցանկացած ձևաչափով՝ շահագրգիռ Կողմերի պայմանավորվածությամբ:
3. Եթե հարցումը կատարած Կողմը գտնում է, որ շտապ հարց է, կարող է հարցում ուղարկել՝ ավելի կարճ ժամկետում ցանկացած տեսակի քննարկումների անցկացման համար:
4. Տեխնիկական խորհրդատվությունների անցկացման նպատակով, յուրաքանչյուր Կողմ ձգտում է տրամադրել ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը տեխնիկական խորհրդատվությունների անցկացման մասին հարցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում:

Հոդված 7.14

Արտակարգ միջոցներ

1. Եթե ներմուծող Կողմը սահմանում է արտակարգ միջոցներ՝ մարդկանց, կենդանիների կամ բույսերի կյանքի և առողջության պաշտպանության համար, որոնք կիրառվում են արտահանող Կողմի նկատմամբ, ներմուծող Կողմը հնարավորինս կարճ ժամկետներում այդ մասին ծանուցում է⁶ արտահանող Կողմին: Ներմուծող Կողմը հաշվի է առնում արտահանող Կողմի ներկայացրած համապատասխան տեղեկատվությունը:
2. Կողմերից ցանկացածի հարցմամբ հնարավորինս կարճ ժամկետներում անցկացվում են արտակարգ միջոցների հետ կապված հարցերի շուրջ համապատասխան իրավասու մարմինների խորհրդատվություններ, եթե Կողմերն այլ բան չեն համաձայնեցրել:

⁶ Այդպիսի ծանուցումները համարվում են ուղղված այն դեպքերում, երբ տեղեկատվությունը ծանուցվել է ԱՀԿ-ում՝ համապատասխան կանոնների և ընթացակարգերի համաձայն:

Հոդված 7.15

Կոնտակտային կետեր և իրավասու մարմիններ

1. Յուրաքանչյուր Կողմ նշանակում է կոնտակտային կետ կամ կոնտակտային կետեր, որոնք պատասխանատու են սույն Գլխի կիրառման հարցերի համաձայնեցման համար:
2. Այդպիսի կոնտակտային կետերի գործառույթները, ի թիվս այլոց, ներառում են.
 - (ա) «Թափանցիկություն տեղեկատվության փոխանակում» հոդվածի կիրառման համաձայնեցում.
 - (բ) սույն Գլխի շրջանակներում առաջացող հարցերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակում.
 - (գ) համագործակցության վերաբերյալ հարցումների ուղղում և ստացում, անհրաժեշտ պատասխանների տրամադրում.
 - (դ) «Տեխնիկական խորհրդատվություններ» և «Արտակարգ միջոցներ» հոդվածներին համապատասխան հարցումների ուղղում և ստացում, անհրաժեշտ պատասխանների տրամադրում.
 - (ե) սույն Գլխին վերաբերող համապատասխան հարցերով սեփական տարածքում համապատասխան իրավասու մարմինների փոխգործակցություն և համաձայնեցում.
3. Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմին ներկայացնում է նշանակված կոնտակտային կետի կամ կոնտակտային կետերի մասին տեղեկատվություն, ներառյալ՝ կոնտակտային տվյալները, այն է՝ կոնտակտային անձի (կոնտակտային անձանց) անունը (անունները), հեռախոսի (-ների), ֆաքսի համարը (-ները) և էլեկտրոնային փոստի հասցեն (-ները): Յուրաքանչյուր Կողմ պետք է թարմացնի այդ տեղեկատվությունը:
4. Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմին ներկայացնում է համապատասխան իրավասու մարմինների մասին տեղեկատվությունը, նրանց պատասխանատվության ոլորտի գրավոր նկարագրությունը: Յուրաքանչյուր Կողմ պետք է թարմացնի այդ տեղեկատվությունը:
5. Կոնտակտային կետերի միջև փոխգործակցությունն իրականացվում է անգլերեն լեզվով: Կողմերը ձգտում են փոխանակվել այդպիսի փոխգործակցության շրջանակներում հարցվող անգլերեն լեզվով տեղեկատվությամբ:

ԳԼՈՒԽ 8 ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդված 8.1 Նպատակներ և սկզբունքներ

Կողմերն ընդունում են մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պահպանության և պաշտպանության կարևորությունը գիտական հետազոտությունների, մշակումների և ստեղծագործական գործունեության խթանման նպատակներով, որոնք ուղղված են տնտեսական և սոցիալական զարգացմանը, ինչպես նաև գիտելիքների և տեխնոլոգիաների տարածմանը: Կողմերը նաև ընդունում են իրավատերերի և ընդհանուր առմամբ հասարակության օրինական շահերի միջև հավասարակշռության պահպանման կարևորությունը:

Հոդված 8.2 Սահմանումները

Սույն Գլխի նպատակների համար «մտավոր սեփականություն» նշանակում է մտավոր սեփականության բոլոր կարգերը, որոնց վրա տարածվում են սույն Գլխի դրույթները, մասնավորապես՝

(ա) հեղինակային իրավունքը և հարակից իրավունքները.

(բ) արտոնագրերը (գյուտերը և /կամ օգտակար մոդելները) .
(գ) ապրանքային նշանները .

(դ) արդյունաբերական նմուշները .

(ե) աշխարհագրական տեղեկությունները և/կամ ապրանքների ծագման վայրերի անվանումները .

(զ) բույսերի նոր սորտերը:

Հոդված 8.3 Միջազգային համաձայնագրերը

1. Կողմերը, որոնք հանդիսանում են ԹՐԻՓՍ համաձայնագրի մասնակիցներ, հաստատում են ԹՐԻՓՍ համաձայնագրով սահմանված իրենց պարտավորությունները: Կողմերը, որոնք չեն հանդիսանում ԹՐԻՓՍ համաձայնագրի մասնակիցներ, հետևում են ԹՐԻՓՍ համաձայնագրի սկզբունքներին: Կողմերը հաստատում են իրենց պարտավորությունները, որոնք սահմանված են մտավոր սեփականության ոլորտում այն միջազգային պայմանագրերով, որոնց մասնակիցները__նրանք հանդիսանում են, ներառյալ՝

(ա) «Արդյունաբերական սեփականության պահպանության մասին» 1883 թվականի մարտի 20–ի Փարիզի կոնվենցիան .

(բ) «Գրական և գեղարվեստական երկերի պահպանության մասին» 1886 թվականի սեպտեմբերի 9–ի Բեռնի կոնվենցիան .

(գ) «Կատարողների, հնչյունագրեր արտադրողների և հեռարձակող կազմակերպությունների պահպանության մասին» 1961 թվականի հոկտեմբերի 26–ի Միջազգային Համաձայնագիրը .

(դ) «Արտոնագրային համագործակցության մասին» 1970 թվականի հունիսի 19–ի պայմանագիրը .

(ե) «Հնչյունագրեր արտադրողների իրավունքները իրենց հնչյունագրերի անօրինական պատճենահանումից պաշտպանելու մասին» 1971 թվականի հոկտեմբերի 29–ի կոնվենցիան .

(զ) «Նշանների միջազգային գրանցման մասին» 1891 թվականի ապրիլի 14–ի Մադրիդյան համաձայնագիր և «Նշանների միջազգային գրանցման մասին» Մադրիդյան

համաձայնագրի 1989 թվականի հունիսի 27-ի արձանագրությունը.

(է) «Բույսերի նոր տեսակների պահպանության մասին» 1991 թվականի մարտի 19-ի Միջազգային Համաձայնագիրը (ՈւՊՈՎ 91).

(ը) Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության՝ «Կատարումների և հնչյունագրերի մասին» 1996 թվականի դեկտեմբերի 20-ի պայմանագիրը (այսուհետ՝ ԿՀՊ).

(թ) Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության՝ «Հեղինակային իրավունքի մասին» 1996 թվականի դեկտեմբերի 20-ի պայմանագիրը (այսուհետ՝ ՀԻՊ).

(ժ) «Արտոնագրային գործընթացի նպատակով միկրոօրգանիզմների ավանդադրման միջազգային ճանաչման մասին» 1977 թվականի ապրիլի 28-ի Բուդապեշտի պայմանագիրը.

(ի) «Արդյունաբերական նմուշների միջազգային գրանցման մասին» 1928 թվականի հունիսի 1-ի Հաագայի համաձայնագիրը (1999 թվականի հուլիսի 2-ի Ժնևյան ակտ). և

(յ) «Ապրանքային նշանների վերաբերյալ օրենքների մասին» 2006 թվականի մարտի 27-ի Սինգապուրի պայմանագիրը:

Հոդված 8.4

Հեղինակային և հարակից իրավունքներ

1. Կողմերը, իրենց օրենքներին և այլ նորմատիվ իրավական ակտերին և ԹՐԻՓՍ համաձայնագրի 9-14 հոդվածներին համապատասխան, երաշխավորում և ապահովում են հեղինակների, կատարողների, հնչյունագրեր արտադրողների և եթերային հաղորդումներ հեռարձակող կազմակերպությունների շահերի արդյունավետ պահպանությունը կապված դրանց համապատասխանաբար՝ ստեղծագործությունների, կատարումների, հնչյունագրերի և եթերային հաղորդումներ հեռարձակող կազմակերպությունների հաղորդումների հետ:

2. Յուրաքանչյուր Կողմ ձգտում է ապահովել, որպեսզի իր ազգային օրենսդրությունը երաշխավորի արդյունավետ պահպանություն և ապահովի թվային միջավայրում հեղինակային և հարակից իրավունքների պահպանումը:

Հոդված 8.5

Պաշտպանության տեխնիկական միջոցները և իրավունքների կառավարման մասին տեղեկատվությունը

1. Կողմերն ապահովելու են համարժեք իրավական պահպանություն և արդյունավետ տեխնիկական միջոցների շրջանցման դեմ իրավական պահպանության արդյունավետ միջոցներ՝ ՀԻՊ-ին և ԿՀՊ-ին համապատասխան:
2. Կողմերը ապահովում են իրավունքների կառավարման մասին տեղեկատվության պաշտպանությունը ՀԻՊ-ին և ԿՀՊ-ին համապատասխան:
3. Սույն հոդվածով սահմանված պարտավորություններին վերաբերող ցանկացած բացառությունները, որոնք նախատեսված են Կողմի համապատասխան օրենքներում և այլ նորմատիվ իրավական ակտերում, կարող են կիրառվել միայն այն դեպքում, եթե դրանք չեն խոչընդոտում իրավական պահպանությանը կամ չեն նվազեցնում իրավական պահպանության միջոցների արդյունավետությունը կամ արդյունավետ տեխնիկական միջոցների շրջանցման դեմ իրավական պահպանության արդյունավետությունը:

Հոդված 8.6 **Ապրանքային նշաններ**

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է արանքների և ծառայությունների նկատմամբ ապրանքային նշանների իրավական պահպանությունը իր օրենքներին և այլ նորմատիվ իրավական ակտերին և ԹՐԻՓՍ համաձայնագրի 15-21 հոդվածներին համապատասխան:
2. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որպեսզի գրանցված ապրանքային նշանի տերնունենա բացառիկ իրավունք՝ թույլ չտալու երրորդ անձանց առանց տիրոջ համաձայնության առևտրի ընթացքում օգտագործել ապրանքների և ծառայությունների համար նույնական կամ նմանատիպ նշաններ, որոնք նույնական են կամ նման են այն նշաններին, որոնց նկատմամբ գրանցվել է ապրանքային նշանը, երբ այդպիսի օգտագործումը կարող է առաջացնել այդպիսի օգտագործման պատճառով շփոթելու աստիճան նմանություն: Նույնական ապրանքների և ծառայությունների համար նույնական նշանի օգտագործման դեպքում, պետք է հաշվի առնվի շփոթելու աստիճան նմանություն առաջացման հավանականությունը: Վերևում նկարագրված իրավունքները վնաս չեն պատճառում նախկինում ձեռք բերած իրավունքներին և չեն ազդում Կողմերի՝ իրավունքների իրականացումը դրանց օգտագործման հետ կապելու հնարավորության վրա:
3. Կողմերը կարող են նախատեսել, որ Կողմն օգտագործում է նշանը ⁷, եթե,

⁷ Առավել որոշակիության համար՝ Կողմերը գիտակցում են, որ այս դրույթը հավասարապես կարող է կիրառվել նաև թվային միջավայրում նշանի օգտագործման նկատմամբ:

մասնավորապես՝

(ա) կիրառում է նշանը ապրանքների կամ դրանց փաթեթվածքի վրա.

(բ) ապրանքները այդ նշանի տակ առաջարկում կամ վաճառքի է հանում, շուկայահանում է կամ այդ նպատակների համար պահպանում է, կամ ծառայություններ է մատուցում այդ նշանի տակ.

(գ) նշանի տակ ներմուծում կամ արտահանում է ապրանքը.

(դ) նշանն օգտագործում է հաշիվ-ապրանքագրի, գինու գնացուցակների, կատալոգի, գործարար նամակի, գործարար թղթի, գնացուցակի կամ այլ առևտրային փաստաթղթի վրա, ներառյալ ցանկացած այդպիսի փաստաթուղթ ցանկացած կրիչի վրա . կամ

(ե) օգտագործում է նշանը գովազդի մեջ:

Հոդված 8.7 Արդյունաբերական նմուշներ

Յուրաքանչյուր Կողմ ապահովում է արդյունաբերական նմուշների լիովին համարժեք և արդյունավետ իրավական պահպանությունը իր օրենքներին և այլ նորմատիվ իրավական ակտերին և ԹԲԻՓՍ համաձայնագրի 25-րդ և 26-րդ հոդվածներին համապատասխան:

Հոդված 8.8 Արտոնագրեր

1. Կողմերն իրենց համապատասխան օրենքներին և այլ նորմատիվ իրավական ակտերին և ԹԲԻՓՍ համաձայնագրի 27-34 հոդվածներին համապատասխան ապահովում են արտոնագրերի լիովին լիովին համարժեք և արդյունավետ պահպանությունը: Արտոնագրային պաշտպանությունը կարող է ապահովվել գյուտերի և/կամ օգտակար մոդելների յուրաքանչյուր Կողմի օրենքներին և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան պահպանության միջոցով:

2. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի դրույթներին հետևելու դեպքում արտոնագրեր են տրվում ցանկացած գյուտի համար, անկախ նրանց ապրանք կամ եղանակ_լինելուց, տեխնիկայի բոլոր ոլորտներում, պայմանով, որ դրանք նոր են, ունեն գյուտարարական

մակարդակ և արդյունաբերորեն կիրառելի են:⁸ ԹԴԻՓՍ համաձայնագրի 65-րդ հոդվածի 4-րդ կետի, 70-րդ հոդված 8-րդ կետի և սույն հոդվածի 3-րդ կետի համաձայն արտոնագրերը տրվում են և արտոնագրային իրավունքները կարող են իրականացվել անկախ գյուտի վայրից, տեխնիկայի ոլորտից, ինչպես նաև արանքների ներմուծումից կամ տեղում արտադրվելուց:

3. Յուրաքանչյուր Կողմ կարող է բացառել արտոնագրման ոլորտից այն գյուտերը, որոնց առևտրային օգտագործումը անհրաժեշտ է դադարեցնել իրենց տարածքի սահմաններում հասարակական կարգի և բարոյականության պահպանման համար, ներառյալ՝ մարդկանց, կենդանիների և բույսերի կյանքի և առողջության պահպանությունը, կամ շրջակա միջավայրին լուրջ վնաս հասցնելուց խուսափելու համար, պայմանով, որ նման բացառությունը չի արվում միայն այն պատճառով, որ դրանց օգտագործումը արգելված է նրա օրենսդրությամբ:

4. Յուրաքանչյուր Կողմ կարող է բացառել արտոնագրման ոլորտից՝

(ա) մարդկանց կամ կենդանիներին բուժելու ախտորոշման, թերապևտիկ և վիրաբուժական մեթոդները .

(բ) բույսերը և կենդանիները, միկրոօրգանիզմներից բացի, ինչպես նաև բույսեր և կենդանիների բուծման, ըստ էության, կենսաբանական եղանակները, որոնք տարբերվում են ոչ կենսաբանական և միկրոկենսաբանական գործընթացներից:

Կողմերը նախատեսում են բուսերի տեսակների սորտերի պահպանությունը իրականացնել կամ արտոնագրերի, կամ հատուկ օրենսդրության շրջանակներում արդյունավետ միասնական համակարգով, կամ դրանց զուգակցմամբ:⁹

5. Կողմերից յուրաքանչյուրը ապահովում է, որպեսզի արտոնագրման ցանկացած հայտ չմերժվի բացառապես այն բանի հիման վրա, որ հայտի առարկան իր մեջ ներառում է համակարգչային ծրագիր: Տեխնիկական լուծում ձևավորող համակարգչային ծրագրերին վերաբերող գյուտերի արտոնագրման հայտերը կարող են ներառվել այդպիսի Կողմի օրենքներին և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան արտոնագրաունակ առարկայի մեջ:

Հոդված 8.9

8. Սույն հոդվածի նպատակների համար Կողմը կարող է «գյուտարարական մակարդակ» և «արդյունաբերորեն կիրառելի են» արտահայտությունները համարել համապատասխանաբար՝ «ոչ ակնհայտ» և «օգտակար» արտահայտությունների հոմանիշներ:

9. Սույն ենթակետի դրույթները ենթակա են և համաձայնեցվում են ԹԴԻՓՍ համաձայնագրի 27 (3) (բ) հոդվածի ցանկացած վերանայման կամ փոփոխության հետ:

Բույսերի սորտերը

1. Կողմերը հաստատում են «Բույսերի նոր սորտերի պահպանության մասին» Միջազգային Կոնվենցիայի (ընդունվել է Փարիզում 1961 թվականի դեկտեմբերի 2-ին, վերանայվել է Ժնևում 1991 թվականի մարտի 19-ին) շրջանակներում իրենց պարտավորությունները:¹⁰

2. Սելեկցիոների թույլատվությունը պահանջվում է պահպանվող սորտի սերմնանյութի նկատմամբ առնվազն հետևյալ գործողությունների իրականացման համար՝

(ա) արտադրություն և/կամ վերարտադրություն (բազմացում) .

(բ) ցանելու համար պիտանի վիճակին հասցնելը՝ առևտրային նպատակներով բազմացնելու համար .

(գ) վաճառքի համար առաջարկելը .

(դ) վաճառք կամ այլ առևտրային շրջանառություն .

(ե) ներմուծում կամ արտահանում . և

(զ) պահպանում՝ ա)-ից մինչև ե) վերը նշված գործողությունների իրականացման նպատակներով:

Հոդված 8.10

Աշխարհագրական նշումներ և ապրանքների ծագման վայրերի անվանումներ¹¹

1. Կողմերն իրենց տարածքում ապահովում են աշխարհագրական նշումների լիովին համարժեք և արդյունավետ իրավական պահպանությունն իրենց օրենքներին և այլ նորմատիվ իրավական ակտերին և ԹՐԻՓՍ համաձայնագրի 22-րդ և 23-րդ հոդվածներին համապատասխան:

2. Կողմերն ընդունում են, որ աշխարհագրական նշումները կարող են պահպանվել

10. Առավել հստակության համար՝ այս կետը չի կիրառվում ՈՒՊՕՎ 91 համաձայնագրի մասնակից չհանդիսացող Կողմի հանդեպ: Սակայն այդպիսի Կողմը ընտրասերիչների համար պետք է առնվազն ապահովի բույսերի նոր տեսակների լիովին համարժեք և արդյունավետ պահպանություն, որը համարժեք է «Բույսերի նոր սորտերի պահպանության մասին» Միջազգային Համաձայնագրով (ընդունվել է Փարիզում 1961 թվականի դեկտեմբերի 2-ին, փոփոխություններ են իրականացվել 1978 թվականի հոկտեմբերի 23-ին) նախատեսված պահպանության մակարդակին:

11. Առավել հստակության համար՝ Կողմերն ընդունում են, որ ԵԱՏՄ-ից և ԵԱՏՄ անդամ պետություններից ծագող ապրանքների աշխարհագրական նշումները և ծագման անվանումները Սինգապուրի Հանրապետությունում կարող են պահպանվել որպես ապրանքային նշաններ կամ աշխարհագրական նշումներ Սինգապուրի Հանրապետության օրենքներին և կանոններին համապատասխան:

ապրանքային նշանների կամ աշխարհագրական նշումների կամ ապրանքների ծագման վայրերի անվանումների համակարգի միջոցով՝ Կողմերի համապատասխան օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի պահպանման պայմանով:

Հոդված 8.11

Պաշտպանություն անբարեխիղճ մրցակցությունից

Յուրաքանչյուր Կողմ ապահովում է անբարեխիղճ մրցակցությունից պաշտպանությունը իր օրենքներին և այլ նորմատիվ իրավական ակտերի և Փարիզի Համաձայնագրի 10bis հոդվածին համապատասխան:

Հոդված 8.12

Մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պահպանության ապահովում¹²

Կողմերն ապահովում են մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պահպանությունը իրենց օրենքներին և այլ նորմատիվ իրավական ակտերի և ԹՐԻՓՍ համաձայնագրի 41-61 հոդվածներին համապատասխան: Կողմերը ապահովում են իրավունքների պահպանության ընթացակարգերը ԹՐԻՓՍ համաձայնագրի III-րդ մասի համաձայն, որպեսզի հնարավոր լինի ընդունել արդյունավետ միջոցներ մտավոր սեփականության իրավունքի խախտման ցանկացած ակտի նկատմամբ:

Հոդված 8.13

Սահմանային միջոցներ¹³

1. Կողմերն իրենց օրենքներին և այլ նորմատիվ իրավական ակտերին և ԹՐԻՓՍ համաձայնագրի 51-57-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներին համապատասխան ապահովում են արդյունավետ սահմանային միջոցները ապօրինի օգտագործվող ապրանքային

12. Առավել հստակության համար՝ սույն հոդվածում ոչինչ չի պահանջում ոչնչացնել մտավոր սեփականության իրավունքները խախտող ապրանքները:

13. Սույն հոդվածի նպատակներով, Կողմը կարող է մեկնաբանել «սահմանային միջոցները» որպես մաքսային մարմինների կողմից ընդունվող միջոցներ:

նշանների¹⁴ և հեղինակային իրավունքի խախտմամբ արտադրված ապրանքների¹⁵ նկատմամբ:

2. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որպեսզի իր իրավասու մարմինները իր օրենքներին և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան կարողանան նախաձեռնել սահմանային միջոցներ, որոնք կիրառվում են հեղինակային իրավունքի խախտմամբ արտադրված ապրանքների և ապօրինի օգտագործվող ապրանքային նշաններով ապրանքների մատակարարումների նկատմամբ՝ այդ ապրանքների երկրի տարածք ներմուծման և երկրի տարածքից արտահանման ժամանակ:

3. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որպեսզի ապօրինի ապրանքային նշաններ պարունակելու կամ հեղինակային իրավունքի խախտմամբ արտադրվելու վերաբերյալ կասկած առաջացնող ապրանքների նկատմամբ իր օրենքներին և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան՝ իր իրավասու մարմինների կողմից այդ ապրանքների բացթողումը կասեցնելու ընթացակարգի նախաձեռնման համար անհրաժեշտ պահանջները անհիմն կերպով խոչընդոտ չեն հանդիսանա այդ ընթացակարգերի նախաձեռնման համար:¹⁶

4. Յուրաքանչյուր Կողմ իրավասու մարմինների կողմից ապրանքը, որպես ապօրինի ապրանքային նշաններ օգտագործող ապրանք կամ որպես հեղինակային իրավունքների խախտմամբ արտադրված ապրանք որոշվելու ժամանակ ապահովում է իրավասու մարմինների կողմից իրավատիրոջը՝ բեռնառաքիչի, արտահանողի բեռը ստացողի կամ ներմուծողի անվանման և հասցեների մասին տվյալների տրամադրումը:¹⁷

5. Յուրաքանչյուր Կողմ կարող է ստեղծել կոնտակտային կետեր՝ մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքները խախտող ապրանքների առևտրի մասին տեղեկատվության փոխանակման համար, որը տրամադրվելու է Կողմի հարցման դիմաց: Կողմերը կարող են, մասնավորապես, նպաստել իրենց սահմանապահ մարմինների միջև տեղեկատվության փոխանակմանը և համագործակցությանը:

14. Սույն հոդվածի նպատակներով՝ «ապօրինի օգտագործվող ապրանքային նշաններով ապրանքները» ցանկացած ապրանքներն են, ներառյալ դրանց փաթեթվածքը, որոնք առանց թույլատվության մակնշվել են ապրանքային նշանով, որը օրինական գրանցված է այդպիսի ապրանքների համար, կամ, որը էական հատկանիշներով չի կարող տարբերվել նմանատիպ ապրանքային նշանից և, որը այդ պատճառով խախտում է տվյալ ապրանքային նշանի տիրոջ իրավունքները ներմուծող երկրի օրենքներին և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան:

15. Սույն հոդվածի նպատակների համար «հեղինակային իրավունքի խախտմամբ արտադրված ապրանքները» ցանկացած ապրանքներն են, որոնք հանդիսանում են առանց իրավատիրոջ կամ ապրանքի արտադրման երկրում նրա կողմից պատշաճ կերպով լիազորված անձի թույլատվության ստեղծված պատճեններ և, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով պատրաստված են որևէ արտադրատեսակից, այն դեպքում, եթե նշված պատճենի ստեղծումը ներմուծող երկրի օրենքներին և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան հանդիսացել է հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքի խախտում:

16. Առավել հստակության համար Կողմերն ընդունում են, որ Սինգապուրի Հանրապետությունում իրավատերերի կողմից նախաձեռնվող ընթացակարգերը կիրառվում են միայն ներմուծվող ապրանքների նկատմամբ:

17. Սույն Հոդվածի նպատակների համար Կողմը կարող է մեկնաբանել «բեռնառաքիչը, արտահանողը, բեռը ստացողը և ներմուծողը» որպես «հայտարարատու»:

Հոդված 8.14 Համագործակցությունը

1. Կողմերը ձգտելու են խորացնել համագործակցությունը հետևյալ ոլորտներում՝

(ա) տեղեկատվության և փորձի փոխանակման միջոցով՝ մտավոր սեփականության կառավարում, արտոնագրում, գրանցում և շահագործում.

(բ) մտավոր սեփականության համակարգերի ներդրման մասին տեղեկատվության փոխանակում, որոնք ուղղված են մտավոր սեփականության իրավունքների արդյունավետ գրանցմանը, ներառյալ՝ աշխարհագրական նշանների և ապրանքների ծագման վայրերի անվանումների պաշտպանությունը.

(գ) բազմակողմանի և տարածաշրջանային համաժողովների ընթացքում մտավոր սեփականության ոլորտում նախաձեռնությունների վերաբերյալ քաղաքականությունների իրականացման շուրջ երկխոսություն.

(դ) մտավոր սեփականության իրավունքների և համակարգերի առավելությունների մասին տեղեկացվածության բարձրացման նպատակով նախաձեռնությունների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում և համագործակցություն.

(ե) մտավոր սեփականության ոլորտում ուսուցում. ինչպես նաև

(զ) ցանկացած այլ համագործակցության ոլորտներ, որոնք Կողմերը կարող են համաձայնեցնել:

2. Կողմերից մեկի խնդրանքի դեպքում, Կողմերը պետք է ձգտեն՝

(ա) քննարկել Կողմերի միջև համագործակցությանն աջակցելու ուղիները.

(բ) ծանուցել միմյանց սույն գլխում նախատեսված ընթացակարգերի կատարման համար պատասխանատու՝ իրավասու մարմինների և համապատասխան կոնտակտային կետերի մասին.

(գ) տեղեկացնել միմյանց (բ) ենթակետում նշված կոնտակտային կետերի ցանկացած փոփոխության մասին. ինչպես նաև

(դ) անցկացնել սույն Գլխի կատարման հետ կապված հարցերով

խորհրդատվություններ:

3. Կողմերը կարող են պայմանավորվել մտավոր սեփականության պաշտպանության կոնկրետ հարցերի շուրջ բանակցությունները սկսելու մասին:

4. Ամբողջ համագործակցությունը սույն Հոդվածին համապատասխան իրականացվում է Կողմերից յուրաքանչյուրի իրավասու մարմինների համար փոխընդունելի պայմաններով: Ցանկացած համագործակցությունը նաև կախված է յուրաքանչյուր Կողմի ռեսուրսների առկայությունից: Տվյալ հոդվածը Կողմերի միջև ֆինանսական միջոցների փոխանցում չի պահանջում:

Հոդված 8.15

Տեխնոլոգիաների փոխանցում և մտավոր սեփականություն

1. Կողմերը կարող են անցկացնել տեղեկատվական սեմինարներ, թրենինգներ, կլոր սեղաններ և այլ միջոցառումներ, որոնք նվիրված կլինեն՝ թվային նորարարությունները, գործարարությունն ու առաջատար տեխնոլոգիաների կիրառումը և մտավոր սեփականությունը ընդգրկող տեխնոլոգիաների փոխանցման ոլորտներում;

2. Ցանկացած Կողմ կարող է համաձայնություն հայտնել տեխնոլոգիաների փոխանցման ոլորտի շահագրգիռ մասնագիտացված հաստատությունների միջև, ինչպիսիք են գիտական կենտրոնները, [երկկողմ բանակցությունների շուրջ բանակցությունները սկսելու վերաբերյալ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր առանձին Կողմի ազգային օրենսդրությունը և քաղաքականությունը, ռեսուրսները և պատրաստակամությունը:]

ԳԼՈՒԽ 9

Էլեկտրոնային առևտուր

Հոդված 9.1

Ընդհանուր դրույթները և կիրառման ոլորտը

1. Սույն Գլուխը կիրառվում է Կողմի ուժով կիրառվող կամ պահպանվող և

էլեկտրոնային առևտրի վրա ազդող միջոցների նկատմամբ:

2. Կողմերն ընդունում են էլեկտրոնային առևտրի տնտեսական աճը և տրամադրվող հնարավորությունները, էլեկտրոնային առևտրի հարաճուն և նորարարական բնույթը, որը դրական է ազդում Կողմերի միջև փոխադարձ առևտրի աճի վրա, ինչպես նաև՝ էլեկտրոնային առևտրի նկատմամբ սպառողի վստահության բարձրացման կարևորությունը:

3. Կողմերն աջակցելու են էլեկտրոնային առևտրի զարգացմանը՝ հաշվի առնելով էլեկտրոնային առևտրի հետ կապված անհիմն արգելքներ սահմանելուց խուսափելու կարևորությունը:

4. Սույն Գլուխը չի կիրառվում՝

(ա) Պետական գնումների,

(բ) պահվող և մշակվող տեղեկատվության, ներառյալ Կողմի կողմից կամ նրա անունից հավաքվող և փոխանցվող տեղեկատվությունը, կամ այդպիսի տեղեկատվությանը վերաբերող միջոցների համար, ներառյալ դրա հավաքման, պահման, մշակման կամ փոխանցման միջոցները:

Հոդված 9.2 Սահմանումներ

Սույն Հավելվածի նպատակների համար.

«**Անհատական տվյալներ**» նշանակում է ուղղակի կամ անուղղակի տեղեկատվություն, որը վերաբերում է որոշակի կամ որոշվող ֆիզիկական անձին:

«**էլեկտրոնային փաստաթուղթ**» փաստաթուղթ է, որում տեղեկատվությունը ներկայացված է էլեկտրոնային ձևով/ձևաչափով՝ ընդունող Կողմի օրենքներին և այլ նորմատիվային իրավական ակտերին համապատասխան:

Հոդված 9.3 Մաքսատուրքեր

1. Կողմերը վերահաստատում են ընթացիկ մոտեցումը, որը համապատասխանում է ԱՀԿ Գլոբալ էլեկտրոնային առևտրի մասին հայտարարագրին (WT/MIN(98)/DEC/2) և ԱՀԿ էլեկտրոնային առևտրի մասին աշխատանքային ծրագրին (WT/L/274):

2. Կողմերը իրավունք են վերապահում փոխելու սույն Հոդվածի 1-ին կետում հիշատակվող իրենց մոտեցումը՝ էլեկտրոնային առևտրի մասին աշխատանքային ծրագրի վերաբերյալ ԱՀԿ Նախարարական Գիտաժողովի ապագա ցանկացած որոշումներին համապատասխան:

Հոդված 9.4

Ներքին նորմատիվային իրավական բազա

1. Կողմերը, որքանով դա հնարավոր է, իրենց օրենքներում և այլ նորմատիվային իրավական ակտերում, նկատի են ունենում էլեկտրոնային առևտրի հետ կապված կիրառելի հանձնարարականները, համաձայնագրերը կամ կաղապարային օրենքները:

2. Կողմերն ընդունում են էլեկտրոնային առևտրի հետ կապված ցանկացած հավելյալ կարգավորիչ բեռնվածքից խուսափելու անհրաժեշտությունը:

Հոդված 9.5

Էլեկտրոնային ստորագրություններ

1. Կողմերն ընդունում են, որ էլեկտրոնային ստորագրություններն ունեն ոչ էլեկտրոնային ձևով ստորագրություններին համանման իրավաբանական ուժ, եթե այլ բան չի սահմանվել նրանց օրենսդրությամբ և այլ նորմատիվային իրավական ակտերով:

2. Առավել հստակության համար՝ սույն Հոդվածի 1-ին կետում հիշատակվող էլեկտրոնային ստորագրությունները պետք է համապատասխանեն օրենսդրությամբ և այլ նորմատիվային իրավական ակտերով սահմանված օրենսդրական պահանջներին:

3. Կողմերը պետք է հասնեն էլեկտրոնային ստորագրությունների հետ կապված միմյանց օրենսդրություն և այլ նորմատիվային իրավական ակտերի ավելի լավ ընկալմանը:

4. Կողմերը ձգտում են էլեկտրոնային ստորագրությունների փոխադարձ ճանաչմանը, որտեղ այն կիրառելի է:

5. Էլեկտրոնային ստորագրությունների փոխադարձ ճանաչումը խրախուսելու համար Կողմերն ուսումնասիրում են երկու Կողմերում հասանելի մշակումները, որոնք ապահովում են տվյալների պաշտպանության և ամբողջականության բարձր մակարդակ:

Հոդված 9.6

Էլեկտրոնային փաստաթղթերի օգտագործումը

1. Կողմերը ձգտում են էլեկտրոնային ձևով հասարակայնորեն հասանելի դարձնել Կողմերի միջև առևտրի հետ կապված փաստաթղթերը:

2. Կողմերը ձգտում են

(ա) ապահովել, որպեսզի փաստաթղթերը, որոնք կապված են Կողմերի միջև առևտրի հետ, Կողմերի լիազորված մարմիններին ներկայացվեն էլեկտրոնային փաստաթղթերի ձևով,

(բ) չմերժել Կողմերի միջև առևտրի հետ կապված փաստաթղթերի մշակման մեջ միայն այն բանի հիման վրա, որ դրանք էլեկտրոնային փաստաթղթի ձևով են,

(գ) չկիրառել կամ ուժի մեջ պահպանել միջոցները, որոնք պարունակում են Կողմերի միջև առևտրի հետ կապված փաստաթղթերի ներկայացման պահանջներ, միայն այն բանի հիման վրա, որ անհրաժեշտ է հաստատել էլեկտրոնային ձևով կատարված այդպիսի փաստաթղթերի իսկությունը:

Հոդված 9.7

Անհատական տվյալների պաշտպանություն

1. Կողմերն ընդունում են էլեկտրոնային առևտրի օգտատերերի անհատական տվյալների պաշտպանության տնտեսական և սոցիալական առավելությունները և այն ներդրումը, որն այն կատարում է էլեկտրոնային առևտրի նկատմամբ սպառողի վստահության բարձրացման մեջ:

2. Կողմերը, իրենց օրենքներին և այլ նորմատիվային իրավական ակտերին համապատասխան, կիրառում կամ պահպանում են միջոցները, որոնք երաշխավորում անհատական տվյալների պաշտպանությունը, ներառյալ անհատական տվյալների անդրսահմանային փոխանցումը, ինչպես նաև դրա հետ կապված պայմանները և պահանջները:

Հոդված 9.8

Էլեկտրոնային առևտրում տեղեկատվության անդրսահմանային փոխանցում

1. Սույն հոդվածը չի կիրառվում անհատական տվյալների փոխանցման հետ կապված միջոցների նկատմամբ:
2. Կողմերն ընդունում են, որ յուրաքանչյուր Կողմ ունի տեղեկատվության անդրսահմանային փոխանցման մասով իր օրենսդրությունը և այլ նորմատիվային իրավական ակտերը:
3. Յուրաքանչյուր Կողմ կարող է թույլատրել էլեկտրոնային կապի միջոցների օգնությամբ տեղեկատվության անդրսահմանային փոխանցումը պայմանով, որ այդ տեղեկատվությունը պետք է օգտագործվի բիզնեսի նպատակների համար և գոյություն ունեցող օրենքների և այլ նորմատիվային իրավական ակտերին համապատասխան:
4. Ոչինչ սույն Հոդվածում չի արգելում Կողմին կիրառել կամ պահպանել ուժի մեջ սույն Հոդվածի 3-րդ կետին չհամապատասխանող միջոցները՝ հասնելու պետական քաղաքականության օրինական նպատակներին՝ «Ընդհանուր բացառություններ» XX.XX-րդ հոդվածի և/կամ «Բացառություններ անվտանգության նկատառումներով» XX.XX-րդ Հոդվածին համապատասխան:

Հոդված 9.9

Սպառողների պաշտպանությունը

1. Յուրաքանչյուր Կողմ, հնարավորության սահմաններում, կիրառում է սպառողների պաշտպանության միջոցներ էլեկտրոնային առևտրին մասնակցող սպառողների նկատմամբ:
2. Յուրաքանչյուր Կողմ կիրառում կամ ուժի մեջ է թողնում օրենքներ և այլ նորմատիվային իրավական ակտեր խարդախ և մոլորեցնող առևտրային գործունեությունն արգելելու համար, որը վնաս է հասցնում կամ կարող պոտենցիալ վնաս հասցնել սպառողներին և կրող է ներառել՝
 - (ա) ապրանքի մասին տեղեկատվության աղավաղում,
 - (բ) սպառողին ապրանքների առաքման կամ ծառայությունների մատուցման մերժում այն բանից հետո, երբ նրանից վերցվել է վճարը,
 - (գ) Վճարի գանձում կամ հաշվից հաշվեգրում առանց հավաստագրման:

3. Յուրաքանչյուր Կողմ, որտեղ դա հնարավոր է, խրախուսում է էլեկտրոնային առևտրում գործարար պրակտիկաները, որոնք պաշտպանում են սպառողին, ինչպիսիք են օրինակ՝

(ա) ճշգրիտ և պարզ տեղեկատվության տրամադրումը, որպեսզի սպառողը կարողանա կայացնել գիտակցված որոշում,

(բ) սպառողին ապրանքների երաշխիքային շրջանի և պիտանիության ժամկետի մասին տեղեկատվության տրամադրումը,

(գ) սպառողի՝ գնումը կատարելու մտադրությունը հաստատելու նպատակով հարցումը,

(դ) ապրանքների անվտանգ լինելը հաշվի առնելը:

Հոդված 9.10

Չհարցվող առևտրային էլեկտրոնային հաղորդագրություններ

1. Յուրաքանչյուր Կողմ նկատի է ունենալու չհարցվող առևտրային էլեկտրոնային հաղորդագրությունների քանակի նվազեցման կարևորությունը, որոնք հանդիսանում են առևտրային կամ մարքեթինգային նպատակներով առանց ստացողի համաձայնության կամ ստացողի կողմից արտահայտված մերժմանը՝ չնայած էլեկտրոնային հասցեին կամ էլեկտրոնային սարքի ուղարկվող հաղորդագրություններ:

2. Յուրաքանչյուր Կողմ ձգտում է սպառողներին տրամադրել պաշտպանության հնարավորություն՝ չհարցվող առևտրային էլեկտրոնային հաղորդագրություններ տարածողներից:

Հոդված 9.11

Սպառողի իրավունքների պաշտպանության մարմինների փոխգործակցությունը

1. Կողմերն ընդունում են սպառողների պաշտպանության հարցերով իրենց համապատասխան ազգային մարմինների կամ այլ համապատասխան մարմինների միջև սպառողի բարեկեցության բարելավման նպատակով անդրսահմանային էլեկտրոնային առևտրի հետ կապված հարցերով համագործակցության կարևորությունը: Այդ նպատակով Կողմերը ստեղծում են սպառողի պաշտպանության հարցերով համապատասխան մարմինները ներառող կոնտակտային խումբ, որի նպատակն է՝

(ա) փոխադարձ համաձայնեցված ժամանակահատվածի շրջանակներում օրենսդրության և իրավակիրառման հարցերով տեղեկատվության և փորձի փոխանակումը,

(բ) համագործակցությունը սպառողների իրավունքների ոլորտում, որքան դա հնարավոր է,

(գ) սույն Գլխի XX.9-րդ և XX.11-րդ Հոդվածներով ընդգրկված միջոցների միջազգային պարտավորությունների դիտարկումները և կիրառումը:

2. Կողմերը կարող են ուսումնասիրել էլեկտրոնային առևտրում սպառողների իրավունքների պաշտպանության հետ կապված նախաձեռնությունների առաջխաղացման հնարավորությունը:

Հոդված 9.12 Համագործակցություն

Ընդունելով էլեկտրոնային առևտրի գլոբալ բնույթը և էլեկտրոնային առևտրի նկատմամբ վստահությունը բարձրացնելու նպատակով՝ Կողմերը ձգտում են՝

(a) համագործակցել էլեկտրոնային առևտրի օգտագործման ժամանակ հանդիպող փոքր և միջին ձեռնարկություններին օգնելու նպատակով,

(b) փոխանակվել օրենսդրության և իրավակիրառման հարցերով տեղեկատվությամբ և փորձով, ինչպես նաև համագործակցել

- (i) անհատական տվյալների պաշտպանության,
- (ii) էլեկտրոնային առևտրում անվտանգության,
- (iii) չհարցվող առևտրային էլեկտրոնային հաղորդագրությունների,
- (iv) էլեկտրոնային ստորագրությունների, և
- (v) էլեկտրոնային առևտրի պարզեցման համար լոգիստիկայի հարցերով:

(c) խրախուսել էլեկտրոնային առևտրի հետ կապված նոր տեխնոլոգիաների զարգացումը, ինչպիսիք են մեծ տվյալները, բլոկչեյնը, ամպային հաշվարկները, էլեկտրոնային ապրանքաուղեկցող փաստաթղթերը և լեզվաբանական տեխնոլոգիաները,

(d) խրախուսել մասնավոր հատվածում ինքնակարգավորման միջոցների կիրառումը, այդ թվում՝ էլեկտրոնային առևտրի զարգացմանը նպաստող վարքագծի օրենսգրքերի, պայմանագրերի օրինակների և հանձնարարականների միջոցով,

(e) կանխարգելել էլեկտրոնային առևտրում խարդախ և մոլորեցնող պրակտիկաները,

(f) փոխանակվել Կողմերի միջև էլեկտրոնային առևտրի մասով առևտրի ծավալների մասին հասանելի վիճակագրական տեղեկատվությամբ, որտեղ դա հնարավոր է,

(g) կազմակերպել սեմինարներ և փորձագիտական երկխոսություններ Կողմերի պետական կառույցների և մասնավոր հատվածի ներկայացուցիչների միջև:

Հոդված 9.13 Կոնտակտային կետեր

1. Կողմերը նշանակում են շփման կետ, որը ցանկացած հարցերով պատասխանատու է հիմնականում մյուս Կողմի և Համատեղ կոմիտեի հետ հաղորդակցության համար, որոնք առաջանում են սույն Գլխի ներդրման ժամանակ:

2. Շփման կետերի գործառույթները ներառում են՝

(ա) սույն Գլխի կիրառման ոլորտի շրջանակներում տեղեկատվության փոխանակում,

(բ) սույն Գլխի կիրառման ոլորտի շրջանակներում համագործակցության վերաբերյալ հարցումների ուղարկում և ստացում, և համապատասխան պատասխանների տրամադրում,

(գ) խորհրդատվությունների վերաբերյալ հարցումների ուղարկում և ստացում՝ համապատասխան սույն Գլխի XX.14-րդ Հոդվածին և համապատասխան պատասխանների տրամադրում:

3. Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմին տրամադրում է նշանակված շփման կետերի անուններն ու կոնտակտային տվյալները: Յուրաքանչյուր Կողմ պետք է ժամանակին տեղեկացնի մյուս Կողմին շփման կետի տվյալների ցանկացած փոփոխության մասին:

Հոդված 9.14 Խորհրդատվություններ

1. Կողմերի միջև փոխըմբռնման ամրապնդման նպատակով կամ սույն Գլխից բխող որոշակի հարցերի լուծման համար յուրաքանչյուր Կողմ կարող է իր շփման կետի միջոցով, որը հիմնադրվել է սույն Գլխի 13-րդ Հոդվածին համապատասխան, հարցում կատարել մյուս Կողմի հետ խորհրդատվությունների անցկացման մասին:

2. Այդպիսի խորհրդատվությունները, եթե Կողմերի միջև համաձայնեցված են եղել, կարող են անցկացվել Կողմերի միջև համաձայնեցված ցանկացած եղանակներով:

ԳԼՈՒԽ 10
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐ
Հոդված 10.1
Նպատակներ

Կողմերն ընդունում են պետական գնումների ոլորտում թափանցիկության մակարդակի բարձրացման և Կողմերի միջև համագործակցության զարգացման կարևորությունը:

Հոդված 10. 2
Կիրառման ոլորտ

1. Սույն գլուխը տարածվում է պետական գնումներին վերաբերող օրենքներին, այլ նորմատիվ իրավական ակտերին և ընթացակարգերին. Պետական գնումներն իրականացվում են թափանցիկության և արդյունավետության սկզբունքներին համապատասխան:

2. Կողմերը սահմանում են համագործակցության հիմնական ուղղությունները և թափանցիկության սկզբունքները:

3. Սույն Գլխի իրականացման նպատակով, Պետական Գնումներ եզրույթը սահմանվում է յուրաքանչյուր Կողմի օրենքներին և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան:

Հոդված 10.3

Տեղեկատվություն գնումների համակարգի մասին

1. Կողմերը պաշտոնական լեզվով հրապարակում են.

(ա) իրենց օրենքները և այլ նորմատիվ իրավական ակտերը, ինչպես նաև

(բ) պետական գնումների վերաբերյալ հանրամատչելի տեղեկատվությունը, ներառյալ պետական գնումների ոլորտում ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվությունը տվյալ Համաձայնագրի Հավելված 1-ում նշված աղբյուրներում: Թափանցիկության մակարդակի բարձրացման նպատակով, Կողմերն ապահովում են արդիական տեղեկատվության ազատ հասանելիությունը:

2. Կողմերը ձգտում են ընդլայնել պետական գնումների վերաբերյալ էլեկտրոնային աղբյուրներում հրապարակվող տեղեկատվության ցանկը:

Հոդված 10.4

Համագործակցություն

1. Կողմերը ձգտում են համագործակցել պետական գնումներին վերաբերող հարցերի շուրջ, մասնավորապես հետևյալ ուղղություններով.

(ա) Կողմերի օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի, պրակտիկայի և վիճակագրության ու համապատասխան փոփոխությունների մասին փորձի և տեղեկատվության փոխանակում,

(բ) Գնումների իրականացման համար էլեկտրոնային միջոցների օգտագործման զարգացում,

(գ) Լավագույն պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում, ներառյալ՝ Կողմերի միկրո, փոքր և միջին ձեռնարկություններին առնչվող լավագույն փորձը,

(դ) Պետական գնումներին առնչվող հարցերի շուրջ իրավասու մարմինների փոխգործակցության ուժեղացում,

(ե) Էլեկտրոնային գնումների ոլորտում անվտանգ հուսալի տարածքի ստեղծում, ներառյալ՝ պետական գնումների իրականացման ընթացքում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությանն աջակցությունը, ինչպես նաև

(զ) Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սահմանված՝ համագործակցության այլ ուղղություններ:

Հոդված 10.5 Կոնտակտային կետեր

1. Յուրաքանչյուր Կողմ նշանակում է կոնտակտային կետ, որը պատասխանատու է սույն Գլխի կիրառման հարցերով փոխգործակցության համար:

Այդ կոնտակտային կետերի գործառույթները ներառում են.

(ա) տեղեկատվության փոխանակում սույն Գլխի կիրառման շրջանակներում,

(բ) համագործակցության մասին հարցումների ուղարկում և ստացում սույն Գլխի կիրառման շրջանակներում և համապատասխան պատասխանների տրամադրում,

(գ) խորհրդատվությունների մասին հարցումների ուղարկում և ստացում «խորհրդատվություններ» XX.8-րդ հոդվածին համապատասխան և համապատասխան պատասխանների տրամադրում,

(դ) տեղեկատվության տրամադրում մյուս Կողմի շահագրգռված անձանց բոլոր հարցումների վերաբերյալ, որոնք վերաբերում են սույն Գլխի կիրառման ոլորտին:

2. Կողմերը միմյանց տրամադրում են իրենց կոնտակտային կետերի անուններն ու կոնտակտները: Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմին ժամանակին տեղեկացնում է իր կոնտակտային կետի հետ կապված ցանկացած փոփոխության մասին:

Հոդված 10.6 Խորհրդատվություններ

1. Սույն Գլխի իրականացման նպատակով՝ Կողմը, մյուս Կողմի հարցումով, ողջամիտ ժամկետում կարող է ներկայացնել պետական գնումների հարցերին առնչվող բացատրություններ:

2. Կողմերի միջև փոխըմբռնումն ամրապնդելու կամ սույն Գլխի իրականացման ընթացքում առաջացող որոշակի հարցերի լուծման համար, յուրաքանչյուր Կողմ սույն

Գլխի XX-րդ Հոդվածին համապատասխան ստեղծված՝ մյուս Կողմի կոնտակտային կետի հարցումով, մասնակցում է մյուս Կողմի բարձրացրած հարցերի շուրջ փորձագիտական խորհրդատվություններին: Հայցվող Կողմն ապահովում է խորհրդատվությունների առարկա հանդիսացող հարցի լրիվ և բազմակողմ քննարկումը, այնքան սեղմ ժամկետում, որքան որ դա հնարավոր է գործնականում:

3. Խորհրդատվություններն անցկացվում են առերես հանդիպումների կամ Կողմերի միջև համաձայնեցված այլ եղանակներով:

Հոդված 10.7 Հետագա բանակցություններ

Կողմերը, անհրաժեշտության դեպքում, կարող են սկսել բանակցություններ պետական գնումների շուկաների ազատականացման և շուկաներ հնարավոր մուտքի հետ կապված հարցերի քննարկման նպատակով:

Հոդված 10.8 Գլուխ 14-ի չկիրառումը (Վեճերի կարգավորում)

Գլուխ 14-ը (Վեճերի կարգավորում) չի տարածվում սույն Գլխի վրա և Կողմերից ոչ մեկը վեճերի լուծման համար չի դիմում Գլուխ 14-ը (Վեճերի կարգավորում) կիրառմանը, որոնք առաջացել են սույն Գլխի շրջանակներում:

Հավելված 10-1

Պետական գույների ոլորտում օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի հրապարակում¹⁸

Հայաստանի Հանրապետության պաշտոնական կայքը՝ www.procurement.am;

Բելառուսի Հանրապետության պաշտոնական կայքեր՝ www.icetrade.by www.pravo.by;
www.zakupki.butb.by; www.goszakupki.by; www.butb.by;

Ղազախստանի Հանրապետության պաշտոնական կայքեր՝ www.goszakup.gov.kz
www.adilet.zan.kz

Ղրղզստանի Հանրապետության պաշտոնական կայքը՝ www.zakupki.gov.kg

Ռուսաստանի Դաշնության պաշտոնական կայքեր՝ www.pravo.gov.ru (Օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի հրապարակում) www.zakupki.gov.ru (Պետական գնումների վերաբերյալ տեղեկատվության հրապարակում)

¹⁸ Վերը նշված կայքերի ցանկացած փոփոխության դեպքում՝ համապատասխան Կողմը տեղեկացնելու է մյուս Կողմին այդ փոփոխության մասին իր կոնտակտային կետերի միջոցով:

Սինգապուրի Հանրապետության պաշտոնական կայքեր՝ <https://sso.agc.gov.sg>
(Օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի հրապարակում)
<https://www.gebiz.gov.sg> (Պետական գնումների վերաբերյալ տեղեկատվության
հրապարակում)

ԳԼՈՒԽ 11

Մրցակցություն

Հոդված 11.1

Նպատակներ և պատճառներ

1. Հաշվի առնելով առևտրային հարաբերություններում բարեխիղճ մրցակցության կարևորությունը՝ Կողմերն ընդունում են, որ հակամրցակցային պրակտիկաների կանխարգելումը և սույն Գլխում ներառված հարցերով համագործակցությունը նպաստելու են իրենց շուկաների պատշաճ գործունեությանը և կանխարգելելու է այնպիսի իրավիճակները, երբ առևտրի ազատականացման շահավետությունը կարող է դրվել կասկածի տակ:
2. Յուրաքանչյուր Կողմ, իր օրենքներին և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան, ընդունում է բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնք համարում է հիմնավորված, իր շուկայում հակամրցակցային պրակտիկաների կանխարգելման և վերացման նպատակով:
3. Յուրաքանչյուր Կողմ իրեն է վերապահում մրցակցությանը վերաբերող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի մշակման և կիրառման իրավունք: Կողմերն

ապահովում են մրցակցության ոլորտում օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի կիրառման համար պատասխանատու իրավասու մարմինների կողմից որոշումների ընդունման անկախությունը:

4. Մրցակցության ոլորտում իրավակիրառ գործունեությունը թույլ չի տալիս ազգային սկզբունքով խտրականության դրսևորում:

5. Յուրաքանչյուր Կողմի համապատասխան իրավասու մարմինները երաշխավորում են, որ մրցակցության ոլորտում օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի խախտման մասին վերջնական որոշում կայացնելուց առաջ, անձին ներկայացվելու է ենթադրվող խախտման վերաբերյալ հիմնավորումը և հնարավորություն, որպեսզի Կողմը ներկայացնի իր դիրքորոշումը և իր օգտին ապացույցները:

6. Անձին, որի նկատմամբ որոշում է կայացվել մրցակցության ոլորտում օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի խախտման վերաբերյալ, տրվում է տվյալ որոշումը տվյալ Կողմի օրենքներին և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան բողոքարկելու հնարավորություն:

Հոդված 11.2

Հակամրցակցային պրակտիկաներ

1. Կողմերը պայմանավորվել են սույն Համաձայնագրի իրականացման հետ համատեղելի չեն հետևյալ հակամրցակցային պրակտիկաները՝

(ա) տնտեսավարող սուբյեկտների հակամրցակցային համաձայնագրերը և համաձայնեցված գործողությունները, որոնց նպատակը և արդյունքն է հանդիսանում իրեն շուկաներում մրցակցությունը թույլ չտալը, սահմանափակելը, խեղաթյուրելը կամ կանխարգելելը¹⁹:

(բ) մեկ կամ մի քանի տնտեսավարող սուբյեկտների կողմից իրենց շուկաներում գերիշխող դիրքի չարաշահումը:

2. Յուրաքանչյուր Կողմ, իր օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան, ապահովում է տնտեսական գործունեության համակենտրոնացման

¹⁹ Կողմերը պայմանավորվել են, որ Կողմերից յուրաքանչյուրը կիրառելու է «կանխարգելում» կամ «խեղաթյուրում» եզրաբառը կախված այն բանից, թե դրանցից որն է կիրառվում համապատասխան օրենքներում կամ այլ նորմատիվ իրավական ակտերում:

արդյունավետ հսկողությունը այնքանով, որքանով դա անհրաժեշտ է այդ Կողմի տարածքում մրցակցության պաշտպանության և զարգացման համար:

Հոդված 11.3

Թափանցիկություն

1. Յուրաքանչյուր Կողմ հրապարակում է մրցակցության ոլորտում իր օրենքները և այլ նորմատիվ իրավական ակտերը, ինչպես նաև մրցակցության ոլորտում օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի խախտման մասին իր իրավասու մարմինների վերջնական որոշումների մասին տեղեկատվությունը Հավելված 1-ում և Հավելված 2-ում նշված պաշտոնական համացանցային կայքերում: Հավելված 1-ում նշված համացանցային կայքերի հասցեները փոխվելու դեպքում, համապատասխան Կողմը մյուս Կողմին տեղեկացնում է այդպիսի փոփոխությունների մասին իր կոնտակտային կետերի միջոցով: Հավելված 2-ում նշված համացանցային կայքերի հասցեները փոխվելու դեպքում, համապատասխան Կողմը ձգտում է մյուս Կողմին տեղեկացնել այդպիսի փոփոխությունների մասին իր կոնտակտային կետերի միջոցով:

2. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որպեսզի մրցակցության ոլորտում օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի խախտման մասին համապատասխան իրավասու մարմինների բոլոր վերջնական որոշումները շարադրվեն գրավոր տեսքով և պարունակեն համապատասխան փաստեր և իրավաբանական հիմնավորումներ, որոնց հիման վրա այդ որոշումներն ընդունվել են:

3. Յուրաքանչյուր Կողմ նաև ձգտում է հասանելի դարձնել փաստերը և իրավաբանական հիմնավորումները, որոնց հիման վրա որոշումներն ընդունվել են՝

(ա) իր օրենքների և այլ իրավական նորմատիվ ակտերին համապատասխան.

(բ) գաղտնի տեղեկատվության պաշտպանության անհրաժեշտությունից ելնելով.

(գ) պետական քաղաքականության կամ հասարակական շահերի հետ կապված տեղեկատվության պաշտպանության անհրաժեշտությունից ելնելով:

Հոդված 11.4

Համագործակցություն

1. Կողմերն ընդունում են մրցակցության ոլորտում արդյունավետ իրավակիրառմանն աջակցելու նպատակով իրավասու մարմինների միջև համագործակցության կարևորությունը: Համագործակցությունը ներառում է՝

(ա) մրցակցության ոլորտում պատշաճ իրավակիրառական գործունեության նախաձեռնման վերաբերյալ հարցումների ուղղում, եթե Կողմերից մեկի կարծիքով, իր շահերին դիպել են մյուս Կողմի տարածքում հակամրցակցային պրակտիկաների միջոցով: Այդպիսի հարցումը պետք է կատարվի հակամրցակցային պրակտիկաների կիրառման որքան հնարավոր է վաղ շրջանում և պետք է պարունակի այդ հարցումն ուղարկելու պատճառները, բոլոր անհրաժեշտ մանրամասնություններով:

i. Հարցումը ստացող Կողմը, իր օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան, մանրակրկիտ ուսումնասիրում է իրավակիրառ գործողությունների իրականացման կամ ընթացիկ իրավակիրառ գործողությունների ընդլայնման հնարավորությունը և տեղեկացնում է հարցում կատարած Կողմին այդ ուսումնասիրության արդյունքների մասին, այնքան արագ, որքան դա հնարավոր է գործնականում.

ii. Իրավակիրառ գործողությունների կիրառման կամ ընդլայնման դեպքում, Կողմը, որին հասցեագրված է հարցումը, հարցում կատարած Կողմին տեղեկացնում է գործողությունների արդյունքների մասին և, հնարավորության դեպքում, էական նշանակություն ունեցող միջանկյալ գործողությունների մասին:

Սույն Գլխում ոչինչ չի սահմանափակում հարցումը ստացող Կողմին հարցման մեջ նշված հակամրցակցային պրակտիկաների նկատմամբ իրավակիրառ գործողությունների կիրառման մասին որոշում կայացնելու ազատությունը, ինչպես և հարցում կատարող Կողմին չի խոչընդոտում հետ կանչել հարցումը.

բ) հարցում ուղարկել տեղեկատվության փոխանակման վերաբերյալ՝ մրցակցության ոլորտում իրավակիրառ գործունեության արդյունավետ կիրառմանն աջակցելու և Կողմերի միջև փոխըմբռնումը ամրապնդելու նպատակով, ներառյալ՝ իրավակիրառ գործունեության մասին տեղեկատվությունը, որը կարող է /կամ էականորեն դիպչում է մյուս Կողմի շահերին:

գ) տեխնիկական համագործակցություն:

2. Համագործակցությունն իրականացվում է Կողմերի միջև համաձայնեցված պայմաններով:

Հոդված 11.5

Տեղեկատվության գաղտնիություն

1. Եթե Կողմերն ուսումնասիրում են տնտեսական կոնցենտրացիայի միևնույն գործարքը և Կողմերից մեկը բացահայտել է մյուս Կողմի իրավազորությունում գտնվող շուկայի նկատմամբ այդ գործարքի ազդեցության հնարավորությունը, Կողմերից յուրաքանչյուրը ճանաչում է տվյալ գործարքում մասնակցող մեկ կամ ավելի անձանց դիմելու առավելությունները՝ այդպիսի անձի կամ անձանց վերաբերյալ գաղտնի տեղեկատվությունը համապատասխան պայմաններով և այդպիսի ազդեցության վերաբերյալ Կողմերի միջև քննարկմանն աջակցելու համար՝ մյուս Կողմի տրամադրելու համար թույլատվություն ստանալու նպատակով:
2. Տեղեկատվության տրամադրման ցանկացած հարցում պարունակում է այդ տեղեկատվությունն օգտագործման նպատակը: Մի Կողմից մյուսին սույն Գլխի նպատակներով տեղեկատվության տրամադրման դեպքում, այդպիսի տեղեկատվությունը մյուս Կողմն օգտագործում է բացառապես այդ նպատակների համար և չպետք է բացահայտի կամ փոխանցի այլ անձանց և/կամ երրորդ երկրներին առանց տեղեկատվությունը տրամադրած Կողմի համաձայնության:
3. Անկախ սույն Գլխի դրույթներից, Կողմերից ոչ մեկը պարտավոր չէ տեղեկատվություն ներկայացնելու մյուս Կողմին, եթե այդպիսի տեղեկատվության տրամադրումն արգելված է նրա համապատասխան օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով կամ հակասում է նրա կարևորագույն շահերին:

Հոդված 11.6

Խորհրդատվություններ

1. Կողմերի փոխըմբռնմանը նպաստելու կամ սույն Գլխի շրջանակներում առաջացող որոշակի հարցերի լուծման համար յուրաքանչյուր Կողմ, սույն գլխի XX.7 հոդվածով սահմանված, մյուս Կողմի կոնտակտային կետից ստացված հարցման դիմաց անցկացնում է խորհրդատվություններ Կողմի ներկայացրած հարցերի շուրջ: Հարցվող Կողմն ապահովում է խորհրդատվության առարկա հանդիսացող հարցի ամբողջությամբ և լիարժեք ուսումնասիրությունն այնքան արագ, որքան դա հնարավոր է գործնականում:
2. Խորհրդատվության առարկա հանդիսացող հարցերի շուրջ քննարկումներին նպաստելու համար Կողմը ձգտում է տրամադրել մյուս Կողմին համապատասխան ոչ

գաղտնի տեղեկատվությունը: Կողմերը ձգտում են փոխհամաձայնության գալ ուսումնասիրվող հարցի շուրջ կառուցողական երկխոսության միջոցով:

Հոդված 11.7

Կոնտակտային կետեր

1. Յուրաքանչյուր Կողմ նշանակում է կոնտակտային կետ, որը պատասխանատու է սույն Գլխի հարցերով փոխգործակցության համար: Այդպիսի կոնտակտային կետերի գործառույթները ներառում են՝

(ա) սույն Գլխի կիրառման ոլորտի շրջանակներում տեղեկատվության փոխանակումը.

(բ) սույն Գլխի կիրառման ոլորտի շրջանակներում համագործակցության մասին հարցումների ուղարկում ու ստացում և պատասխանների տրամադրում.

(գ) 11.6 «Խորհրդատվություններ» հոդվածին համապատասխան խորհրդատվությունների մասին հարցումների ուղարկում ու ստացում և պատասխանների տրամադրում.

(դ) մյուս կողմի շահագրգիռ անձանց կողմից ստացվող, սույն Գլխի կիրառման ոլորտին վերաբերող բոլոր հարցումներով տեղեկատվության տրամադրում:

2. Կողմերը միմյանց տրամադրում են կոնտակտային կետերի վերաբերյալ տեղեկատվությունը, ներառյալ՝ հեռախոսները, էլեկտրոնային փոստի հասցեները և այլ անհրաժեշտ մանրամասնությունները:

3. Յուրաքանչյուր Կողմ ժամանակին ծանուցում է մյուս Կողմին իր կոնտակտային կետի հետ կապված ցանկացած փոփոխության մասին:

Հոդված 11.8

Գլուխ 14-ի չկիրառումը (Վեճերի լուծում)

Կողմերից ոչ մեկը չի դիմում «Վեճերի լուծում» գլխի օգտագործմանը այն հարցերի վերաբերյալ, որոնք առաջանում են սույն Գլխի շրջանակներում կամ վերաբերում են տվյալ Գլխին:

Հավելված 11-1

**Մրցակցության հարցերով պատասխանատու մարմինների պաշտոնական
համացանցային կայքերը՝**

Եվրասիական տնտեսական հանձնաժողով -<http://www.eurasiancommission.org/>

Հայաստանի Հանրապետություն -<http://www.competition.am/>

Բելառուսի Հանրապետություն -<http://mart.gov.by/sites/mart/home.html/>

Ղազախստանի Հանրապետություն -<http://www.kremzk.gov.kz/>

Ղրղզստանի Հանրապետություն -<http://antimonopolia.gov.kg/>

Ռուսաստանի Դաշնություն -<https://fas.gov.ru/>

Սինգապուրի Հանրապետություն -<https://www.cccs.gov.sg>

Հավելված 11-2

Մրցակցության հարցերով պատասխանատու ոլորտային մարմինների պաշտոնական համացանցային կայքերը

Սինգապուրի Հանրապետություն

Քաղաքացիական ավիացիայի ոլորտի մարմին [-https://www.caas.gov.sg/](https://www.caas.gov.sg/)

Էներգետիկ շուկայի ոլորտի մարմին [-https://www.ema.gov.sg/](https://www.ema.gov.sg/)

Ջանգվածային լրատվամիջոցների զարգացման ոլորտի մարմին -
<https://www.imda.gov.sg/>

ԳԼՈՒԽ 12 ԷԿՈԼՈԳԻԱ

Հոդված 12.1 Նպատակներ և Սկզբունքներ

1. Վկայակոչելով 2012 թվականի Ռիո + 20 կոնֆերանսի «Ապագան, որը մենք ենք ցանկանում» ամփոփիչ փաստաթուղթը և «Մեր աշխարհի վերափոխում» Կայուն զարգացման 2030 օրակարգը, Կողմերն ընդունում են, որ տնտեսական և սոցիալական զարգացումը, ինչպես նաև շրջակա միջավայրի պաշտպանությունը հանդիսանում են կայուն զարգացման փոխկապակցված և փոխլրացնող բաղադրիչներ:

2. Սույն Գլխի նպատակներն են.

(ա) փոխադարձ առևտրի և շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում քաղաքականության աջակցությունը,

(բ) շրջակա միջավայրի պաշտպանության բարձր մակարդակին և շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում օրենքների և այլ նորմատիվ ակտերի կիրառմանն աջակցությունը,

(գ) շրջակա միջավայրի պաշտպանության, լավացման և պահպանման, այդ թվում՝ բնական պաշարների պահպանման և ռացիոնալ օգտագործման, տեխնոլոգիական զարգացման, նորարարություններին աջակցելու և կանաչ աճին նպաստող՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող համատեղ նախագծերի իրականացման նպատակով Կողմերի համագործակցությունն ընդլայնելու համար հիմքի ստեղծումը,

(դ) շրջակա միջավայրի պաշտպանության՝ առևտրի հետ կապված հարցերի լուծման համար Կողմերի հնարավորությունների ընդլայնումը, այդ թվում՝ համագործակցության միջոցով,

3. Կողմերը նաև հաստատում են ռացիոնալ սպառման և արտադրության, ինչպես նաև ավելացված արժեքի շղթաների միջոցով բնական պաշարների ռացիոնալ օգտագործման առաջխաղացման կարևորությունը:

4. Համագործակցությունը պետք է հիմնված լինի հետևյալ սկզբունքների վրա՝ փոխադարձ շահ և օգուտ, թափանցիկություն և շրջակա միջավայրի պաշտպանություն:

Հոդված 12.2

Ընդհանուր դրույթներ

1. Կողմերը հաստատում են շրջակա միջավայրի պաշտպանության սեփական մակարդակը և զարգացման առաջնայնությունները սահմանելու, ինչպես նաև շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում օրենքներում և քաղաքականություններում փոփոխություններ ընդունելու և կատարելու յուրաքանչյուր Կողմի ինքնիշխան իրավունքը:
2. Յուրաքանչյուր Կողմ ձգտում է, որ այդ օրենքները և քաղաքականությունները նախատեսեն և խթանեն շրջակա միջավայրի պաշտպանության բարձր մակարդակը, ինչպես նաև արդյունավետ կիրառել այդ օրենքները և քաղաքականությունները: Յուրաքանչյուր Կողմ նաև ձգտում է շարունակել բարձրացնել շրջակա միջավայրի պաշտպանության իր մակարդակը:
3. Կողմերը նաև ընդունում են, որ շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված իրենց գործողությունները չպետք է ընդունեն անհիմն պրոտեկցիոնիզմի ձև:

Հոդված 12.3

Համագործակցություն

1. Կողմերն ընդունում են շրջակա միջավայրի պաշտպանության հարցերով երկկողմ, տարածաշրջանային և բազմակողմ մակարդակով համագործակցության կարևորությունը:
2. Հաշվի առնելով ազգային առաջնայնությունները և առկա պաշարները, Կողմերը պայմանավորվել են բարձրացնել շրջակա միջավայրի հարցերով համագործակցության մակարդակը, ինչպես նաև իրականացնել փոխշահավետ համատեղ նախագծեր սույն Գլխի դրույթների կիրառմանը նպաստող հատվածներում: Այդպիսի համագործակցությունը հնարավորության սահմաններում իրականացվում է բազմակողմ հիմքով և Կողմերի համաձայնության դեպքում: Կողմերը մշակում են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող նախագծերի իրականացման համատեղ ծրագրեր, որոնք ներառելու են, բայց չեն սահմանափակվելու սույն Հոդվածի 3-րդ կետում նշված համագործակցության ձևերով:
3. Սույն Հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ համագործակցությունն իրականացվում է փոխադարձ հետաքրքրության ոլորտներում, ինչպես նաև յուրաքանչյուր կոնկրետ դեպքում Կողմերի միջև համաձայնեցված պայմանների և գործունեության ֆինանսավորման մասին՝ մասնակցող Կողմերի ընդունած որոշումների հիման վրա: Այդպիսի համագործակցությունը, ի թիվս այլոց, կարող է ներառել.
(ա) աջակցություն համատեղ հետազոտությունների և գիտական նախագծերի իրականացմանը,

(բ) տեղեկատվության և լավագույն պրակտիկաների փոխանակում, ներառյալ՝ կոնֆերանսների, սեմինարների, ուսուցանող ծրագրերի միջոցով և այլն,

(գ) աջակցություն փորձագետներով և հետազոտողներով փոխանակմանը

(դ) պոտենցիալ կոոպերացիոն նախագծերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվության փոխանակում՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող նախագծերի համար շահագրգռված գործընկերների բացահայտման նպատակով,

(ե) համատեղ կանաչ նախագծերի իրականացում,

(զ) Կողմերի միջև համաձայնեցված՝ համագործակցության ցանկացած այլ ձևեր:

Հոդված 12.4

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն

Յուրաքանչյուր Կողմ ձգտում է խթանել իր տարածքում կամ իր իրավասության սահմաններում գործունեություն իրականացնող ձեռնարկությունները, իր քաղաքականության մեջ և պրակտիկայում կամավոր կերպով ներդնել շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում կորպորատիվ սոցիալական պատասխանատվության սկզբունքները՝ միջազգայնորեն ճանաչված այն ստանդարտներին և հանձնարարականներին համապատասխան, որոնք Կողմը ողջունել է և որոնց հետևում է:

Հոդված 12.5

Օդի մաքրմանն ուղղված գործողություններ

1. Կողմերն ընդունում են, որ օդի աղտոտումը լուրջ գլոբալ խնդիր է՝ հեռու գնացող հետևանքներով: Կողմերը նաև ընդունում են հասարակության համար օդի աղտոտման բարձր գինը՝ տնտեսության, աշխատանքի արտադրողականության նկատմամբ բացասական ազդեցության, առողջապահության և զբոսաշրջության համար ծախսերի պատճառով և հաստատում են օդի բարձր որակի պահպանմանն ուղղված քաղաքականությունը շարունակելու անհրաժեշտությունը:

2. Կողմերն ընդունում են, որ յուրաքանչյուր Կողմի օդի պահպանման միջոցներն իրականացվում են ներքին առանձնահատկություններին և հնարավորություններին համապատասխան, ինչպես նաև յուրաքանչյուր Կողմ դիտարկում է իր համար հետաքրքրություն ներկայացնող հարցերն իր ազգային առաջնայնություններին

համապատասխան:

3. Կողմերը ձգտում են առավելագույն չափով օգտագործել գիտության, կրթության, քաղաքականության, առևտրի, ներդրումների և նորարարությունների հնարավորությունները օդի աղտոտման խնդրի լուծման նպատակով: Կողմերը ձգտում են ապահովել շրջակա միջավայրի մշտադիտարկման համար համալիր և թափանցիկ միջոցառումներ և աջակցել օդի որակի բարելավմանն ուղղված գործողություններին:

4. Կողմերը ձգտում են օգտագործել օդի աղտոտման հարցերով միջազգային և տարածաշրջանային մակարդակներով համագործակցության ուժեղացման հնարավորությունները:

Հոդված 12.6

Անցում արտանետումների ցածր մակարդակով տնտեսության

1. Կողմերն ընդունում են, որ արտանետումների ցածր մակարդակով տնտեսությանն անցումը պահանջում է համաձայնեցված գործողություններ:

2. Ընդունելով, որ արտանետումների ցածր մակարդակով տնտեսությանն անցնելու՝ յուրաքանչյուր Կողմի գործողությունները պետք է արտացոլեն նրա ներքին առանձնահատկությունները և հնարավորությունները, ինչպես նաև պետք է համապատասխանեն ազգային գերակայություններին, Կողմերը համագործակցում են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի լուծման համար:

3. 2-րդ կետում նշված համագործակցության ոլորտները կարող են ներառել. բայց չեն սահմանափակվում էներգաարդյունավետության, արտանետումների ցածր մակարդակով խնայող տեխնոլոգիաների և այլընտրանքային, մաքուր, վերականգնվող էներգիայի աղբյուրների մշակման, էկոլոգիապես մաքուր տրանսպորտի և քաղաքային ենթակառուցվածքի զարգացման, անտառների հատման և այլակերպման հետ կապված խնդիրների լուծման, արտանետումների մակարդակի մշտադիտարկման, շուկայական և ոչ շուկայական մեխանիզմների, արտանետումների ցածր մակարդակի, կայուն զարգացման հարցեր և տվյալ հարցերի լուծման համար տեղեկատվության և փորձի փոխանակում:

4. Կողմերն անհրաժեշտության դեպքում մասնակցում են համատեղ միջոցառումներին, որոնք ուղղված են արտանետումների ցածր մակարդակով տնտեսությանն անցում կատարելու հնարավորությունների ընդլայնմանը:

Հոդված 12.7

Խորհրդատվություններ

1. Կողմերի միջև փոխըմբռնմանը նպաստելու կամ սույն Գլխի շրջանակներում առաջացող որոշակի հարցերի լուծման նպատակով՝ յուրաքանչյուր Կողմ, սույն Գլխի

XX.7-րդ Հոդվածին համապատասխան հիմնադրված՝ մյուս Կողմի կոնտակտային կետի հարցումով անցկացնում է հայցող Կողմի բարձրացրած հարցի շուրջ խորհրդատվություններ: Հայցվող Կողմն ապահովում է խորհրդատվության առարկա հանդիսացող հարցի լրիվ և համապարփակ քննարկումն այնքան կարճ ժամկետում, որքան դա հնարավոր է գործնականում:

2. Խորհրդատվությունների առարկա հանդիսացող հարցերի քննարկմանն աջակցելու նպատակով՝ յուրաքանչյուր Կողմ ձգտում է մյուս Կողմին տրամադրել համապատասխան ոչ գաղտնի տեղեկատվություն: Կողմերը ձգտում են քննարկվող հարցի վերաբերյալ համերաշխության հասնել կառուցողական երկխոսության միջոցով:

Հոդված 12.8 Կոնտակտային կետեր

1. Յուրաքանչյուր Կողմ նշանակում է կոնտակտային կետ, որը պատասխանատու է սույն Գլխի կիրառման հարցերով փոխգործակցության համար: Այդ կոնտակտային կետերի գործառույթները ներառում են.

(ա) տեղեկատվության փոխանակում սույն Գլխի կիրառման շրջանակներում,

b) համագործակցության մասին հարցումների ուղարկում և ստացում սույն Գլխի կիրառման շրջանակներում և համապատասխան պատասխանների տրամադրում,

(բ) խորհրդատվությունների մասին հարցումների ուղարկում և ստացում «Խորհրդատվություններ» XX6-րդ հոդվածին համապատասխան և համապատասխան պատասխանների տրամադրում,

(գ) տեղեկատվության տրամադրում մյուս Կողմի շահագրգռված անձանց բոլոր հարցումների վերաբերյալ, որոնք վերաբերում են սույն Գլխի կիրառման ոլորտին:

2. Կողմերը միմյանց տրամադրում են տեղեկատվություն կոնտակտային կետերի մասին, ներառյալ՝ հեռախոսահամարները, հասցեները, էլեկտրոնային փոստի հասցեները և այլ անհրաժեշտ տվյալները:

3. Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմին ժամանակին տեղեկացնում է իր կոնտակտային կետի հետ կապված ցանկացած փոփոխության մասին:

Հոդված 12.9 Վեճերի լուծման մեխանիզմի չկիրառում

Կողմերից ոչ մեկը չի դիմում XX-րդ Գլխի (Վեճերի լուծում) կիրառմանը սույն Գլխի շրջանակներում առաջացող կամ սույն Գլխին վերաբերող հարցերի լուծման համար:

ԳԼՈՒԽ 13
ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

Հոդված 13.1
Սահմանումներ

Սույն գլխի նպատակերի համար.

«շահագրգիռ անձ» նշանակում է ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որի վրա ընդհանուր կիրառման միջոցի շրջանակներում կարող են տարածվել որևէ իրավունքներ կամ պարտավորություններ, և

«ընդհանուր կիրառման միջոցը» չի ներառում.

(ա) վարչական կամ կեղծ օրինակ դատական վարույթի ընթացքում ընդունված վճիռ կամ որոշում, որը կոնկրետ դեպքում կիրառվում է մյուս Կողմի անձի, ապրանքի կամ ծառայության նկատմամբ, կամ

(բ) որոշում, որը կայացվում է որոշակի ակտի կամ պրակտիկայի նկատմամբ:

Հոդված 13.2 Հրապարակում

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որպեսզի սույն Համաձայնագրի գործողության շրջանակներում ընդգրկվող ցանկացած հարցի վերաբերյալ ընդհանուր կիրառման միջոցներն անմիջապես հրապարակվեն կամ այլ կերպ տեղադրվեն ազատ հասանելիության համար, որպեսզի թույլ տալ մյուս Կողմին և շահագրգիռ անձանց ծանոթանալ դրանց հետ:

2. Յուրաքանչյուր Կողմ ըստ հնարավորության.

(ա) նախապես հրապարակում է ցանկացած այնպիսի ընդհանուր կիրառման միջոցները, որոնք նախատեսվում է ընդունել, և

(բ) շահագրգիռ անձանց և մյուս Կողմին տրամադրում է հիմնավորված հնարավորություն հանդես գալ մեկնաբանություններով այնպիսի միջոցների վերաբերյալ, որոնք նախատեսվում է ընդունել:

Հոդված 13.3 Ծանուցում և տեղեկատվության տրամադրում

1. Առավել հնարավորության չափով, յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմին ծանուցում է ցանկացած միջոցի մասին, որը, Կողմի կարծիքով, կարող է էապես ազդել սույն Համաձայնագրի գործողության վրա կամ այլ կերպ էապես ազդել մյուս Կողմի շահերի վրա՝ սույն Համաձայնագրին համապատասխան:

2. Մյուս Կողմի հարցմամբ, Կողմն անմիջապես տրամադրում է տեղեկատվություն և պատասխանում է հարցերին, որոնք վերաբերում են սույն Համաձայնագրի գործողության ոլորտում ներառված ցանկացած հարցի վերաբերյալ ցանկացած միջոցի, անկախ նրանից, ծանուցվել է հայցող Կողմը այդ միջոցի մասին թե ոչ:

3. Սույն հոդվածին համապատասխան տրամադրվող ցանկացած ծանուցում կամ

տեղեկատվություն չպետք է կանխորոշեն միջոցի՝ սույն Համաձայնագրին համապատասխանությունը:

4. Ցանկացած ծանուցում կամ տեղեկատվություն սույն հոդվածին համապատասխան փոխանցվում են մյուս Կողմին համապատասխան կոնտակտային կետերի միջոցով:

5. Տեղեկատվության փոխանակումը համարվում է կայացած այն ժամանակ, երբ տեղեկատվությունը, կետ 1-ին համապատասխան տրամադրվել է ԱՀԿ-ին՝ վերջինիս կանոնների և ընթացակարգերի համաձայն կամ երբ նշված տեղեկատվությունը տեղակայվել է Կողմերի պաշտոնական, հանրամատչելի և անվճար ինտերնետային կայքերում:

Հոդված 13.4 Վարչական վարույթ

Սույն Համաձայնագրի գործողության ոլորտում ընդգրկված ցանկացած հարցի վերաբերյալ ընդհանուր կիրառման միջոցների հետևողականորեն, անաչառորեն և խելամտորեն կիրառման նպատակով, որոշակի դեպքերում այդպիսի միջոցների կիրառմանն ուղղված՝ մյուս Կողմի կոնկրետ անձանց, ապրանքների կամ ծառայությունների նկատմամբ վարչական վարույթի ընթացքում, յուրաքանչյուր Կողմ պետք է.

(ա) ձգտի տրամադրել մյուս Կողմի անձանց, որոնց վարույթն անմիջապես վերաբերում է, ներքին ընթացակարգերին համապատասխան ողջամիտ ծանուցում՝ վարույթը սկսվելու ամսաթվի մասին, ներառյալ՝ արտադրության բնույթի նկարագրությունը, իրավական պաշտպանության մարմնի հայտարարությունը, որի հիման վրա վարույթը սկսվել է, և ցանկացած վիճելի հարցերի ընդհանուր նկարագրությունը, և

(բ) այդպիսի անձանց տրամադրի ողջամիտ հնարավորություն՝ մինչև որևէ վերջնական վարչական որոշում կայացնելը ներկայացնել իրենց դիրքորոշմանն աջակցող փաստեր և փաստարկներ, այնքանաով, որքանով դա թույլ են տալիս վարույթի ժամկետը, բնույթը և հասարակական շահերը,

(գ) ապահովի, որպեսզի ընթացակարգերը համապատասխանեն օրենսդրությանը:

Հոդված 13.5 Վարչական միջոցների վերանայումը

1. Յուրաքանչյուր կողմ ստեղծում և պահպանում է դատական, կեղծ օրինակ դատական կամ վարչական մարմիններ կամ ընթացակարգեր, այդ թվում՝ սույն Համաձայնագրի գործողության ոլորտում ընդգրկված հարցերով⁹ վարչական միջոցների անմիջապես վերանայման և ճշգրտման համար: Այդպիսի մարմինները կամ ընթացակարգերը պետք է լինեն անաչառ և վարչական իրավակիրառման պարտականությունը կրող գերատեսչությունից կամ մարմնից անկախ, և չպետք է ունենան այդ հարցի լուծման հետ կապված որևէ էական շահագրգռվածություն:

2. Յուրաքանչյուր կողմ ապահովում է, որպեսզի ցանկացած այդպիսի մարմիններում կամ ցանկացած այդպիսի ընթացակարգերի իրականացման ժամանակ, քննության կողմերին տրամադրվի.

(ա) իրենց համապատասխան դիրքորոշումների ամրապնդման և պաշտպանության ողջամիտ հնարավորություն ունենալու, և

(բ) ապացույցների և պաշտոնապես ներկայացված փաստաթղթերի, կամ եթե այն պահանջում է նրա օրենսդրությունը, վարչական մարմնի կողմից կազմված պաշտոնական փաստաթղթի վրա հիմնված որոշման իրավունք:

3. Յուրաքանչյուր կողմ ապահովում է, հաշվի առնելով նրա ներքին օրենսդրության համաձայն բողոքարկումը կամ հետագա վերանայումը, որ այդպիսի որոշումը կիրառվում է և կարգավորում է տվյալ վարչական միջոցի նկատմամբ գերատեսչության կամ մարմնի պրակտիկան:

Հոդված 13.6 Հատուկ կանոններ

Սույն Համաձայնագրի մյուս գլուխներում պարունակվող, սույն գլխի առարկային վերաբերող հատուկ կանոններն ունեն գերակա ուժ այնքանով, որքանով տարբերվում են սույն գլխի դրույթներից:

ԳԼՈՒԽ 14 ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Հոդված 14.1 Սահմանումներ

Սույն գլխի նպատակների համար.

«**արբիտր**՝ իրավամիջնորդ» նշանակում է X.6-րդ հոդվածին (Միջնորդական խմբի կազմը և հիմնադրումը) համապատասխան հիմնադրված իրավամիջնորդական խմբի անդամ,

«Իրավամիջնորդական խումբ» նշանակում է X.6-րդ հոդվածին (Իրավամիջնորդական խմբի կազմը և հիմնադրումը) համապատասխան հիմնադրված իրավամիջնորդական խումբ,

«քննություն», եթե այլ բան նշված չէ, նշանակում է սույն գլխին համապատասխան իրավամիջնորդային քննություն:

«Հայցվոր Կողմ» նշանակում է ցանկացած Կողմ¹, որը X.5-րդ հոդվածին (Իրավամիջնորդաժային քննության սկիզբը) համապատասխան հայցում է իրավամիջնորդական խմբի հիմնադրում,

«Պատասխանող Կողմ» նշանակում է Կողմ², որը, ինչպես հաստատվում է, խախտում է X.2-րդ հոդվածում (Գործողության ոլորտը) նշված դրույթները,

Հոդված 14.2 Նպատակը

Սույն գլխի նպատակը հնարավորության սահմաններում փոխընդունելի որոշում կայացնելու համար Կողմերի միջև ցանկացած վեճից խուսափելը և կարգավորելն է:

Հոդված 14.3 Գործողության ոլորտը

Եթե սույն Համաձայնագրում այլ բան նախատեսված չէ, սույն գլուխը կիրառվում է սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման կամ ³ կիրառման հետ կապված՝ Կողմերի միջև ցանկացած վեճից խուսափելու և այն կարգավորելու համար, երբ Կողմը համարում է, որ՝

(ա) Մյուս Կողմի միջոցը չի համապատասխանում սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորություններին,

Կամ՝

(բ) Մյուս Կողմն այլ կերպ չի կատարել սույն Համաձայնագրով ստանձնած իր պարտավորությունները:

2. Առավել որոշակիացնելու համար՝ սույն գլխի դրույթներով չեն կարգավորվում վեճերը, որոնք ծագում են ցանկացած օգուտի գրոյացման կամ կրճատման պատճառով, որը, սույն Համաձայնագրին համապատասխան, Կողմը ողջամտորեն կարող էր ակնկալել ստանալ մյուս Կողմի՝ սույն Համաձայնագրին չհակասող որևէ միջոցի կիրառման արդյունքում:

Հոդված 14.4 Վեճի կարգավորման վայրի ընտրությունը

1. Վեճերի կարգավորման մասին սույն գլխի դրույթների օգտագործումը չպետք է նվազեցնի ԱՀԿ շրջանակներում որևէ գործողությունները՝ ներառյալ վեճերի կարգավորման ընթացակարգերը:

2. Եթե հայցվոր Կողմը որոշակի միջոցի նկատմամբ սկսել է վեճի կարգավորման ընթացակարգ կա՛մ սույն գլխին, կա՛մ ԱՀԿ Համաձայնագրին համապատասխան, նա չպետք է սկսի միևնույն միջոցի նկատմամբ վեճի կարգավորման ընթացակարգ վեճերի կարգավորման մյուս վայրում՝ մինչև առաջին քննության ավարտվելը: Բացի այդ, հայցվոր Կողմը չպետք է սկսի վեճի կարգավորման քննություն և՛ սույն գլխին, և՛ ԱՀԿ Համաձայնագրի համապատասխան, բացառությամբ դեպքերի, երբ չեն վիճարկվում զգալի աստիճանի տարբեր պարտավորությունները, կամ երբ վեճի կարգավորման ընտրված վայրն ընդունակ չէ ընթացակարգային կամ իրավասության հետ կապված պատճառներով ապահովել խախտումը վերացնելու հայցի հետ կապված եզրակացությունները, պայմանով, որ վեճի կարգավորման վայրի այդպիսի անընդունակությունը չի հանդիսանում Կողմի՝ գործողությունները պատշաճ կերպով իրականացնելուց խուսափելու արդյունք:

3. 2-րդ կետի նպատակների համար.

(ա) վեճերի կարգավորման ընթացակարգերը՝ ԱՀԿ Համաձայնագրին համապատասխան, համարվում են սկսված ՎԿՊ 6-րդ հոդվածին համապատասխան միջնորդական խմբի հիմնադրման մասին Կողմի հարցմամբ և համարվում են ավարտված, երբ Վեճերի կարգավորման մարմինը կհաստատի միջնորդական խմբի զեկույցը և Բողոքարկման մարմնի զեկույցը՝ կախված հանգամանքներից, ՎԿՊ 16-րդ և 17-րդ (14) հոդվածներին համապատասխան, և

(բ) վեճերի կարգավորման ընթացակարգերը՝ սույն գլխին համապատասխան, համարվում են սկսված 14.7-րդ հոդվածին համապատասխան (Իրավամիջնորդային ընթացակարգի սկիզբը) իրավամիջնորդական խմբի հիմնադրման մասին Կողմի հարցմամբ և համարվում են ավարտված, երբ իրավամիջնորդական խումբը Կողմերին կներկայացնի 14.15-րդ հոդվածին համապատասխան (Իրավամիջնորդական խմբի նախնական և վերջնական զեկույց) իր վերջնական զեկույցը կամ երբ իրավամիջնորդային ընթացակարգերը կդադարեցվեն 14.15-րդ հոդվածին համապատասխան (Իրավամիջնորդային պարտավորության կասեցում և դադարեցում):

4. Սույն գլխում ոչինչ չպետք է խոչընդոտ հանդիսանա Կողմի համար Վեճերի կարգավորման մարմնի կողմից թույլատրված՝ պարտավորությունների կասեցումը կիրառելու համար: ԱՀԿ համաձայնագիրը չպետք է օգտագործվի այնպես, որ Կողմի համար խոչընդոտ հանդիսանա սույն գլխին համապատասխան պարտավորությունների կասեցման համար:

Հոդված 14.5 **Խորհրդատվություններ**

1. Կողմերը մշտապես ձգտում են պայմանավորվել սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման և կիրառման մասին և կարգավորել ցանկացած խնդիրը բարեխիղճ կերպով խորհրդակցությունների անցկացման եղանակով՝ փոխհամաձայնեցված լուծման հասնելու նպատակով:

2. Կողմը հայցում է խորհրդատվություններ մյուս Կողմի կոնտակտային անձին գրավոր հայցի ներկայացման միջոցով, որտեղ շարադրում է հայցի հիմքերը՝ նշելով քննարկվող միջոցները, X.2-րդ հոդվածում (Գործողության ոլորտ) նշված Համաձայնագրի կիրառելի դրույթները և այդպիսի դրույթների կիրառելիության պատճառները:

3. Խորհրդատվություններն անցկացվում են հարցումը ստանալու օրից ոչ ուշ, քան երեսուն (30) օր հետո և համարվում են ավարտված հարցումը ստանալու օրից վաթսուն (60) օր հետո, եթե Կողմերն այլ բանի մասին չեն պայմանավորվել: Անհետաձգելի հարցերով խորհրդատվությունները, այդ թվում՝ շուտ փչացող ապրանքների վերաբերյալ, անցկացվում են ոչ ավելի ուշ, քան հարցումը ստանալու օրից տասնհինգ (15) օր հետո, և համարվում են ավարտված հարցումը ստանալու օրից երեսուն (30) օր հետո. եթե Կողմերն այլ բանի մասին չեն պայմանավորվել:

4. Խորհրդատվությունները կարող են անցկացվել առերես կամ Կողմերին հասանելի տեխնոլոգիական ցանկացած միջոցի օգնությամբ: Եթե խորհրդատվություններն անցկացվում են առերես, դրանք անցկացվում են հարցումը ներկայացրած Կողմի տարածքում, եթե Կողմերն այլ բանի մասին չեն պայմանավորվել: Խորհրդատվությունները կրում են գաղտնի բնույթ և չեն սահմանափակում Կողմերից ցանկացածի իրավունքները ցանկացած հետագա քննությունների անցկացման ժամանակ:

5. Եթե Կողմը, որին ուղղվել է հարցումը, չի պատասխանում խորհրդակցությունների անցկացման մասին հարցմանը այն ստանալու օրից տասը (10) օրվա ընթացքում, կամ եթե խորհրդատվությունները չեն անցկացվում 3-րդ կետում նշված ժամկետներում, կամ եթե խորհրդատվություններն ավարտվել են առանց փոխհամաձայնեցված որոշման հասնելու, հայցվոր Կողմը կարող է պահանջել իրավամիջնորդական խմբի հիմնադրում X.5-րդ հոդվածին (Իրավամիջնորդային քննության սկիզբը) համապատասխան:

Հոդված 14.6

Բարի ծառայություններ, համաձայնեցված ընթացակարգ կամ միջնորդություն

1. Կողմերը կարող են ցանկացած պահին պայմանավորվել բարի ծառայությունների, համաձայնեցված ընթացակարգի կամ միջնորդության օգտագործման մասին: Բարի ծառայությունների, հաշտեցման կամ միջնորդության ընթացակարգերը կարող են սկսվել և դադարեցվել ցանկացած ժամանակ՝ կա՛մ հայցվոր Կողմի, կա՛մ պատասխանող Կողմի հարցմամբ:

2. Եթե Կողմերը կպայմանավորվեն այդ մասին, բարի ծառայությունները,

համաձայնեցված ընթացակարգը կամ միջնորդությունը կարող են շարունակվել սույն գլխով նախատեսված իրավամիջնորդային քննության ամբողջ ընթացքում:

3. Բարի ծառայությունների, համաձայնեցված ընթացակարգի կամ միջնորդության օգտագործմամբ քննությունները և, մասնավորապես, այդ քննությունների ընթացքում Կողմերի զբաղեցրած դիրքորոշումները, կրում են գաղտնի բնույթ և չեն սահմանափակում Կողմերից ցանկացածի իրավունքները ցանկացած այլ քննության մեջ:

Հոդված 14.7

Իրավամիջնորդային քննության սկիզբը

Իրավամիջնորդական խմբի հիմնադրման մասին հարցումը գրավոր ձևով ուղարկվում է պատասխանող Կողմի կոնտակտային անձին: Հայցվոր Կողմն իր հարցման մեջ պետք է նշի որոշակի միջոցը կամ այլ վիճելի հարցը. անցկացվել են արդյոք խորհրդատվություններ և բողոքի իրավական հիմքի նկարագրությունն այնպես, որպեսզի խնդիրը հստակ ներկայացված լինի:

Հոդված 14.8

Իրավամիջնորդական խմբի կազմը և հիմնադրումը

1. Իրավամիջնորդական խումբը կազմված է երեք (3) իրավամիջնորդներից: Յուրաքանչյուր Կողմը նշանակում է իրավամիջնորդի ոչ ավելի ուշ, քան X.5-րդ հոդվածում (Իրավամիջնորդային քննության սկիզբը) նշված հարցումը ստանալուց երեսուն (30) օրվա ընթացքում, և երկու իրավամիջնորդները պետք է դրանցից երկրորդի նշանակումից հետո ոչ ավելի ուշ, քան երեսուն (30) օրվա ընթացքում, ըստ պայմանավորվածության, նշանակեն երրորդ իրավամիջնորդին:

2. Կողմերը պետք է ոչ ավելի ուշ, քան երրորդ իրավամիջնորդին նշանակելուց հետո յոթ (7) օրվա ընթացքում հաստատեն կամ մերժեն այդ անդամի նշանակումը, որը հաստատվելու դեպքում հանդես է գալիս որպես իրավամիջնորդական խմբի նախագահ:

3. Եթե երրորդ իրավամիջնորդը չի նշանակվել 1-ին կետին համապատասխան, կամ Կողմերից մեկը մերժում է երրորդ իրավամիջնորդի նշանակումը, ԱՀԿ Գլխավոր տնօրենը Կողմերից յուրաքանչյուրի խնդրանքով հաջորդ երեսուն (30) օրվա ընթացքում նշանակում է երրորդ իրավամիջնորդին, որը հանդես է գալիս որպես իրավամիջնորդական խմբի նախագահ:

4. Եթե Կողմերից մեկը չնշանակի իրավամիջնորդ 1-ին կետին համապատասխան, մյուս Կողմը կարող է տեղեկացնել ԱՀԿ Գլխավոր տնօրենին, որը կնշանակի իրավամիջնորդական խմբի նախագահին հաջորդ երեսուն (30) օրվա ընթացքում: Նշանակվելուց անմիջապես հետո նախագահը խնդրում է Կողմին, որը չի նշանակել անդամ, անել դա տասնչորս (14) օրվա ընթացքում: Եթե այդ ժամկետը լրանալուց հետո այդ Կողմը չնշանակի իրավամիջնորդ, նախագահը տեղեկացնում է ԱՀԿ

Գլխավոր տնօրենին, որը կատարում է այդ նշանակումը հաջորդ երեսուն (30) օրվա ընթացքում:

5. 3-րդ և 4-րդ կետերի նպատակների համար՝ այն դեպքում, եթե ԱՀԿ Գլխավոր քարտուղարը հանդիսանում է ԵԱՏՄ անդամ պետության կամ Սինգապուրի քաղաքացի, անհրաժեշտ նշանակումները կատարելու խնդրանքով դիմում են ԱՀԿ Գլխավոր քարտուղարի տեղակալին, կամ, ըստ ավագության, հաջորդ աշխատակցին, որը չի հանդիսանում Կողմերից որևէ մեկի քաղաքացի:

6. 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերի նպատակների համար՝ եթե Կողմերից մեկը չի հանդիսանում ԱՀԿ անդամ, վեճի կողմերը խնդրում են ՄԱԿ-ի Միջազգային դատարանի նախագահին կատարել անհրաժեշտ նշանակումները, և այդ նշանակումը Կողմերը պետք է ընդունեն: Այն դեպքում, երբ ՄԱԿ-ի Միջազգային դատարանի նախագահը հանդիսանում է Կողմերից մեկի քաղաքացի, անհրաժեշտ նշանակումները կատարելու խնդրանքով դիմում են ՄԱԿ-ի Միջազգային դատարանի նախագահի տեղակալին կամ, ըստ ավագության, հաջորդ աշխատակցին, որը չի հանդիսանում Կողմերից որևէ մեկի քաղաքացի:

7. Իրավամիջնորդական խմբի ստեղծման ամսաթիվն համարվում է երեք իրավամիջնորդներից վերջինի նշանակման ամսաթիվը:

8. Յանկացած անձ, որը նշանակվել է իրավամիջնորդական խմբի իրավամիջնորդ, պետք է ունենա գիտելիքներ և փորձ իրավունքի, միջազգային առևտրի, սույն Համաձայնագրով ընդգրկվող այլ հարցերի ոլորտում կամ միջազգային առևտրային համաձայնագրերին համապատասխան ծագող վեճերի կարգավորման բնագավառում: Իրավամիջնորդը խստորեն ընտրվում է օբյեկտիվության, հուսալիության, ողջամտության և անկախության հիման վրա և պետք է դրսևորի իրեն այդ հիմունքներից ելնելով իրավամիջնորդային քննության ողջ ընթացքում և 14-2 Հավելվածին (Իրավամիջնորդների վարքագծի օրենսգիրք) համապատասխան: Բացի այդ, նախագահը չպետք է լինի ԵԱՏՄ անդամ պետության կամ Սինգապուրի քաղաքացի, չունենա այդ տարածքում իր սովորական բնակության վայրը կամ աշխատի այդ տարածքում: Նախագահը պետք է հանդիսանա ինչպես ԵԱՏՄ անդամ բոլոր պետությունների, այնպես էլ Սինգապուրի Հանրապետության հետ դիվանագիտական կապեր ունեցող պետության քաղաքացի: Եթե Կողմը համարում է, որ իրավամիջնորդական խմբի որևէ իրավամիջնորդ խախտում է այդ պահանջները, Կողմերն անցկացնում են խորհրդատվություններ և, եթե նրանք գալիս են համաձայնության, այդ իրավամիջնորդը հեռացվում է, և նշանակվում է նոր իրավամիջնորդ՝ սույն հոդվածին համապատասխան:

9. Եթե իրավամիջնորդական խմբի որևէ իրավամիջնորդ, որը նշանակվել է սույն հոդվածին համապատասխան, պաշտոնաթող է լինում. դառնում է անընդունակ՝ մասնակցելու քննությանը, կամ հեռացվում է՝ 7-րդ կետին համապատասխան. նրան փոխարինողը նշանակվում է հենց այնպես, ինչպես սահմանված է ի սկզբանե նշանակված իրավամիջնորդի համար: Այդ դեպքում իրավամիջնորդական խմբի աշխատանքը կանգ է առնում ի սկզբանե նշանակված իրավամիջնորդի պաշտոնաթող է լինելու, քննությանը մասնակցելուն անընդունակ լինելու կամ 7-րդ

կետին համապատասխան հեռացվելու օրից սկսվող ժամանակահատվածով, իսկ բոլոր ժամկետները, որոնք կիրառելի են իրավամիջնորդային քննությանը, երկարաձգվում են այն ժամանակահատվածով, որով իրավամիջնորդական խմբի աշխատանքը կասեցվել էր: Իրավամիջնորդական խմբի աշխատանքը վերսկսվում է փոխարինողի նշանակման օրը: Փոխարինողը պետք է ունենա ի սկզբանե նշանակված անդամի բոլոր լիազորությունները և պարտականությունները:

Հոդված 14.9 Լիազորությունների շրջանակը

Եթե Կողմերն այլ բանի մասին չպայմանավորվեն, իրավամիջնորդական խմբի հիմնադրման հարցումը ստանալու օրից քսան (20) օրվա ընթացքում որոշվում է իրավամիջնորդական խմբի Լիազորությունների շրջանակը՝

«Իրավամիջնորդական խմբի հիմնադրման մասին հարցման մեջ 14.7-րդ հոդվածին համապատասխան (Իրավամիջնորդային քննության սկիզբը)՝ նշված հարցն ուսումնասիրել սույն Համաձայնագրի համապատասխան դրույթների ներքո և կատարել եզրակացություն, ընդունել որոշում և տալ վեճի կարգավորման ցանկացած հանձնարարականներ, ինչպես նաև ներկայացնել գրավոր զեկույց 14.11-րդ հոդվածին (իրավամիջնորդական խմբի զեկույցը) համապատասխան»:

Հոդված 14.10 Իրավամիջնորդային քննություն

1. Իրավամիջնորդական խմբի նիստերն անցկացվում են փակ ռեժիմով, եթե Կողմերն այլ որոշում չկայացնեն:

2. Յուրաքանչյուր Կողմին տրամադրվում է հնարավորություն՝ առնվազն մեկ անգամ գրավոր տեսքով ներկայացնելու փաստաթղթեր և մասնակցելու ցանկացած շնորհանդեսներին, քննության ընթացքում՝ հայտարարություններին և պատասխան հայտարարություններին: Իրավամիջնորդական խմբին Կողմի ներկայացրած ողջ տեղեկատվությունը կամ գրավոր տեսքով փաստաթղթերը, ներառյալ նախնական զեկույցի վերաբերյալ ցանկացած մեկնաբանությունները և իրավամիջնորդական խմբի կողմից տրված հարցերի պատասխանները, պետք է հասանելի լինեն մյուս Կողմին:

3. Կողմը, որը պնդում է, թե մյուս Կողմի միջոցը չի համապատասխանում սույն Համաձայնագրին, կրում է այդպիսի անհամապատասխանությունը պարզելու բեռը: Կողմը, որը պնդում է, որ միջոցն ընկնում է բացառության տակ սույն Համաձայնագրին համապատասխան, կրում է այդ բացառության կիրառվելը պարզելու բեռը:

4. Անհրաժեշտության դեպքում իրավամիջնորդական խումբը պետք է խորհրդակցի Կողմերի հետ և համապատասխան հնարավորություններ տրամադրի խնդրի փոխընդունելի կարգավորման մշակման կամ փոխհամաձայնեցված որոշման

համար:

5. Իրավամիջնորդական խումբը ներդնում է բոլոր ջանքերը ցանկացած լուծում համաձայնության հիման վրա ընդունելու համար: Եթե որոշումը չի կարող ընդունվել համաձայնության միջոցով, վիճելի հարցը լուծվում է ձայների մեծամասնությամբ:

6. Կողմի հարցմամբ կամ սեփական նախաձեռնությամբ իրավամիջնորդական խումբը կարող է տեղեկատվություն ստանալ ցանկացած աղբյուրից, որն ինքը հարմար կգտնի իրավամիջնորդային քննության համար: Իրավամիջնորդական խումբը նաև իրավունք ունի հարցնելու փորձագետների կարծիքը՝ իր հայեցողությամբ: Այդպիսի փորձագետներին ընտրելուց առաջ Կողմը խորհրդակցում է Կողմերի հետ: Այդպիսով, ստացված ցանկացած տեղեկատվություն պետք է բաց լինի Կողմերի համար և տրամադրվի՝ մեկնաբանություններ կատարելու համար: Եթե իրավամիջնորդային հանձնաժողովը հաշվի է առնում այդպիսի տեղեկատվությունն իր զեկույցին նախապատրաստվելիս, նա նաև պետք է հաշվի առնի այդպիսի տեղեկատվության վերաբերյալ վիճող կողմերի ցանկացած մեկնաբանությունները:

7. Իրավամիջնորդական խմբի քննարկումների ընթացքի և նրան ներկայացված փաստաթղթերը գաղտնի են:

8. Չնայած 7-րդ կետին՝ Կողմերից յուրաքանչյուրը կարող է վեճի վերաբերյալ իր տեսակետների մասին հրապարակային հայտարարություններ անել, սակայն պետք է դիտարկի որպես գաղտնի ցանկացած տեղեկատվությունը և գրավոր տեսքով փաստաթղթերը, որոնք մյուս Կողմը տրամադրել է իրավամիջնորդական խմբին, որոնք մյուս Կողմը սահմանել է որպես գաղտնի: Եթե Կողմը որպես գաղտնի է տրամադրել նշված տեղեկատվությունը կամ գրավոր տեսքով փաստաթղթերը, այդ Կողմը ոչ ավելի ուշ, քան մյուս Կողմի հարցումից երեսուն (30) օր հետո պետք է ներկայացնի տեղեկատվության կամ գրավոր տեսքով փաստաթղթերի ոչ գաղտնի համառոտ նկարագրությունը, որը կարող է հրապարակվել:

Հոդված 14.11

Իրավամիջնորդական խմբի նախնական և վերջնական զեկույցը

1. Իրավամիջնորդական խումբը Կողմերին է ներկայացնում նախնական զեկույցը, որը պարունակում է.

(ա) Կողմերի փաստարկների և գրավոր տեսքով փաստաթղթերի համառոտ նկարագրությունը,

(բ) գործի փաստացի հանգամանքների վերաբերյալ եզրակացությունները հիմնավորումներով,

(գ) սույն Համաձայնագրի մեկնաբանության կամ կիրառման վերաբերյալ իր որոշումը, և

(i) արդյոք դիտարկվող միջոցը հակասում է սույն Համաձայնագրով ստանձնած

պարտավորություններին, կամ

(ii) արդյոք չի խուսափել Կողմը որևէ այլ կերպով սույն Համաձայնագրով ստանձնած իր պարտավորությունների կատարումից,

(դ) և այլ ցանկացած որոշում, որը նախատեսված է լիազորությունների շրջանակով, և

(ե) անհամապատասխանության մասին որոշման առկայության դեպքում, նրա հանձնարարականն այն բանի վերաբերյալ, որպեսզի պատասխանող Կողմը համապատասխանեցնի միջոցը սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորություններին, և, Կողմերի համաձայնության դեպքում՝ վեճի կարգավորման եղանակների վերաբերյալ,

ոչ ուշ, քան իննսուն (90) կամ վաթսուն (60) օր ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, իրավամիջնորդական խմբի հիմնադրման օրից հետո: Այն դեպքերում, երբ նա գտնում է, որ այդ ժամկետը չի կարող պահպանվել, իրավամիջնորդական խմբի նախագահը պետք է գրավոր տեղեկացնի Կողմերին՝ նշելով ձգձգման պատճառը և այն ամսաթիվը, երբ իրավամիջնորդական խումբը ծրագրում է ներկայացնել իր նախնական զեկույցը: Ոչ մի պարագայում, իրավամիջնորդական խումբը չպետք է ներկայացնի իր նախնական զեկույցն ավելի ուշ, քան նրա հիմնադրման օրից հարյուր քսան (120) օր հետո:

2. Յանկացած Կողմ կարող է գրավոր հարցում ներկայացնել իրավամիջնորդական խմբի կողմից նախնական զեկույցի որոշակի հարցերի ուսումնասիրման վերաբերյալ՝ դրա ներկայացման պահից երեսուն (30) օրվա ընթացքում: Իրավամիջնորդական խումբն ուսումնասիրում է նախնական զեկույցի վերաբերյալ Կողմերի ցանկացած գրավոր մեկնաբանությունները դրանք ստանալու օրից տասնհինգ (15) օրվա ընթացքում: Կողմերի ցանկացած նման գրավոր մեկնաբանությունը դիտարկելուց հետո իրավամիջնորդական խումբը կարող է փոփոխություններ կատարել իր զեկույցի մեջ և անցկացնել հետագա քննություն, որը նա նպատակահարմար կգտնի:

3. Իրավամիջնորդական խումբը Կողմերին իր վերջնական զեկույցը ներկայացնում է ոչ ուշ, քան նախնական զեկույցի ներկայացումից քառասուն հինգ (45), կամ, ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, երեսուն (30) օրվա ընթացքում: Այն դեպքերում, երբ նա գտնում է, որ այդ ժամկետը չի կարող պահպանվել, իրավամիջնորդական խմբի նախագահը պետք է գրավոր տեղեկացնի Կողմերին՝ նշելով ձգձգման պատճառը և այն ամսաթիվը, երբ իրավամիջնորդական խումբը ծրագրում է ներկայացնել իր վերջնական զեկույցը: Ոչ մի պարագայում իրավամիջնորդական խումբը չպետք է ներկայացնի իր վերջնական զեկույցն ավելի ուշ, քան նրա հիմնադրման օրից հարյուր ութսուն (180) օր հետո: Ամփոփիչ հաշվետվությունը պետք է պարունակի հարցեր, որոնք թվարկված են 1-ին կետում, ներառի նախնական քննության փուլում ներկայացված փաստարկների բավարար վերլուծությունը և հստակ արտացոլի Կողմերի գրավոր մեկնաբանությունները:

4. Վեճի Կողմերն անվերապահորեն ընդունում են որոշակի վեճի նկատմամբ իրավամիջնորդական խմբի վերջնական զեկույցը: Իր եզրակացություններում և հանձնարարականներում իրավամիջնորդական խումբը չի կարող ավելացնել կամ սահմանափակել սույն Համաձայնագրում նախատեսված իրավունքներն ու պարտականությունները:

Հոդված 14.12

Իրավամիջնորդական խմբի զեկույցի կատարումը

1. Յուրաքանչյուր Կողմ ընդունում է բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են իրավամիջնորդական խմբի վերջնական զեկույցի բարեխիղճ կատարման համար: Եթե իրավամիջնորդական խումբն իր վերջնական զեկույցում կսահմանի, որ քննարկվող միջոցը չի համապատասխանում սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորություններին, կամ պատասխանող Կողմը չի կատարել սույն Համաձայնագրով ստանձնած իր պարտավորությունները, պատասխանող Կողմը, հնարավորության սահմաններում, պետք է վերացնի սույն Համաձայնագրի խախտումը:

2. Պատասխանող Կողմը ոչ ուշ, քան վերջնական զեկույցի ներկայացումից հետո՝ երեսուն (30) օրվա ընթացքում, հայցվոր Կողմին տեղեկացնում է այն ժամանակի մասին, որը կպահանջվի վերջնական զեկույցի կատարման համար (այսուհետ՝ «ողջամիտ ժամկետ»), եթե անմիջապես կատարելը հնարավոր չէ: Կողմերը ձգտում են պայմանավորվել ողջամիտ ժամանակի մասին:

3. Եթե Կողմերը չեն պայմանավորվել ողջամիտ ժամկետի մասին վերջնական հաշվետվության ներկայացումից հետո՝ քառասուն հինգ (45) օրվա ընթացքում, հայցվոր Կողմը կարող է ոչ ուշ, քան վերջնական հաշվետվության ներկայացումից հետո հիսուն (50) օրվա ընթացքում ի սկզբանե հիմնադրված իրավամիջնորդական խմբին գրավոր խնդրել սահմանել ողջամիտ ժամկետի տևողությունը: Այդպիսի հարցման մասին միաժամանակ տեղեկացվում է մյուս Կողմը: Ի սկզբանե հիմնադրված իրավամիջնորդական խումբը Կողմերին է ներկայացնում ողջամիտ ժամկետի տևողության մասին իր որոշումը ոչ ուշ, քան հարցումը ներկայացնելուց քսան (20) օր հետո:

4. Այն դեպքում, երբ ի սկզբանե հիմնադրված իրավամիջնորդական խմբի որևէ անդամ այլևս չի կարող մասնակցել գործընթացին, կիրառվում են 14.8-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգերը (Իրավամիջնորդական խմբի կազմը և հիմնադրումը): Ողջամիտ ժամկետի տևողության մասին որոշման կայացման ժամկետը պետք է կազմի 3-րդ կետում նշված հարցումը կատարելուց հետո՝ երեսուն հինգ (35) օրից ոչ ավել⁴:

5. Պատասխանող Կողմը, մինչև ողջամիտ ժամկետի լրանալը, հայցվոր Կողմին տեղեկացնում է վերջնական զեկույցի կատարման համար իր կողմից ձեռնարկված ցանկացած միջոցի մասին: Ողջամիտ ժամկետը կարող է երկարաձգվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ ցանկացած ժամանակ՝ մինչև դրա լրանալը:

6. 5-րդ կետին համապատասխան հայտարարված ցանկացած միջոցի առկայության կամ X.2-րդ հոդվածի (Գործողության ոլորտը) դրույթներին համապատասխանության վերաբերյալ Կողմերի միջև տարաձայնությունների առաջացման դեպքում հայցվոր Կողմը կարող է ի սկզբանե հիմնադրված իրավամիջնորդական խմբին գրավոր խնդրել որոշում կայացնել այդ հարցով: Այդպիսի հարցման մասին միաժամանակ տեղեկացվում է մյուս Կողմը, որի համար նշվում է ցանկացած որոշակի քննարկվող միջոցը և 14.3-րդ հոդվածի (Գործողության ոլորտը) այն դրույթները, որոնց, ըստ Կողմի, այդ միջոցը չի համապատասխանում, այնպես, որպեսզի դա բավական լինի տարաձայնությունները պարզ ներկայացնելու համար: Ի սկզբանե հիմնադրված իրավամիջնորդական խումբն իր որոշումը Կողմերին ներկայացնում է ոչ ուշ, քան հարցումը ներկայացնելու օրից հետո՝ քառասուն հինգ (45) օրվա ընթացքում:

7. Այն դեպքում, երբ ի սկզբանե հիմնադրված իրավամիջնորդական խմբի որևէ անդամ այլևս չի կարող մասնակցել գործընթացին, կիրառվում են 14.8-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգերը (Իրավամիջնորդական խմբի կազմը և հիմնադրումը): Որոշման կայացման ժամկետը պետք է կազմի 6-րդ կետում նշված հարցումը ներկայացնելուց հետո վաթսուն (60) օրից ոչ ավել ⁵:

Հոդված 14.13

Փոխհատուցում և զիջումների կամ այլ պարտավորությունների կասեցում

1. Այն դեպքում, երբ պատասխանող Կողմը չի տեղեկացնում X.10.7-րդ հոդվածին համապատասխան (Իրավամիջնորդական խմբի զեկույցի կատարում) վերջնական զեկույցի կատարման համար ձեռնարկված որևէ միջոցի մասին, կամ, եթե իրավամիջնորդական խումբը որոշում է կայացնում այն մասին, որ որևէ միջոց, որը հայտարարվել է X.10.7-րդ հոդվածին համապատասխան (Իրավամիջնորդական խմբի զեկույցի կատարում), գոյություն չունի կամ չի համապատասխանում X.2-րդ հոդվածի որևէ դրույթին (Գործողության ոլորտը), պատասխանող Կողմը բանակցություններ է սկսում հայցվոր Կողմի հետ՝ փոխհատուցման մասին փոխընդունելի համաձայնության գալու նպատակով:

2. Եթե կողմերը չեն պայմանավորվել փոխհատուցման մասին ստորև ներկայացվածից հետո երեսուն (30) օրվա ընթացքում.

(ա) ողջամիտ ժամկետը լրանալուց, կամ

(բ) իրավամիջնորդական խմբի կողմից այն մասին որոշման կայացումից, որ 14.12-րդ հոդվածին համապատասխան հայտարարված ցանկացած միջոց գոյություն չունի (Իրավամիջնորդական խմբի զեկույցի կատարում), կամ հակասում է սույն Համաձայնագրի որևէ դրույթին,

հանգամանքներից կախված՝ հայցվոր Կողմն իրավունք ունի պատասխանող Կողմին տեղեկացնելուց հետո կասեցնել սույն Համաձայնագրից բխող զիջումների կամ այլ պարտավորությունների գործողությունը, որոնք համարժեք են իրավամիջնորդական խմբի կողմից սույն Համաձայնագրին չհամապատասխանող ճանաչված միջոցին վերաբերող պարտավորություններին: Տեղեկացման մեջ նշվում է զիջումների կամ

մյուս պարտավորությունների մակարդակը, որոնց գործողությունը Կողմը մտադիր է կասեցնել, և նշվում են պատճառները, որոնց վրա այդ հիմնվում է կասեցումը: Հայցվոր Կողմը կարող է սկսել կասեցումը պատասխանող Կողմին իր ծանուցումն առաքելուց քսան (20) օր հետո՝ հաշվի առնելով 4-րդ կետը:

3. Քննարկելով զիջումները կամ այլ պարտավորությունները, որոնց գործողությունը պետք է կասեցվի 2-րդ կետին համապատասխան՝

(ա) Հայցվոր Կողմը պետք է սկզբում փորձի կասեցնել զիջումների կամ այլ պարտավորությունների գործողությունը այն հատվածի (հատվածների) նկատմամբ, որտեղ X.9-րդ հոդվածում (Իրավամիջնորդական խմբի նախնական և վերջնական զեկույց) նշված իրավամիջնորդական խմբի վերջնական զեկույցում սահմանվել է սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորություններին անհամապատասխանություն,

(բ) եթե հայցվոր Կողմը համարում է, որ զիջումների կամ այլ պարտավորությունների կասեցումը նույն հատվածի (հատվածների) նկատմամբ նպատակահարմար չէ կամ անարդյունավետ է, նա կարող է կասեցնել զիջումների կամ այլ պարտավորությունների գործողությունն այլ հատվածի (հատվածների) նկատմամբ, և

(գ) հայցվոր Կողմը դիտարկելու է այն զիջումները կամ այլ պարտավորությունները, որոնց կասեցումը նվազագույն աստիճանով կխախտի սույն Համաձայնագրի գործողությունը:

4. Պատասխանող կողմը կարող է ի սկզբանե հիմնադրված իրավամիջնորդական խմբին գրավոր խնդրել որոշում կայացնել այն բանի մասին, թե արդյոք այն զիջումների կամ այլ պարտավորությունների մակարդակը, որոնց գործողությունը հայցվոր Կողմը մտադիր է կասեցնել, համարժեք է նրանց, որոնց վրա ազդել է իրավամիջնորդական խմբի կողմից սույն Համաձայնագրին չհամապատասխանող ճանաչված միջոցը: Հայցվոր Կողմը ծանուցվում է այդպիսի հարցման մասին մինչև 2-րդ կետում նշված քսանօրյա (20-օրյա) ժամկետի լրանալը: Ի սկզբանե հիմնադրված իրավամիջնորդական խումբը, անհրաժեշտության դեպքում հայցելով փորձագետների կարծիքը, Կողմերին ներկայացնում է իր եզրակացությունը ոչ ուշ, քան հարցումը ներկայացնելու օրից երեսուն (30) օր հետո: Զիջումների կամ այլ պարտավորությունների գործողությունը չպետք է կասեցվի այնքան ժամանակ, մինչև որ իրավամիջնորդական խումբը չկայացնի իր որոշումը, և ցանկացած կասեցում պետք է համապատասխանի իրավամիջնորդական խմբի որոշմանը:

5. Այն դեպքում, երբ ի սկզբանե հիմնադրված իրավամիջնորդական խմբի որևէ անդամ այլևս չի կարող մասնակցել գործընթացին, կիրառվում են X.6-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգերը (Իրավամիջնորդական խմբի կազմը և հիմնադրումը): Որոշման կայացման ժամկետը պետք է կազմի 4-րդ կետում նշված հարցումը ներկայացնելուց հետո քառասուն հինգ (45) օրից ոչ ավել ⁶:

6. 1-ին կետում նշված է փոխհատուցումը և 2-րդ կետում նշված կասեցումը ժամանակավոր միջոցներ են: Ո՛չ փոխհատուցումը, ո՛չ կասեցումը ավելի

նախընտրելի չեն սույն Համաձայնագրին ցանկացած անհամապատասխանության ամբողջությամբ վերացումից, ինչպես սահմանվել է իրավամիջնորդական խմբի վերջնական զեկույցում: Ցանկացած կասեցում կիրառվում է այնքան ժամանակ, մինչև որ անհամապատասխանությունն ամբողջությամբ կվերացվի, կամ, X.12-րդ հոդվածին համապատասխան կսահմանվի (Պարտավորությունների կատարման տեսություն), որ անհամապատասխանությունը վերացվել է, կամ Կողմերն այլ կերպ չեն կայացնի փոխընդունելի որոշում:

Հոդված 14.14

Պարտավորությունների կատարման ամփոփում

1. Եթե պատասխանող Կողմը համարում է, որ նա վերացրել է սույն Համաձայնագրին անհամապատասխանությունը, ինչպես որ ի սկզբանե սահմանվել էր իրավամիջնորդական խմբի վերջնական որոշման մեջ, նա կարող է գրավոր խնդրել ի սկզբանե նշանակված իրավամիջնորդական խմբին որոշում կայացնել տվյալ հարցի վերաբերյալ: Այդպիսի հարցման մասին միաժամանակ տեղեկացվում է մյուս Կողմին: Ի սկզբանե նշանակված իրավամիջնորդական խումբն իր որոշումը Կողմերին ներկայացնում է ոչ ուշ, քան հարցումը ներկայացնելու օրից հետո՝ քառասուն հինգ (45) օրվա ընթացքում: Եթե իրավամիջնորդական խումբը կորոշի, որ պատասխանող Կողմը վերացրել է X.2-րդ հոդվածում (Գործողության ոլորտը) նշված դրույթներին անհամապատասխանությունը, հայցվոր Կողմը պետք է դադարեցնի զիջումների կամ այլ պարտավորությունների՝ իր կողմից մտցված ցանկացած կասեցումը:

2. Այն դեպքում, երբ ի սկզբանե հիմնադրված իրավամիջնորդական խմբի որևէ անդամ այլևս չի կարող մասնակցել գործընթացին, կիրառվում են X.6-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգերը (Իրավամիջնորդական խմբիկազմը և հիմնադրումը):

Որոշման կայացման ժամկետը պետք է կազմի 1-ին կետում նշված հարցումը ներկայացնելուց հետո՝ վաթսուն (60) օրից ոչ ավել ⁷:

Հոդված 14.15

Իրավամիջնորդային քննության կասեցումը և դադարեցումը

1. Իրավամիջնորդական խումբը երկու Կողմի գրավոր հարցմամբ կասեցնում է իր աշխատանքը ցանկացած ժամանակ՝ Կողմերի միջև համաձայնեցված, տասներկու (12) ամիսը չգերազանցող ժամկետով, և վերսկսում է իր աշխատանքը Կողմերի միջև համաձայնեցված՝ այդ ժամկետի վերջում հայցվոր Կողմի գրավոր հարցմամբ, կամ մինչև այդ համաձայնեցված ժամանակահատվածի ավարտը՝ երկու Կողմի գրավոր հարցմամբ: Եթե հայցվոր Կողմը չի պահանջում վերսկսել իրավամիջնորդական խմբի աշխատանքը մինչև կասեցման համաձայնեցված ժամանակահատվածի լրանալը, վեճի կարգավորման ընթացակարգերը, որոնք սկսվել էին սույն գլխին համապատասխան, համարվում են դադարեցված: 14.4-րդ հոդվածին (Վեճի կարգավորման վայրի ընտրությունը) համապատասխան՝ իրավամիջնորդական խմբի աշխատանքի կասեցումը կամ դադարեցումը չի սահմանափակում Կողմերից

ցանկացածի իրավունքներն այլ քննության մեջ:

2. Կողմերը ցանկացած ժամանակ կարող են գրավոր պայմանավորվել սույն գլխին համապատասխան սկսած վեճերի կարգավորման ընթացակարգերի դադարեցման մասին:

Հոդված 14.16
Ընթացակարգի կանոնները

Վեճերի կարգավորման ընթացակարգերը՝ սույն գլխին համապատասխան, կարգավորվում են 14-1 Հավելվածով (Իրավամիջնորդային վարույթի կարգը):

Հոդված 14.17
Մեկնաբանության կանոնները

Իրավամիջնորդական խումբը սույն համաձայնագրի դրույթները մեկնաբանում է միջազգային հանրային իրավունքի մեկնաբանության սովորական կանոններին համապատասխան:

Հոդված 14.18
Ծախսերը

Յուրաքանչյուր Կողմ կրում է իր կողմից նշանակված իրավամիջնորդի ծախսերը, ինչպես նաև իրավական օգնության համար իր ծախսերը և ծախքերը: Իրավամիջնորդական խմբի նախագահի ծախսերը և քննության վարման հետ կապված այլ ծախսերը Կողմերը կրում են հավասար մասնաբաժիններով:

Հոդված 14.19
Ժամկետները

1. Սույն գլխում սահմանված բոլոր ժամկետները հաշվարկվում են օրացուցային օրերով, ընդ որում, առաջին օր է համարվում այն օրը, որը հաջորդում է խնդրի առարկա հանդիսացող գործողությանը կամ փաստին, եթե այլ բան նշված չէ:

2. Սույն գլխում նշված ցանկացած ժամկետ կարող է փոփոխվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

ՀԱՎԵԼՎԱԾ 14-1

ԻՐԱՎԱՄԻՋՆՈՐԴԱՅԻՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԿԱՐԳԸ

Ընդհանուր դրույթներ

1. 14-րդ Գլխում (Վեճերի կարգավորումը) նշված սահմանումները կիրառվում են սույն Հավելվածի նկատմամբ: Ի լրացում՝ սույն Հավելվածի և 14-2 Հավելվածի նպատակների համար (Իրավամիջնորդների վարքագծի օրենսգիրք).

«**խորհրդական**» նշանակում է անձ, որին Կողմը հրավիրել է իրավամիջնորդային քննության հետ կապված՝ այդ Կողմին խորհրդատվություն տրամադրելու կամ օգնություն ցուցաբերելու համար,

«**օգնական**» նշանակում է անձ, որը, իրավամիջնորդի նշանակման պայմաններին համապատասխան, անցկացնում է հետազոտություն կամ օգնություն է ցուցաբերում իրավամիջնորդին,

«**թեկնածու**» նշանակում է ֆիզիկական անձ, որը X.6-րդ հոդվածին (Իրավամիջնորդական խմբի կազմը և հիմնադրումը) համապատասխան դիտարկվում է որպես իրավամիջնորդ ընտրվելու համար:

«**ներկայացուցիչ**» նշանակում է Կողմի աշխատակից, կամ պետական մարմնի, գերատեսչության կամ ցանկացած այլ հանրային իրավաբանական անձի կողմից նշանակված անձ, որը ներկայացնում է Կողմը վեճի նպատակների համար սույն Համաձայնագրին համապատասխան:

«**անձնակազմ**» իրավամիջնորդի գործունեությանը վերաբերող մասով նշանակում է ցանկացած անձ, որը գտնվում է իրավամիջնորդի ղեկավարության և վերահսկողության տակ, բացառությամբ օգնականի:

2. Սույն Հավելվածը վերաբերում է 14-րդ Գլխին համապատասխան (Վեճերի կարգավորում)՝ վեճերի կարգավորման ընթացակարգերին, եթե Կողմերն այլ բանի մասին չեն պայմանավորվել:

3. Հայցվոր Կողմը պատասխանատու է վեճերի կարգավորման ընթացակարգերի նյութատեխնիկական ապահովման, մասնավորապես՝ լսումների կազմակերպման համար, եթե այլ բան չի համաձայնեցվել:

Ծանուցումներ

4. Կողմերը և իրավամիջնորդական խումբը համապատասխան Կողմերին պետք է միաժամանակ փոխանցեն ցանկացած հարցում, ծանուցում, գրավոր ձևով ներկայացված փաստաթղթեր, կամ այլ փաստաթուղթ՝ էլեկտրոնային փոստով նույն օրը ձեռագրի տպագիր վերարտադրությամբ թղթային պատճենով ներկայացված՝ փոստային առաքումով պատվիրված, առաքիչի միջոցով ստացականով ձևակերպված կամ ուղարկման փաստը հաստատող կապի այլ միջոցով ուղարկված: Եթե այլ բան ապացուցված չէ, էլեկտրոնային փոստով ուղարկված

հաղորդագրությունը համարվում է ստացված դրա ուղարկման օրը:

5. Բոլոր ծանուցումները պետք է հասցեագրված լինեն Կողմերի համապատասխան կոնտակտային կետերին, որոնք նշված են 15.3-րդ հոդվածում (Կոնտակտային կետեր):

6. Ցանկացած հարցման, ծանուցման, գրավոր ձևով ներկայացված փաստաթղթերի կամ իրավամիջնորդաժային քննությանը վերաբերող այլ փաստաթղթի մեջ տեխնիկական բնույթի ոչնշանակալի սխալները, եթե մյուս Կողմը չի առարկում, կարող են ուղղվել 4-5 կանոններին համապատասխան փոփոխությունների հստակ նշումներով՝ նոր փաստաթղթի փոխանցման միջոցով:

7. Եթե փաստաթղթի առաքման վերջին օրը համընկնում է Կողմերից մեկի պաշտոնական պետական տոնին, փաստաթուղթն առաքվում է հաջորդ աշխատանքային օրը:

Իրավամիջնորդաժային քննության սկիզբը

8. Եթե Կողմերն այլ բանի մասին չեն պայմանավորվել, նրանք պետք է հանդիպեն իրավամիջնորդական խմբի հետ դրա ստեղծման պահից յոթ օրվա ընթացքում, որպեսզի սահմանեն այն հարցերը, որոնք Կողմերը կամ իրավամիջնորդական խումբը կգտնեն նպատակահարմար, ներառյալ իրավամիջնորդներին վճարվելիք պարգևատրումները և ծախսերը: Իրավամիջնորդները և Կողմերի ներկայացուցիչները կարող են մասնակցել այդ նիստին հեռախոսակապի կամ տեսագիտաժողովի միջոցով:

Փաստաթղթերի՝ գրավոր ձևով սկզբնական ներկայացումը

9. Հայցվոր Կողմը գրավոր ձևով ներկայացնում է իր փաստաթղթերը ոչ ուշ, քան իրավամիջնորդական խմբի հիմնադրման օրից 21 օր հետո: Պատասխանող Կողմը գրավոր ձևով ներկայացնում է իր փաստաթղթերը ոչ ուշ, քան հայցվոր Կողմի գրավոր ձևով փաստաթղթերի առաքման օրից 21 օր հետո:

Իրավամիջնորդաժային խմբերի աշխատանքը

10. Իրավամիջնորդական խմբի նախագահը նախագահում է բոլոր նիստերը: Իրավամիջնորդական խումբը կարող է նախագահին փոխանցել վարչական և վարութային որոշումների կայացման լիազորությունները:

11. Եթե 14-րդ գլխում (Վեճերի կարգավորում) այլ բան նախատեսված չէ, իրավամիջնորդական խումբը կարող է իրականացնել իր գործունեությունը ցանկացած կապի միջոցների օգնությամբ, ներառյալ հեռախոսային, ձեռագրի տպագիր վերարտադրության և համակարգչային կապը:

12. Իրավամիջնորդական խմբի նիստերին կարող են մասնակցել միայն իրավամիջնորդները, բայց իրավամիջնորդական խումբը կարող է թույլատրել իր օգնականներին ներկա գտնվել իր քննարկումների ժամանակ:

13. Քննության ընթացքում բարձրացրած բոլոր հարցերի ուսումնասիրությունը և իրավամիջնորդական խմբի ցանցկացած որոշումների նախագծերի նախապատրաստումը իրավամիջնորդական խմբի բացառիկ պարտականությունն է, և այդ պարտականությունը չպետք է փոխանցվի:

14. Վարութային հարցի առաջացման դեպքում, որը չի նախատեսվել 14-րդ գլխով (Վեճերի կարգավորումը) կամ 14-2 Հավելվածներով, այդ թվում՝ ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, իրավամիջնորդական խումբը Կողմերի հետ խորհրդատվություններ անցկացնելուց հետո կարող է հաստատել այդ դրույթներին համապատասխանող անհրաժեշտ ընթացակարգ:

15. Երբ իրավամիջնորդական խումբը համարում է, որ անհրաժեշտ է փոխել 14-րդ գլխով (Վեճերի կարգավորումը) կամ դրա Հավելվածներով կամ Հավելված 14-2-ով նախատեսված որևէ ժամկետ կամ ընթացակարգ, գրավոր տեղեկացնում է Կողմերին հանձնարարված փոփոխության պատճառների մասին: Կողմերը կարող են փոխադարձ համաձայնությամբ փոխել ցանկացած ժամկետ կամ ընթացակարգ:

Իրավամիջնորդների փոխարինումը

16. Եթե իրավամիջնորդը չի կարող մասնակցել քննությանը, նա հայտնում է ինքնաբացարկ կամ պետք է փոխարինվի, իսկ փոխարինողը պետք է ընտրվի 14.8-րդ հոդվածին համապատասխան (Իրավամիջնորդական խմբիկազմը և հիմնադրումը):

17. Եթե վեճի Կողմը համարում է, որ իրավամիջնորդը չի համապատասխանում 14.8-րդ հոդվածի (Իրավամիջնորդական խմբի կազմը և հիմնադրումը) 7-րդ կետի կամ 14-2 Հավելվածի համապատասխան (այսուհետ՝ «Վարքագծի օրենսգրք») Իրավամիջնորդների վարքագծի օրենսգրքի պահանջներին և այդ պատճառով պետք է փոխարինվի, ապա այդ Կողմը պետք է տեղեկացնի մյուս Կողմին իրավամիջնորդի՝ պահանջներին անհամապատասխանության հիմքում ընկած հանգամանքներն իրեն հայտնի դառնալու պահից 15 օրվա ընթացքում:

18. Եթե վեճի Կողմը համարում է, որ իրավամիջնորդը, նախագահից բացի, չի համապատասխանում 14.8-րդ հոդվածի (Իրավամիջնորդական խմբի կազմը և հիմնադրումը) 7-րդ կետի կամ 14-2 Հավելվածի Վարքագծի կողերսի պահանջներին, Կողմերն անցկացնում են խորհրդատվություններ և, իրենց համաձայնության դեպքում, փոխարինում են իրավամիջնորդին և փոխարինողին ընտրում են 14.8-րդ հոդվածում (Իրավամիջնորդական խմբիկազմը և հիմնադրումը) նախատեսված ընթացակարգին համապատասխան:

19. Եթե Կողմերը չեն կարող պայմանավորվել իրավամիջնորդի փոխարինման հարցում, Կողմերից յուրաքանչյուրը կարող է միջնորդել այդ հարցը իրավամիջնորդական խմբի նախագահի քննարկմանը փոխանցելու համար, որի

որոշումը վերջնական է:

20. Եթե Կողմը համարում է, որ իրավամիջնորդական խմբիղեկավարը չի համապատասխանում 14.8-րդ հոդվածի (Իրավամիջնորդական խմբի կազմը և հիմնադրումը) 7-րդ կետի կամ 14-2 Հավելվածի Վարքագծի օրենսգրքի պահանջներին, Կողմերը անցկացնում են խորհրդատվություններ և, նրանց համաձայնության դեպքում, փոխարինում են նախագահին և ընտրում են փոխարինողին 14.8-րդ հոդվածում (Իրավամիջնորդական խմբի կազմը և հիմնադրումը) նախատեսված ընթացակարգին համապատասխան:

21. Եթե Կողմերը չեն կարող պայմանավորվել նախագահի փոխարինման անհրաժեշտության մասին, այդ հարցը փոխանցվում է ԱՀԿ Գլխավոր տնօրենի քննարկմանը: Նախագահի փոխարինման անհրաժեշտության մասին ԱՀԿ Գլխավոր տնօրենի որոշումը վերջնական է:

22. 21-րդ կանոնի նպատակների համար՝ եթե Կողմերից մեկը չի հանդիսանում ԱՀԿ անդամ, «ԱՀԿ Գլխավոր տնօրեն» հիշատակումը փոխարինվում է «ՄԱԿ-ի ՄԴ նախագահ»-ով: Եթե ՄԱԿ-ի ՄԴ-ի նախագահը վեճի կողմերից որևէ մեկի քաղաքացի է, ապա նրանցից պահանջվում է անհրաժեշտ նշանակումներ կատարել ՄԱԿ-ի ՄԴ ի նախագահի տեղակալի կամ հաջորդ ավագ աշխատողի հետ, որը վեճի կողմերից որևէ մեկի քաղաքացի չէ:

23. Իրավամիջնորդական խմբի աշխատանքը կասեցվում է սույն Հավելվածի 18-22 կանոններով նախատեսված ընթացակարգերի իրականացման ժամկետով:

Լսումներ

24. Նախագահը նշանակում է լսումների օրը և ժամը, խորհրդակցելով Կողմերի և մյուս իրավամիջնորդների հետ, և հաստատում է այն Կողմին գրավոր ձևով: Եթե Կողմերից ոչ մեկը չի առարկում, իրավամիջնորդական խումբը կարող է որոշել լսումներ չգումարել:

25. Եթե Կողմերն այլ բանի մասին չեն պայմանավորվել, լսումներն անցկացվում են հայցվոր Կողմի տարածքում:

26. Իրավամիջնորդական խումբը կարող է գումարել լրացուցիչ լսումներ, եթե Կողմերն այդ մասին պայմանավորվեն:

27. Բոլոր իրավամիջնորդները պետք է ներկա գտնվեն բոլոր լսումների ընթացքում:

28. Հետևյալ անձինք կարող են ներկա գտնվել լսումներին՝

(ա) Կողմերի ներկայացուցիչները,

(բ) Կողմերի խորհրդականները,

(գ) վարչական անձնակազմը, բանավոր թարգմանիչները, գրավոր թարգմանիչները և նիստի քարտուղարները, և

(դ) իրավամիջնորդների օգնականները:

Միայն Կողմերի ներկայացուցիչները և խորհրդականները կարող են հանդես գալ ռավամիջնորդական խմբիառջև:

29. Ոչ ուշ, քան լսումների անցկացման օրից 3 օր առաջ, Կողմերից յուրաքանչյուրն իրավամիջնորդաժային խմբին և միաժամանակ՝ մյուս Կողմին է ներկայացնում անձանց ցուցակը, որոնք լսումների շրջանակներում հանդես են գալու բանավեճերին բանավոր ապացույցներով կամ այդ Կողմի անունից գործի ներկայացմամբ, ինչպես նաև մյուս ներկայացուցիչներին և խորհրդականներին, որոնք ներկա են գտնվելու լսումներին:

30. Իրավամիջնորդական խումբն անցկացնում է լսումներ հետևյալ կերպով, ապահովելով, որպեսզի հայցվոր Կողմին և պատասխանող Կողմին տրամադրվի հավասար ժամանակ:

Փաստաթղթերի ներկայացում

(ա) հայցվոր Կողմի փաստաթղթերի ներկայացում,

(բ) պատասխանող Կողմի փաստաթղթերի ներկայացում,

Բանավեճեր

(ա) հայցվոր Կողմի ապացույցները,

(բ) պատասխանող Կողմի պատասխան ապացույցները:

31. Իրավամիջնորդական խումբն ապահովում է յուրաքանչյուր լսման սղագրության պատրաստումը և հնարավոր կարճ ժամկետում Կողմերին դրա տրամադրումը:

32. Իրավամիջնորդական խմբի համաձայնության դեպքում, վեճի Կողմը կարող է լսումների ընթացքում առաջացած ցանկացած հարցին ի պատասխան գրավոր ձևով ներկայացնել լրացուցիչ փաստաթղթեր: Վեճի մյուս Կողմին նույնպես հնարավորություն է տրվում ներկայացնել գրավոր մեկնաբանություններ այդպիսի ցանկացած լրացուցիչ գրավոր փաստաթղթերին:

Գրավոր ձևով հարցերը

33. Իրավամիջնորդական խումբն իրավամիջնորդաժային քննության ընթացքում ցանկացած պահին մեկ կամ երկու Կողմին կարող է գրավոր ձևով հարցեր ուղարկել: Կողմերից յուրաքանչյուրն ստանում է իրավամիջնորդական խմբի կողմից տրված ցանկացած հարցերի պատճենները:

34. Յուրաքանչյուր Կողմը նաև միաժամանակ ներկայացնում է իրավամիջնորդաժային խմբին և մյուս Կողմին իր գրավոր պատասխանների պատճենները իրավամիջնորդական խմբի հարցերին: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մյուս Կողմի պատասխաններին գրավոր մեկնաբանություններ տալու

հնարավորություն՝ դրանք ստանալուց 7 օրվա ընթացքում:

Գաղտնիություն

35. Կողմերը, և՛ նրանց խորհրդականներն ու ներկայացուցիչները, և՛ բոլոր իրավամիջնորդները, նախկին իրավամիջնորդները, և՛ նրանց օգնականներն ու աշխատակիցները, բոլոր մասնակիցները և փորձագետները, որոնք ներկա են գտնվում իրավամիջնորդական խմբի լսումներին, պետք է պահպանեն լսումների, քննարկումների և իրավամիջնորդական խմբի նախնական զեկույցի, և՛ գրավոր ձևով ներկայացված բոլոր փաստաթղթերի, և՛ իրավամիջնորդական խմբի հետ տեղեկատվության փոխանակման գաղտնիությունը: Այն ներառում է ցանկացած տեղեկատվություն, որը Կողմը ներկայացրել է իրավամիջնորդաժային խմբին, և որն այդ Կողմը նշել է որպես գաղտնի: Ոչինչ սույն Հավելվածում չպետք է խոչընդոտ հանդիսանա Կողմի համար՝ իր դիրքորոշումը հրապարակայնորեն հայտնելու համար այնքանով, որքանով հղում կատարելով մյուս Կողմի ներկայացրած տեղեկատվությանը՝ չբացահայտվի այնպիսի տեղեկատվություն, որը մյուս Կողմը նշել է որպես գաղտնի:

Կոնֆակտներ ex parte

36. Իրավամիջնորդաժային կոլեգիան չպետք է անցկացնի հանդիպումներ, լսումներ և այլ կերպ փոխգործակցի Կողմի հետ մյուս Կողմի բացակայության դեպքում:

37. Իրավամիջնորդներից ոչ մեկը չի կարող Կողմի կամ Կողմերի հետ քննարկել քննության առարկան մյուս իրավամիջնորդների բացակայության դեպքում:

Լեզու և թարգմանություն

38. Բոլոր ընթացակարգերը, որոնք նախատեսված են 10-րդ Գլխով (Վեճերի կարգավորում), և ամբողջ տեղեկատվական փոխանակումը, ներկայացվող բոլոր փաստաթղթերը, իրավամիջնորդաժային կոլեգիայի կողմից հրապարակվող բոլոր զեկույցները անցկացվում կամ կազմվում են անգլերեն:

39. Յուրաքանչյուր Կողմ պատասխանատվություն է կրում քննության ընթացքում իր կողմից ներկայացվող բոլոր փաստաթղթերի անգլերեն թարգմանությունը պատրաստելու համար:

Ժամկետների հաշվարկում

40. Եթե սույն Հավելվածի 7-րդ Կանոնի կիրառման հետ կապված՝ Կողմն ստանում է փաստաթուղթը մյուս Կողմի ստացած օրից տարբերվող մեկ ուրիշ օր, ցանկացած ժամկետ, որը հաշվարկվում է այդ փաստաթղթի ստացման օրվա հիման վրա, պետք է հաշվարկվի այդ փաստաթղթի ստացման վերջին ամսաթվից:

Այլ ընթացակարգեր

41. Սույն Հավելվածը նաև կիրառվում է 14.12-րդ հոդվածի (Իրավամիջնորդական խմբի զեկույցի կատարում) 3-րդ և 8-րդ կետերով, 14.13-րդ հոդվածի (Փոխհատուցում

և զիջումների կամ այլ պարտավորությունների կասեցում) 4-րդ կետով և 14.14-րդ հոդվածի (Պարտավորությունների կատարման տեսություն) 1-ին կետով նախատեսված ընթացակարգերի նկատմամբ: Սույն Հավելվածով սահմանված ժամկետները համաձայնեցվում են հատուկ ժամկետների հետ, որոնք նախատեսված են իրավամիջնորդական խմբի կողմից այդպիսի առանձին ընթացակարգերի շրջանակներում որոշումների կայացման համար:

ՀԱՎԵԼՎԱԾ 14-2

ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Սահմանումներ

1. Եթե այլ բան նախատեսված չէ, սույն հավելվածում օգտագործված սահմանումները կիրառվում են 14-րդ Գլխում (Վեճերի կարգավորումը) և 14-1 (Իրավամիջնորդային վարույթի կարգը) Հավելվածում սահմանված իմաստներով:

Պարտականությունները քննության ընթացքում

2. Քննության ընթացքում յուրաքանչյուր թեկնածու կամ իրավամիջնորդ պարտավոր է կանխել ոչ պատշաճ պահվածքը կամ դրա դրսևորումը, գործել ինքնուրույն և անկողմնակալ, խուսափել ուղղակի կամ անուղղակի շահերի բախումից և պահպանել վարքագծի բարձր չափանիշներ՝ վեճերի լուծման մեխանիզմի ամբողջականությունն ու անաչառությունը պահպանելու համար:

Պարտավորություններ տեղեկատվության բացահայտման համար

3. Մինչև իրավամիջնորդի պաշտոնին հաստատվելը 14-րդ գլխի (Վեճերի լուծում) համաձայն՝ թեկնածուն պարտավոր է բացահայտել ցանկացած շահագրգռվածության, հարաբերությունների կամ իրավիճակների մասին տեղեկատվություն, որոնք կարող են ազդել պատշաճ պահվածքի կամ կողմնակալության հիմնավոր տպավորություն ստեղծել քննության ընթացքում: Այս նպատակով թեկնածուն պարտավոր է գործադրել բոլոր ջանքերը, որպեսզի ճանաչի այդպիսի հետաքրքրության, հարաբերությունների կամ իրավիճակի առկայությունը:

4. Հաստատվելուց հետո իրավամիջնորդը պետք է շարունակի գործադրել բոլոր ողջամիտ ջանքերը սույն Հավելվածի 3-րդ կետում նշված ցանկացած հետաքրքրության, հարաբերությունների կամ իրավիճակի առկայությունը ճանաչելու համար և պարտավոր է բացահայտել դրանց մասին տեղեկատվությունը: Տեղեկատվության բացահայտման պարտավորությունը հանդիսանում է մշտական, ինչը իրավամիջնորդից պահանջում է վարույթի ցանկացած փուլում այդպիսի հետաքրքրության, հարաբերության կամ իրավիճակի առաջացման դեպքում, որ նա ինչքան հնարավոր է շուտ հայտնի դրանց մասին: Իրավամիջնորդը պարտավոր է բացահայտել այդպիսի հետաքրքրության, հարաբերության կամ իրավիճակի մասին տեղեկատվությունը՝ վեճի կողմերին գրավոր ձևով ծանուցելու միջոցով՝ նրանց քննության համար:

5. Հետաքրքրությունների, հարաբերությունների կամ իրավիճակների մասին տեղեկատվության բացահայտումները արվում են՝ անկախ նրանից թե այդպիսի հետաքրքրությունը, փոխհարաբերությունը կամ իրավիճակը սույն Հավելվածի 3-րդ և 4-րդ կետերի ազդեցության շրջանակներում են կամ դա կհանգեցնի բացարկի կամ որակազրկման: Հետաքրքրության, հարաբերությունների կամ իրավիճակի մասին տեղեկատվության բացահայտման հանդեպ անհրաժեշտության անորոշության դեպքում թեկնածուն կամ իրավամիջնորդը պարտավոր է կողմ քվեարկել բացահայտմանը:

6. Թեկնածուն կամ իրավամիջնորդը պարտավոր է վեճի կողմերին իրենց քննարկման համար տեղեկացնել միայն այդ իրավիճակում, երբ կա սույն Հավելվածի խախտման իրական կամ հավանական ռիսկ:

Իրավամիջնորդի պարտականությունները

7. Իրավամիջնորդը պարտավոր է ողջ քննության ընթացքում ուշադիր և անհապաղ կատարել իր պարտականությունները՝ արդարության և բարեխղճության ոգով:

8. Իրավամիջնորդը պարտավոր է պահպանել 4-րդ գլխով (Վեճերի լուծում), և 14-1 (Իրավամիջնորդային վարույթի կարգը) Հավելվածով և սույն Հավելվածով սահմանված դրույթները:

9. Իրավամիջնորդը պարտավոր է դիտարկել միայն այն հարցերը, որոնք ծագում են քննության ընթացքում և անհրաժեշտ են որոշում կայացնելու համար և չպետք է այդ պարտավորությունը փոխանցի որևէ երրորդ անձանց: Իրավամիջնորդը չպետք է մերժի մյուս իրավամիջնորդներին քննության բոլոր ասպեկտներից մասնակցության մեջ:

10. Իրավամիջնորդը պարտավոր է ձեռնարկել համապատասխան միջոցներ, որպեսզի նրա օգնականներն ու աշխատակիցները ծանոթ լինեն և պահպանեն սույն հավելվածի 2-րդ, 5-րդ և 17-20 կետերում նշված դրույթները:

11. Իրավամիջնորդը չպետք է ներգրավված լինի քննության հետ կապված միակողմանի շփումների մեջ:

Իրավամիջնորդի անկախություն և անկողմնակալություն

12. Իրավամիջնորդը պետք է լինի անկախ և անկողմնակալ և չպետք է ոչ պատշաճ պահվածքի կամ կողմնակալության տպավորություն ստեղծի, անձնական հետաքրքրություններ հետապնդի, ենթարկվի արտաքին ճնշման, կախված լինի քաղաքական հայացքներից, հանրային պահանջներից, օրինապահություն Կողմերի հանդեպ և քննադատության վախից:

13. Իրավամիջնորդը չպետք է ուղղակիորեն կամ անուղղակիորեն կատարի որևէ պարտավորություն կամ որևէ օգուտ քաղել, ինչը այս կամ այն կերպով կազդի կամ տպավորություն կթողնի, որ ազդում է սեփական պարտականությունների պատշաճ կատարման վրա:

14. Իրավամիջնորդը չպետք է օգտագործի իր դիրքերը իրավամիջնորդային խմբում ցանկացած անձնական կամ մասնավոր շահ առաջ տանելու համար և չպետք է ձեռնարկի միջոցներ, ինչը կարող է տպավորություն ստեղծել որ մյուսները գտնվում են հատուկ դիրքում և կարող են ազդել նրա վրա:

15. Իրավամիջնորդը չպետք է թույլ տա անցյալ կամ ներկա ֆինանսական, գործարար, մասնագիտական, ընտանեկան կամ սոցիալական հարաբերություններին կամ պարտականություններին ազդել նրա վարքի կամ դատողության վրա:

16. Իրավամիջնորդը չպետք մտնի որևէ հարաբերությունների մեջ կամ ֆինանսական հետաքրքրություն ձեռք բերի, ինչը կարող է ազդել նրա անկողմնակալության վրա կամ կարող է ոչ պատշաճ վարքագծի կամ կողմնակալության հիմնավոր տպավորություն ստեղծել:

Գաղտնիություն

17. Իրավամիջնորդը կամ նախկին իրավամիջնորդը երբեք չպետք է բացահայտեն կամ օգտագործեն ոչ հանրային ցանկացած տեղեկատվություն, որը առնչվում է քննությանը կամ քննության ընթացքում ձեռք բերված, բացառությամբ քննության նպատակների համար, մասնավորապես և չպետք է բացահայտել կամ օգտագործել ցանկացած նման տեղեկատվություն անձնական շահի համար կամ ուրիշների օգուտների համար, կամ ազդել այլոց շահերի վրա:

18. Իրավամիջնորդը չպետք է հրապարակային հայտարարություններ անի անավարտ իրավամիջնորդային քննության էության վերաբերյալ:

19. Իրավամիջնորդը չպետք է տարածի իրավամիջնորդային խմբի զեկույցը կամ մի մասը մինչև դրա ներկայացումը՝ 14-րդ գլխի (Վեճերի կարգավորումը) համաձայն:

20. Իրավամիջնորդը կամ նախկին իրավամիջնորդը չպետք է երբևէ բացահայտի իրավամիջնորդային խմբի քննարկման ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը, կամ ցանկացած իրավամիջնորդի կարծիքը քննարկումների ընթացքի վերաբերյալ, դատավարության ընթացքում մեծամասնության կամ փոքրամասնության կարծիքը արտահայտող այս կամ այն իրավամիջնորդին դասակարգման վերաբերյալ:

Ծախսեր

21. Յուրաքանչյուր իրավամիջնորդ պարտավոր է կատարել հաշվարկ և ներկայացնել վերջնական հաշվետվություն քննությանը նվիրված ժամանակի և իր ծախսերի մասին, ինչպես նաև իր օգնականների ժամանակի և ծախսերի մասին:

Նախկին իրավամիջնորդների պարտականությունները

22. Նախկին իրավամիջնորդը պարտավոր է խուսափել այնպիսի գործողություններից, որոնք կարող են տպավորություն ստեղծել, որ նա կողմնակալ էր իր պարտականությունների կատարման ընթացքում կամ օգուտ է քաղել իրավամիջնորդային խմբի որոշումից:

Փորձագետների, օգնականների և անձնակազմի պատրաստանարվություն

23. Սույն Հավելվածի 2-6, 8, 11, 17-20 և 22-րդ կետերը տարածվում են փորձագետների, օգնականների և անձնակազմի վրա:

ԳԼՈՒԽ 15

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

15.1

Համատեղ կոմիտե

1. Սույնով Կողմերը հիմնադրում են Համատեղ կոմիտե, որը կազմված է ԵԱՏՄ-ի և նրա անդամ պետությունների, մի կողմից, և Սինգապուրի Հանրապետության, մյուս կողմից, ներկայացուցիչներից:

2. Եթե Կողմերն այլ բանի մասին չեն պայմանավորվել, Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրից սկսած՝ Համատեղ կոմիտեն հերթականությամբ գումարվում է երկու տարին մեկ անգամ ԵԱՏՄ անդամ պետություններից մեկում կամ Սինգապուրի Հանրապետությունում: Համատեղ կոմիտեի համանախագահներն են յուրաքանչյուր Կողմից Նախարարի մակարդակով պաշտոնատար անձինք կամ նրանց կողմից լիազորված ներկայացուցիչներ: Համատեղ կոմիտեն իր նիստերի օրակարգը ձևավորում է ինքնուրույն:

3. Համատեղ կոմիտեն պետք է՝

(ա) իրականացնի սույն Համաձայնագրի ընդհանուր կիրառման տեսությունը,

(բ) իրականացնի հսկողություն և նպաստի սույն Համաձայնագրի պատշաճ կատարմանը, ինչպես նաև նրա հիմնական նպատակների խորացմանը,

(գ) իրականացնի սույն Համաձայնագրի շրջանակներում հիմնադրված բոլոր ենթակոմիտեների, աշխատանքային խմբերի և այլ մարմինների աշխատանքի հսկողությունը,

(դ) ուսումնասիրի Կողմերի միջև առևտրային հարաբերությունների հետագա խորացման հնարավորությունները,

(ե) ձգտի կարգավորել ցանկացած խնդրահարույց հարցեր, որոնք բխում են սույն Համաձայնագրից, և

(զ) Կողմերի փոխադարձ համաձայնությամբ քննարկի սույն Համաձայնագրի հետ կապված ցանկացած հարցեր:

4. Համատեղ կոմիտեն կարող է՝

(ա) կայացնել որոշումներ ցանկացած ենթակոմիտեի կամ աշխատանքային խմբի հիմնադրման կամ լուծարման, կամ գոյություն ունեցող ենթակոմիտեներին կամ աշխատանքային խմբերին պարտականություններով և գործառույթներով օժտելու մասին:

(բ) կայացնել որոշումներ տեղեկատվական փոխանակման մասին, անհրաժեշտության դեպքում՝ բոլոր շահագրգռված անձանց կամ փորձագետների հետ, ցանկացած հարցերով, որոնք ներառված են Համատեղ կոմիտեի իրավասության շրջանակներում,

(գ) քննարկել ենթակոմիտեների և աշխատանքային խմբերի հանձնարարականները,

(դ) Կողմերի համար նախապատարաստել հանձնարարականներ, որոնք նա կգտնի նպատակահարմար, այդ թվում՝ սույն Համաձայնագրում ցանկացած փոփոխությունների իրականացման վերաբերյալ,

(ե) ընդունել որոշումներ կամ նախապատրաստել հանձնարարականներ, եթե դա նախատեսված է սույն Համաձայնագրով,

(զ) հաստատել Համատեղ կոմիտեի ընթացակարգի Կանոնները, և

(է) ի կատարումն իր գործառույթների՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ նախաձեռնել ցանկացած այլ գործողություններ:

5. Համատեղ կոմիտեն ընդունում է որոշումները կամ հանձնարարականներ Կողմերի միջև փոխհամաձայնության դեպքում: Կողմերը պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն Համատեղ կոմիտեի որոշումների կատարման համար:

Հոդված 15.2

Ենթակոմիտեներ և աշխատանքային խմբեր

Ենթակոմիտեները և աշխատանքային խմբերը կարող են հիմնադրվել սույն Համաձայնագրից՝ ելնելով կամ սույն Համաձայնագրին համապատասխան գործող Համատեղ կոմիտեի որոշմամբ: Ենթակոմիտեները և աշխատանքային խմբերը պետք է Համատեղ կոմիտեին զեկուցեն իրենց գործունեության մասին Համատեղ կոմիտեի յուրաքանչյուր հերթական նիստին: Ենթակոմիտեի կամ աշխատանքային խմբի ստեղծումը կամ գոյությունը Կողմերից ոչ մեկի համար չպետք է սահմանափակի Համատեղ կոմիտեին ցանկացած հարցով ուղղակիորեն դիմելու հնարավորությունը:

Հոդված 15.3

Կոնտակտային կետերը

Յուրաքանչյուր Կողմ նշանակում է կոնտակտային կետ, որն ընդհանուր առմամբ պատասխանատու է մյուս Կողմի և Համատեղ կոմիտեի հետ սույն Համաձայնագրի գործողության ոլորտում ընդգրկված ցանկացած հարցերով տեղեկատվական փոխանակման համար, եթե այլ բան հատուկ նշված չէ սույն Համաձայնագրի մյուս դրույթներում: Յուրաքանչյուր Կողմ նշանակում է իր կոնտակտային կետը իր ներքին ընթացակարգերին համապատասխան և մյուս Կողմին տեղեկացնում է այդ նշանակման մասին սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրից 90 օրվա ընթացքում: Կողմի կոնտակտային կետի հետ կապված ցանկացած փոփոխության

մասին, այդ Կողմը պատշաճ կերպով տեղեկացնում է մյուս Կողմին:

Հոդված 15.4

Մյուս համաձայնագրերի հետ փոխադարձ կապը

1. Կողմերը հաստատում են միմյանց հանդեպ գոյություն ունեցող իրենց իրավունքներն ու պարտականությունները, որոնք բխում են ԱՀԿ Համաձայնագրից, ԱՀԿ շրջանակներում այլ համաձայնագրերից, որոնց նրանք մասնակցում են, և այլ երկկողմ համաձայնագրերը, որոնց նրանք մասնակցում են:
2. Սույն Համաձայնագրի և Կողմերի մասնակցած մյուս համաձայնագրերի միջև ցանկացած հակասության դեպքում, համապատասխան Կողմերն անհապաղ անցկացնում են միմյանց հետ խորհրդատվություններ՝ միջազգային իրավունքի սկզբունքները հաշվի առնելով փոխադարձ ընդունելի որոշում մշակելու նպատակով:
3. Չնայած 2-րդ կետին, եթե սույն Համաձայնագրում ուղղակիորեն նախատեսված են դրույթներ, որոնք կարգավորում են 2-րդ կետում նշված հակասության հարցը, ապա կիրառվում են այդ դրույթները:
4. Սույն Համաձայնագրի նպատակների համար՝ ՄԱԳՀ-1994-ի հոդվածներին ցանկացած հղումները, որտեղ կիրառելի է, ներառում են պարզաբանող ծանոթագրություններ:

Հոդված 15.5

ԱՀԿ իրավունքի զարգացումը

Եթե ԱՀԿ Համաձայնագրի ցանկացած դրույթ, որը Կողմերը ներառնում են սույն Համաձայնագիր, փոփոխվի, Կողմերը Համատեղ կոմիտեի շրջանակներում միմյանց միջև անցկացնում են խորհրդատվություններ՝ անհրաժեշտության դեպքում փոխընդունելի որոշում մշակելու նպատակով:

Հոդված 15.6

Հարկադրում

1. Սույն համաձայնագիրը կիրառվում է հարկային միջոցների նկատմամբ միայն այն չափով, որքանով որ ՄԱԳՀ-1994-ը կիրառվում է հարկային միջոցների նկատմամբ:
2. Ոչինչ սույն Համաձայնագրում չպետք է ազդի Միության կամ նրա ցանկացած անդամ պետության իրավունքների և պարտավորությունների վրա, կա՛մ Սինգապուրի իրավունքների և պարտավորությունների վրա, որոնք կապված են Միության և Սինգապուրի, կա՛մ Միության ցանկացած անդամ պետության և Սինգապուրի միջև ցանկացած հարկային համաձայնագրի հետ: Սույն Համաձայնագրի և ցանկացած այդպիսի համաձայնագրի միջև ցանկացած հակասության դեպքում այդպիսի համաձայնագիրը հակասության մասով գերակա ուժ ունի: Միության և Սինգապուրի, կամ Միության ցանկացած անդամ պետության և Սինգապուրի միջև հարկային

համաձայնագրի առկայության դեպքում լիազորված մարմիններն այդպիսի համաձայնագրի շրջանակներում բացառիկ պատասխանատվություն են կրում որոշելու, թե արդյոք գոյություն ունի որևէ հակասություն սույն Համաձայնագրի և այդպիսի համաձայնագրի միջև:

3. Սույն հոդվածի նպատակների համար «հարկային համաձայնագիր» նշանակում է կրկնակի հարկումից խուսափելու մասին համաձայնագիր կամ հարկադրման մասին այլ միջազգային համաձայնագիր կամ պայմանավորվածություն:

Հոդված 15.7

Սահմանափակումներ վճարային հաշվեկշռի պահպանման ապահովման նպատակով

1. Կողմը իր վճարային հաշվեկշռի հավասարակշռության լուրջ խախտումների և արտաքին ֆինանսական վիճակի հետ կապված լուրջ դժվարությունների կամ այդպիսի սպառնալիքի առկայության դեպքում կարող է ՄԱԳՀ-1994-ի XII-րդ հոդվածին և ՄԱԳՀ-1994-ի վճարային հաշվեկշռի մասին դրույթների վերաբերյալ պայմանավորվածությանը համապատասխան կիրառել սահմանափակող միջոցներ ներմուծման նկատմամբ: Այդպիսի սահմանափակող միջոցները պետք է համապատասխանեն Արժույթի միջազգային հիմնադրամի մասին համաձայնագրի Հոդվածներին:

2. Ցանկացած կողմ, որը պահպանում է գործողությունը, կիրառում կամ փոփոխում է սահմանափակող միջոցները, հնարավոր կարճ ժամկետում այդ մասին տեղեկացնում է մյուս Կողմին:

3. 1-ին և 2-րդ կետերում նշված սահմանափակող միջոցների պահպանման կամ կիրառման ժամանակ Համատեղ կոմիտեն հնարավոր կարճ ժամկետում անցկացնում է խորհրդատվություններ: Այդպիսի խորհրդատվությունների շրջանակներում գնահատվում է իրավիճակը, որը ազդում է համապատասխան Կողմի վճարային հաշվեկշռի վիճակի վրա և սահմանափակող միջոցները, որոնք պահպանվել կամ կիրառվում են սույն հոդվածին համապատասխան՝ հաշվի առնելով, այդ թվում, այնպիսի գործոնները, որոնք են՝

(a) Կողմի վճարային հաշվեկշռի և արտաքին ֆինանսական դրության հետ կապված դժվարությունների բնույթը և մասշտաբը,

(b) արտաքին տնտեսական և առևտրային իրավիճակը, կամ

(c) այլընտրանքային, կանոնավորող միջոցները, որոնք կարող են օգտագործվել:

Խորհրդատվությունների ընթացքում քննարկվում է 1-ին և 2-րդ կետերին սահմանափակող միջոցների համապատասխանության հարցը: Ընդ որում, հաշվի են առնվում ԱՄՀ ներկայացված բոլոր վիճակագրական և այլ տվյալները, որոնք

վերաբերում են փոխարժեքին, արժույթային պաշարներին և վճարային հաշվեկշռի վիճակին, իսկ եզրակացությունները հիմնվում են ԱՄՀ-ի կողմից ներկայացված համապատասխան Կողմի վճարային բալանսի և արտաքին ֆինանսական վիճակի գնահատման վրա:

Հոդված 15.8 Ընդհանուր բացառումներ

Պայմանով, որ այդպիսի միջոցները չեն կիրառվում այնպիսի կերպով, որը կարող էր վերաձվել Կողմերի միջև կամայական կամ չարդարացված խտրականության միջոցի, որտեղ գերակայում են միատեսակ պայմանները, կամ միջազգային առևտրի քողարկված սահմանափակման, ոչինչ սույն Համաձայնագրում չպետք է իբրև խոչընդոտ մեկնաբանվի Կողմի այն միջոցների ընդունման կամ կիրառման հարցում, որոնք

(a) անհրաժեշտ են հասարակական բարոյականության պաշտպանության համար,

(b) անհրաժեշտ են մարդու, կենդանիների և բույսերի կյանքի կամ առողջության պաշտպանության համար,

(c) վերաբերում են ոսկու կամ արծաթի ներկրմանը կամ արտահանմանը,

(d) անհրաժեշտ են սույն Համաձայնագրի դրույթներին չհակասող օրենքներին կամ կանոններին համապատասխանության ապահովման համար, ներառյալ նրանք, որոնք վերաբերում են մաքսային օրենսդրության, ՄԱԳՀ-1994-ի II-րդ հոդվածի 4-րդ կետին և XVII-րդ հոդվածին համապատասխան գործող մենաշնորհների մասին կանոնների պահպանման, արտոնագրերի, ապրանքային նշանների և հեղինակային իրավունքի պաշտպանության և մոլորության մեջ գծող պրակտիկաների կանխարգելման ապահովմանը,

(e) վերաբերում են բանտարկյալների կողմից արտադրված ապրանքներին,

(f) ընդունվում են գեղարվեստական, պատմական կամ հնագիտական արժեք ունեցող ազգային գանձերի պահպանության համար,

(g) վերաբերում են սպառվող բնական պաշարների օգտագործման դադարեցմանը, եթե այդպիսի միջոցներն իրականացվում են ներքին արտադրության կամ սպառման միաժամանակ սահմանափակմամբ,

(h) ընդունվում են ի կատարումն միջկառավարական ապրանքային համաձայնագրով ստանձնած պարտավորությունների, որը համապատասխանում է ԱՀԿ անդամների քննարկմանը ներկայացրած և նրանց կողմից չմերժված չափորոշիչներին, կամ որը ինքն է ներկայացվել ԱՀԿ անդամներին և չի մերժվել նրանց կողմից,

(i) կապված են հայրենական նյութերի արտահանման սահմանափակման հետ, որն անհրաժեշտ է հայրենական մշակող արդյունաբերությունն այդպիսի նյութերի բավարար քանակով ապահովման համար՝ այն ժամանակահատվածներում, երբ այդ նյութերի ներքին գինը պահպանվում է ավելի ցածր մակարդակի վրա, քան համաշխարհային գինը, որպես կառավարության կողմից իրականացվող կայունացման ծրագրի մի մաս, պայմանով, որ այդպիսի սահմանափակումները չեն նպաստում արտահանման ընդլայնմանը կամ այդ հայրենական արդյունաբերության պաշտպանությանը և չեն հակասում սույն Համաձայնագրի՝ խտրականությանը վերաբերող դրույթներին,

(j) էական են ընդհանուր առմամբ կամ որոշակի տարածաշրջանի համար պակասորդային ապրանքների ձեռքբերման կամ բաշխման համար, պայմանով, որ ցանկացած այդպիսի միջոցները համատեղելի են այն սկզբունքի հետ, որի համաձայն Կողմերն ունեն այդպիսի ապրանքների միջազգային մատակարարումներում իրենց արդարացի մասնաբաժինն ունենալու իրավունքը, և որ ցանկացած այդպիսի միջոցները, որոնք համատեղելի չեն սույն Համաձայնագրի մյուս դրույթների հետ, դադարեցվում են, հենց որ դադարում են գոյություն ունենալ դրանց կիրառման պատճառ հանդիսացած պայմանները:

Հոդված 15.9

Բացառություններ անվտանգության նկատառումներով

Ոչինչ սույն Համաձայնագրում չպետք է մեկնաբանվի

(a) որպես Կողմին ուղղված պահանջ ներկայացնել որևէ տեղեկատվություն, որի բացահայտումը նա համարում է իր անվտանգության էական շահերին հակասող, կամ

(b) Կողմի անվտանգության էական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ գործողությունների իրականացմանը խոչընդոտող,

(i) տրոհվող նյութերի նկատմամբ կամ այն նյութերի նկատմամբ, որոնցից դրանք պատրաստվում են,

(ii) զենքի, զինամթերքի և ռազմական նյութերի առևտրի, ինչպես նաև այլ ապրանքների և նյութերի առևտրի նկատմամբ, որն ուղղակի կամ անուղղակի կերպով իրականացվում է զինված ուժերի մատակարարման նպատակների համար,

(iii) կիրառվում են միջազգային հարաբերություններում պատերազմի ժամանակ կամ այլ արտակարգ իրավիճակներում,

(c) խոչընդոտ, որը թույլ չի տալիս Կողմին ձեռնարկել ցանկացած գործողություններ՝ ի կատարումն Միացյալ Ազգերի Կազմակերպության Կանոնադրությամբ ստանձնած իր պարտավորությունների՝ ամբողջ աշխարհում խաղաղության պահպանման և միջազգային անվտանգության համար:

Հոդված 15.10

Քացառություններ հասարակական ճգնաժամային ենթակառուցվածքի պաշտպանության համար

1. Ոչինչ սույն Համաձայնագրում չպետք է մեկնաբանվի որպես խոչընդոտ, որը թույլ չի տալիս Կողմին նախաձեռնել այնպիսի գործողություններ, որոնք նա համարում է անհրաժեշտ՝ փլուզելու կամ շարքից հանելու կանխամտածված փորձերից իր ճգնաժամային հասարակական ենթակառուցվածքը պաշտպանելու համար (դա վերաբերում է բնակչությանը ապրանքներ և ծառայություններ մատուցող հաղորդակցությունների, էներգետիկայի, տրանսպորտի և ջրամատակարարման ենթակառուցվածքին):
2. Կողմը չպետք է կիրառի 1-ին կետը որպես սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների կատարումից խուսափելու կանխամտածված կամ քողարկված միջոց:

Հոդված 15.11

Տեղեկատվության բացահայտումը

1. Ոչինչ սույն համաձայնագրում չպետք է մեկնաբանվի որպես Կողմին ներկայացվող գաղտնի տեղեկատվություն տրամադրելու պահանջ, որի բացահայտումը կարող էր խոչընդոտել իրավունքի կիրառմանը կամ այլ կերպ հակասեր հասարակական շահերին կամ վնաս հասցնե՞ր առանձին, պետական կամ մասնավոր, առևտրային ձեռնարկությունների շահերին:
2. Եթե սույն Համաձայնագրով այլ բան նախատեսված չէ, այն դեպքերում, երբ Կողմը տրամադրում է մյուս Կողմին սույն Համաձայնագրին համապատասխան տեղեկատվություն (կամ Համատեղ կոմիտեն, ենթակոմիտեններին, աշխատանքային խմբերին կամ ցանկացած այլ մարմիններին), որը նա սահմանում է որպես գաղտնի, այդպիսի տեղեկատվությունը ստացող Կողմը (կամ Համատեղ կոմիտեն, ենթակոմիտենները, աշխատանքային խմբերը կամ ցանկացած այլ մարմինները) պետք է պահպանի տեղեկատվության գաղտնիությունը, կիրառի այն միայն այն նպատակներով, որոնք սահմանել է տեղեկատվությունը տրամադրող Կողմը և չբացահայտի այն առանց տեղեկատվությունը տրամադրող Կողմի հատուկ գրավոր թույլատրության:

ԳԼՈՒԽ 16

ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 16.1

Փոփոխությունների կատարում

Կողմերը կարող են գրավոր համաձայնվել սույն Համաձայնագրում փոփոխությունների կատարման վերաբերյալ: Այդպիսի փոփոխություններն ուժի մեջ են մտնում Կողմերի միջև համաձայնեցված կարգով:

Հոդված 16.2

Համատեղ մեկնաբանություն

Կողմերը կարող են տալ սույն Համաձայնագրի դրույթների համատեղ գրավոր մեկնաբանություններ, որոնք պարտադիր են բոլոր Կողմերի, ինչպես նաև սույն Համաձայնագրին համապատասխան հիմնադրված բոլոր մարմինների և իրավամիջնորդաժային խմբերի համար:

Հոդված 16.3

Ուժի մեջ մտնելը

Սույն Համաձայնագիրը վավերացվում է ԵԱՏՄ անդամ պետությունների և Սինգապուրի Հանրապետության կողմից, և Միությունը հայտնում է սույն Համաձայնագրի պարտադիր լինելու վերաբերյալ իր համաձայնությունը: Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար Կողմերի համապատասխան ներքին բոլոր իրավական ընթացակարգերի կատարման մասին գրավոր ծանուցումների փոխանակման օրվան հաջորդող երկրորդ ամսվա առաջին օրը: Այդպիսի ծանուցումների փոխանակումն իրականացվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և Սինգապուրի Հանրապետության միջև:

Հոդված 16.4

Գործողության տևողությունը և դադարեցումը

1. Սույն Համաձայնագրի գործողությունն անժամկետ է:
2. ԵԱՏՄ կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը Սինգապուրի Հանրապետությանը գրավոր ծանուցելով, կամ Սինգապուրի Հանրապետությունը կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը ԵԱՏՄ-ին գրավոր ծանուցելու միջոցով: Սույն համաձայնագիրը դադարեցնում է իր գործողությունն այդպիսի ծանուցումը ստանալուց վեց (6) ամիս հետո:
3. Սույն համաձայնագիրը դադարեցնում է իր գործողությունը Եվրասիական տնտեսական միության անդամ ծանկացած այն պետություն համար, որը դուրս է գալիս Միության մասին Պայմանագրից՝ Միության մասին Պայմանագրից դուրս գալու օրից սկսած: Եվրասիական տնտեսական հանձնաժողովը տեղեկացնում է Սինգապուրի Հանրապետությանը այդպիսի ելքից 9 ամիս առաջ: Կողմերն անցկացնում են խորհրդատվություններ սույն Համաձայնագրի համար այդպիսի ելքի հետևանքները որոշելու համար:
4. Եթե ԵԱՏՄ անդամ պետությունը դուրս է գալիս, սույն Համաձայնագիրը

շարունակում է գործել ԵԱՏՄ անդամ մնացած պետությունների և Սինգապուրի համար:

Հոդված 16.5 Հավելվածներ, լրացումներ և արձանագրություններ

Սույն Համաձայնագրի հավելվածները, լրացումները և արձանագրությունները կազմում են նրա անբաժանելի մասը:

Հոդված 16.6 Միացում

1. Սույն Համաձայնագրին Միության նոր անդամ պետության միանալը հանդիսանում է Միության, նրա անդամ պետությունների, ներառյալ այդ նոր անդամ պետության, և Սինգապուրի միջև բանակցությունների առարկա: Նման միացումն իրականացվում է սույն Համաձայնագրի լրացուցիչ արձանագրության կնքման միջոցով:

2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովը անհապաղ տեղեկացնում է Սինգապուրին ցանկացած երրորդ պետության կողմից Միությանն անդամակցելու թեկնածուի կարգավիճակ ստանալու մասին, Միությանն անդամակցելու թեկնածու պետության հետ բանակցությունների արդյունքների և Եվրասիական տնտեսական միությունը ցանկացած անդամակցության մասին:

3. Միության և Միությանն անդամակցելու թեկնածու պետության միջև բանակցությունների ընթացքում Եվրասիական տնտեսական հանձնաժողովը ձգտում է.

a) Սինգապուրի հարցման դեպքում և հնարավորության սահմաններում տրամադրել սույն Համաձայնագրի գործողության ոլորտում ներառված հարցերին վերաբերող ցանկացած տեղեկատվություն, և

b) ուշադրության արժանացնել ցանկացած արտահայտված անհանգստությունը:

Սույն համաձայնագիրը կազմվել է անգլերեն:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, լինելով պատշաճ կերպով լիազորված, ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է Երևան քաղաքում, 2019 թվականի հոկտեմբերի 1-ին երկու բնօրինակից, անգլերեն լեզվով:

Հայաստանի Հանրապետության կողմից
Բելառուսի Հանրապետության կողմից
Ղազախստանի Հանրապետության կողմից
Ղրղզստանի Հանրապետության կողմից
Ռուսաստանի Դաշնության կողմից
Եվրասիական տնտեսական միության
կողմից

[Ստորագրության վերձանումը]
[Պաշտոն]

Սինգապուրի Հանրապետության
կողմից

[Ստորագրության վերձանումը]
[Պաշտոն]

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2019 թվականի հոկտեմբերի 1-ին ստորագրված «Եվրասիական տնտեսական միության և նրա անդամ պետությունների, մի կողմից, և Մինսկայորի Հանրապետության, մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**